



Քաղաքի

ՅՈՒՆԻԱՍ 83



ed by

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն




- 1.- Ն. ԶԱՐԽՈՒՏՆԱՆ Մէկ օր, մէկ գիշեր
- 12.- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Ժամադրութիւն
- 13.- » Նաւահանգիստի ծայրաւաւի աւազանը
- 14.- Մ. ԻՇԵԱՆ Մշակոյթի պահակներ
- 26.- Պ. ՀՆՐԵԱՆ Ծով իմ, հոգի...
- 27.- Յ. ՕՇԱԿԱՆ Սահակ Պարգեւեան
- 42.- Փ. ՃԵՐԱՆԵԱՆ Մատուռ...
» Զմրան գիշեր...
- 43.- Մ. ՀԱՃԵԱՆ Անփոխարինելի եւ յաւերժական է
բանաստեղծութիւնը ու չի հիմնար,
արդիականութիւնը հիմնական
նորութիւն չէ
- 46.- Մ. ԱՎԴԱԼԲԵԿԵԱՆ Եղիշէ Զարեմցը
եւ հայ հիմ գրականութիւնը
- 52.- Մ. Ս. ՀՆՐԿԵԼԵԱՆ Անահիտը
- 57.- ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ Նամակներ
- 67.- * * * Վրիպակներ եւ... վիպական բաներ
- 73.- * * * Մաքրաչրումներ'
«... Հիմ հռովմէական ճանապարհի վրայ»
- 78.- * * * «Սորճրդային Հայաստան»ը
Վ. Տոթովեցի մասին
- 79.- * * * Մշակութային լուրեր

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍԻ

ԻՐ. ԾԱՐԻ. ԻՐԻ 7 ԾՈՒԼԻՍ 1963 ԳԼԵԲՈՒԹ

Ն. Զ Ա Ր Ի Ո Ւ Տ Ե Ա Ն



ՄԵԿ ՕՐ, ՄԵԿ ԳԻՃԵՐ

Արամ մտեցաւ պատուհանին:
Թաւիշէ հաստ վարագոյրները իրար-
մէկ հեռացուց եւ Թափանցիկ շղարշին մէ-
ջէն տեսաւ պայծառ երկինք մը, ուր աստ-
ղերը տակաւին չէին գրաւած իրենց յա-
ւիտենական գիրքերը:

Արամ շատ կ'ախորժէր օրուան այս
պահէն, երբ մեռնող աղջամուղջէն կը ծը-
նէին հրաշալի եւ խորհրդաւոր աշխարհ-
ներ:

Վարագոյրի շղարշին ետեւէն կը լքու-
ւէր հսկայ քաղաքին ժխորը, որ երբեմն
կը մեղմանար հեռացող նուազախումբի
մը պէս ու մէկէն կը զօրանար՝ ընկերա-
նայու համար գիշերային կեանքի հեշտա-
արով վարկերուն:

Սենեակին մէջ խաւարը կը Թանձրա-
նար:

Մեքենարաց ձեռքը տարաւ ցած սե-
ղանին վրայ գետեղուած լուսամփոփի
կոճակին, բայց կարծէք ուրիշ ձեռք մը
աւելի արագ շարժած էր, եւ պողոտային
երկու մայրիկներուն վրայ շարուած սիւնե-
րու գազաթը հաստատուած լամպերը վա-
ռեցան մէկ անգամէն...

Պողոտան լաւն էր եւ անծայրածիր, և
Արամ իր պատուհանէն հազիւ կը տեսնէր
անոր մէկ մասը: Ինքնաշարժները, որոնք
գիրաց հալածելով օրն է բուն տոնացած
էին, հիմա իրենց փարոսներուն կիսա-
խուփ աչքերով իրարու կը հետեւէին՝ հը-
լու աշակերտներու պէս:

Արամ կը գտնուէր Մարտոնի պողոտային «Էքզիլիսիոն» պանդոկի թիւ 32 սենեակին մէջ: Երկու օր առաջ, այս մայրաքաղաքը ժամանելէ ետք, ուղղակի եկած էր այս պանդոկը, ուր իրեն համար այս սենեակը վերապահած էին: Ան տակաւին դուրս չէր ելած:

Այս էր վերին հրահանգը: Մնալ սենեակին մէջ եւ սպասել:

Արամ հետացաւ պատուհանէն ու դըլանիկ մը վառեց: Վարդապետին ճեղքէն թափանցող կաթնաթոր լոյսը կը մեղմուցընէր սենեակին մթութիւնը եւ Արամ շուրջը կը տեսնէր պանդոկի սենեակի մը ստար առարկաները, որոնց հետ տակաւին չէր կրցած ընտելանալ: Միակ առօրեկան, որ իրեն բան մը կ'ըսէր՝ պատին կոթնած փոքրիկ ճամպուռկն էր:

Արամ գլանիկին ծայրը ճղմեց մոխրամանին մէջ ու կրկին մօտեցաւ պատուհանին:

Պողոտային վրայ, Աէռնէ կլոր լոյսերը կը նմանէին մեռած շուշաններու, որոնց շուրջ աղմուտը կը հիւսէր երազային ու նօսր պատրանքներ:

Հրապարակին կողմէն, զանգակատուն մը եօթն անգամ հնչեցուց իր մետաղեայ ձայնը:

Ճիշդ այդ պահուն Արամ տեսաւ զայն: Կանպիսի ցուպի մը սրունին տակ, ան կը նայէր պողոտային ալ կողմը, մէկու մը պէս, որ ինքնաշարժ կը սպասէ: Հակառակ փողոցի լուսաւորութեան, Արամ չկրցաւ զանազանիլ անոր դիմադրածը, բայց իրեն այնպէս թուեցաւ, որ այդ մարդը անծանօթ մը ըլլալու չէր:

Մարդուն աչքերը յանկարծ ուղղուեցան իր պատուհանին:

Արամ բնազդաբար նետուեցաւ մէկ կողմ, վախնալով, որ ան կրնայ զինքը նշմարել, յետոյ, քիչ մը ծռելով՝ աչք մը նետեց դուրսը: Մարդը միշտ հոն էր՝ անշարժ, աչքերը միշտ ուղղած պատուհանին կողմը:

Արամի մարմինէն սարսուռ մը անցաւ եւ սիրտը սկսաւ տրոփել: Ի՞նչ կը զգար այդ պահուն՝ ուրախութի՞ւն, թէ վախ: Ինքն ալ չէր գիտեր:

Երկար նայելէ ետք պատուհանին կողմը, անծանօթը կը պատրաստուէր իջնել մայթէն վար, հաւանաբար փողոցը կտրելու համար, երբ յանկարծ անշարժացաւ: Պողոտային վարի կողմէն, ուրիշ մարդ մը դանդաղ քայլերով կու գար առաջին անծանօթին կեցած տեղը: Ան եւս խուզարկու աչքերով կը զննէր իր սենեակին պատուհանը:

Առաջին անծանօթը, երկրորդին մօտենալը տեսնելով, վերադարձին օձիքը վեր առաւ ու, ձեռքերը զրպանը շնորով՝ կամաց-կամաց հետացաւ ու կեցաւ ծառի մը քունին ետեւը:

Արամ ուշ ուշով կը հետեւէր երկու անծանօթներու շարժումներուն: Ասոնցմէ մէկը բարեկամ էր, միւսը՝ թշնամի. բայց ո՞ր մէկը՝ Երկրորդ ժամանողը չէր նշմարած, առաջինին ներկայութիւնը, այնպէս որ, ալ ու ձախ նայելէ ետք, ան շարունակեց իր ճամբան ու կորուսեցաւ պողոտային վերի կողմը:

Առաջին անծանօթը ատեն մը անյայտ մնաց եւ Արամ հասկցաւ, որ ան էր բարեկամը: Ան երեւցաւ իր նախկին տեղը, ճիշդ իր պատուհանին դէմը: Յանկարծ, ան նետուեցաւ ինքնաշարժներու շարքին մէջ, կտրեց պողոտան եւ ուղղուեցաւ պանդոկի մուտքին:

Արամ մօտեցաւ դրան: Ականջները լարած՝ ան կը հետեւէր իր կողմը մօտեցող հաղիւ լսելի ոտնաճայններուն:

Մակայն դրան զանգը չհնչեց, հակառակ անոր, որ Արամ կը զգար անծանօթին ներկայութիւնը իր դրան ճիշդ հոտելը:

Քիչ մըն ալ սպասեց եւ վտակ սենեակին լոյսը:

Ոտքերուն քով, դրան վարի ճեղքէն, պահարան մը հրուած էր ներս: Արամ առաւ պահարանը ու վազեց պատուհանին կողմը, այն յոյսով, որ կրկին կը տեսնէ անծանօթը: Բայց բացի սովորական անցորդներէն, Արամ չնշմարեց ո՛չ առաջին եւ ոչ ալ երկրորդ անծանօթը:

Պահարանը ճերմակ էր եւ փոքրածաւալ: Աջ կողմի անկիւնը կային երկու գլուխազիրներ, կէտով մը իրարմէ բաժնը-

ւած: Այդ գլխադիրները իր անունին եւ մականունին առաջին տառերը ըլլալու էին:

Պահարանը բացաւ զգուշութեամբ եւ մէջէն հանեց երկուքի ծալուած թղթիկ մը, որուն վրայ մեքենագրուած էին հետեւեալ տողերը:

ԱՅՍ ԳԻՇՈՐ, ԺԱՄԸ 11ԻՆ, ԿԸ ՍՊԱՍԵՍ ԱՋԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՕԹՈՊԻԻՄԵՐՈՒ ԿԱՅԱՐԱՆԸ: ՍԵՒ ՀԱԳՈՒՍՏՈՎ, ճերմակ գօտիով եւ ճերմակ պաշուսակով օրհորդ մը պիտի գտնուի հաս: Երբ ամ օթապիւս բարձրամայ, կը հետեւիս իրեն եւ կ'իջնես ԻՋԱՄ ՏՅՂԸ...

Արամ լոյսը բռնեց թուղթին առջեւ, տեսնելու համար, թէ ծածկազեր բան մը չէր արձանագրուած, անոր վրայ... Ինք կը սպասէր աւելի յտակ եւ աւելի մանրամասն հրահանգներու, բայց եղածը պարզ ժամադրութիւն մըն էր անծանօթ օրհորդի մը հետ: Զինուած թէ անգէն՝ պէտք էր երթալ այդ ժամադրութեան:

Անգամ մը եւս ուշի ուշով կարդաց երկտողը, յետոյ զայն բզիկ-բզիկ ըրաւ ու զբաւ զբայանը:

Բաւական ժամանակ ունէր իր առջեւ: Մարեց լոյսը ու երկնցաւ մահաճակատին վրայ:

Ժամը 10.30ին, ելաւ տնեակէն, բանալին զբաւ զբայանը, որպէսզի ընդունելութեան պաշտօնեան շնորհէ իր մեկնումը: Պանդուկին ընդունելութեան սրահը խնդրուած էր, որովհետեւ գրասարկիչներու խումբ մը նոր ժամանած էր օդակայանէն:

Ազատութեան հրապարակը կը դտնուէր պողոտան խայածեւոզ փողոցի մը վերջաւորութեան: Երբ Արամ հասաւ օթուպիւսի կայանը, ժամը 11ին քառորդ կար եւ օթուպիւս մը, հոն սպասող ճամբորդները առնելով, արդէն ճամբայ ելած էր: Իւրաքանչիւր հինգ վայրկեան օթուպիւս մը կը կենար կայանին առջեւ ու կը մեկնէր:

Ժամը 11ին երկու վայրկեան մնացած՝ մանկամարդուհի մը յայտնուեցաւ միւս մայթին վրայ եւ արագ քայլերով կտրեց փողոցը: Մանկամարդուհին կանգ

առաւ իրմէ քանի մը քայլ անդին, ճիշդ օթուպիւսներու մուտքի դրան բարձրութեան:

Մանկամարդուհին հագած էր սեւ շրջագոյտ եւ կը կրէր ճերմակ դօտի եւ ճերմակ պայուսակ:

Երբ օթուպիւսը կանգ առաւ կայանին առջեւ, արդէն հոն հաւաքուած էին տասնեակ մը ճամբորդներ:

Առաջին բարձրացողը եղաւ սեւ հագած մանկամարդուհին: Արամ շուզեց անմիջապէս հետեւիլ անոր եւ ճամբայ տուաւ ուրիշ երկու տիկիներու, որոնք իրմէ ետք կու գային:

Մանկամարդուհին տեղ առած էր առջեւի նստարաններէն մէկուն վրայ եւ հակառակ անոր, որ օրհորդին կից պարսպ տեղ մը կար, Արամ նստաւ քանի մը շաբթ անդին:

Ամէն անգամ, որ օթուպիւսը կանգ կ'առնէր, Արամ կը հետեւէր մանկամարդուհիին շարժումներուն, որպէսզի իջնէ անոր իջած տեղը:

Օթուպիւսը անցաւ մարդաշատ փողոցներէ, լուսայրդ հրապարակներէ եւ ուղղուեցաւ դէպի ծայրամասային թաղերը եւ արուարձանները:

Մանկամարդուհին ու վերջին ճամբորդները իջան աննշան փողոցի մը կայանը, որ վերջինը կամ վերջինները ըլլալու էր:

Վայրը ամայի էր ու կիսամութ, իսկ տունները համեստ էին ու կորսուած ծառերու մէջ:

Մանկամարդուհին, որ կը քայլէր արագ, զանգաղեցուց իր քայլերը, որպէսզի Արամ հասնի իրեն: Ու երբ անոնք քով քովի եղան, մանկամարդուհին զժգոհ ձայնով մը ըսաւ.

— Պարո՛ն, ինձմէ ի՞նչ կ'ուզէք: Ինչո՞ւ զիս կը հետապնդէք Ազատութեան հրապարակէն ի վեր:

— Որովհետեւ դուք երիտասարդ էք ու զնդեցիկ եւ զիս պիտի առաջնորդէք հո՛ն՝ ուր կ'ուզեմ երթալ:

— Ի՞նչ է ձեր անունը:

— Բարեկամներուս համար՝ Արամ

Արամեան, իսկ թշնամիներու համար՝ Նեմեսիս 15:

— Ես Նեմեսիս 11ն եմ եւ կը կոչուիմ Վրէժուհի Լեւոնեան: Այսուհետեւ դուն ու ես միասին պիտի գործենք:

Վրէժուհի կանգնած էր փողոցի ցուակներէն մէկուն տակ եւ Արամ յափըռտակուեցաւ անոր դէմքին գեղեցկութեանէն եւ թարժութենէն: Արամ շարժուեցաւ արագ արտայայտութիւնը:

— Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ դուք կը կըրէք իմ թիւն շատ աւելի ցած թիւ մը, հակառակ անոր, որ ինձմէ շատ աւելի երիտասարդ էք:

— Որովհետեւ ես Նեմեսիսին անգամազրուեցայ, երբ 17 տարեկան էի եւ հիմա 19 տարեկան եմ:

— Իսկ ես անգամազրուեցայ տարի մը առաջ եւ հիմա 23 տարեկան եմ...

— Քալենք, — ըսաւ Վրէժուհի, — մեր ժամադրութիւնը տասնըմէկուկէսին է: Պէտք չէ, որ մեզի երկար սպասեն:

Տունը, որուն առջեւ կանգ առին, համեստ էր եւ ունէր պզտիկ պարտէզ մը: Պատուհաններուն մէկէն կը տեսնուէր թիւթու լոյս մը, հակառակ անոր, որ վառ-դակտիեղկերը դոց էին:

Դուռը զարնելէ ետք, Վրէժուհի տըլաւ իր թիւնը, որպէսզի ներսէն իմանան իր ինքնութիւնը:

Դրան փեղկը բացուեցաւ, բայց ոչ ոք երեւցաւ:

Վրէժուհի դոցեց դուռը եւ քալեց դէպի նրբանցքին ծայրը գտնուող դուռը:

Սենեակը կահաւորուած էր շատ նախնական ձեւով: Մէջտեղը կային խոշոր սեղան մը եւ քանի մը աթոռներ: Պատին կռթնած էր ապակեպատ զրադարան մը: Սեղանին ճիշդ վերը, առաստաղէն կախուած լուսամտովը իր ամբողջ լոյսը կը կեդրոնացնէր սեղանին վրայ, մութին մէջ ձգելով սենեակին մնացեալ մասը:

Վրէժուհի եւ Արամ տեղ առին զովքովի, սեղանին առջեւ, ույնպէս որ իրենց դուռները կը գտնուէին լոյսին շրջազդեղէն ներս: Շատ չանցած՝ զրադարանին զովի պզտիկ դուռը բացուեցաւ եւ մարդկային կերպարանք մը ներս մտաւ:

ու տեղ առաւ երկու երիտասարդներուն դիմացը, բայց սեղանէն զեւ մը հեռու:

Նորեկը զրպանէն հանեց երկու պահարան եւ հրեց երիտասարդներուն առջեւ: Վրէժուհիին ստացած պահարանին անկիւնը դրուած էր Նեմեսիս թիւ 11, իսկ Արամին պահարանին անկիւնը՝ Նեմեսիս թիւ 15:

— Այս պահարանները կը բովանդակեն մանրամասն հրահանգներ, որոնց պէտք է հետեւիք կէտ առ կէտ: Հոն պիտի գտնէք գործողութեան թուակներ, ճշգրիտ ժամը եւ ճշգրիտ վայրը: Ձեր փախուստին միջոցները արդէն ապահովուած են, բայց անիկա երկրորդական է: Այս նամակներուն պարունակութիւնը բազմաթիւ անգամ կարդացէք, զոց ոտը վեցէք, յետոյ փնտրուցէք: Եթէ նկատէք, որ մեզի համար անորոշ կէտ մը կայ, թիւ 11ը թող կապ պահէ ինձի հետ: Ան դիտէ հեռաձայնիս թիւը:

Վրէժուհի պահարանը առաւ եւ առանց բանալու դրաւ պայուսակին մէջ: Արամ, պահարանը գննելէ ետք, զայն դրաւ զրպանին մէջ: Երբ գլուխը վերցուց, մարդը արդէն անհետացած էր:

* *

Հրահանգը գործադրուած էր կէտ առ կէտ:

Վրէժուհի եւ ինք իջած էին ինքնաշարժէն, լայն փողոցի մը անկիւնը:

— Ես կարելի արագութեամբ կը դառնամ այս շէնքերուն շուրջը եւ կը դանդաղիմ դեպքանատան առջեւէն անցնելու ատեն, որպէսզի կարենաք առանց դժուարութեան բարձրանալ ինքնաշարժ, — բռնած էր երիտասարդ վարորդը, որ իրենց ներկայացած էր իբր Նեմեսիս թիւ 12:

Արամ բռնած էր գեսպանատան առջեւէն անցնող մայթը, իսկ Վրէժուհի անցած էր միւս մայթին վրայ, ուր կային փարթեմ վաճառատուներ, որոնց ցուցափեղկերը փորձիչ տեսարան մը կը հանդիսանային իրեն պէս երիտասարդ ու վայելուչ աղջկան մը համար: Սակայն

Վրէժուհիին ձեռքի ճերմակ պայուսակը պէտք եղածէն շատ աւելի ծանր էր, ո՛չ թէ որովհետեւ անոր մէջ կային անուշահոտի սրուակներ, կամ շպարի զանազան տիփկներ, այլ՝ միջակ մեծութեամբ ատրրճանակ մը:

Արամ, իր դրծը կատարելէ ետք, պիտի անցնէր Վրէժուհիին գտնուած մայր թին վրայ՝ անոր պաշտպանութեան տակ գտնուելու համար: Փողոցը մէկ ուղղութիւն ունենալով, փրկարար ինքնաշարժը կրնար կարճ ժամանակ մը կանգ առնել ձախ կողմը գտնուող այդ մայրին առջեւ:

Հակառակ անոր, որ ասիկա իր առաջին առաքելութիւնն էր, Արամ չկորսնցուցուց իր պաշարիւնութիւնը: Ան կը ճեմէր հանդարտ քայլերով, երկու ձեռքերը գրպաններուն մէջ: Ատրճանակին ձայնարգելը, թէեւ սովորականէն կարճ, սակայն իրեն կը ստիպէր, որ անոր կոթը պահէ բաճկոնին թեղանիքին մէջ:

Ան պէտք չունեցաւ երկար սպասելու: Հասած էր փողոցին ծայրը եւ կը վերադառնար իր քայլերուն վրայ, երբ դեւանադիտական մարմնի յատուկ թիւ կըրող սեւ ու փարթած ինքնաշարժը կանդառաւ դեպքանատան մուտքին առջեւ, իրմէ հաղիւ քսան մեթր առաջ:

Արամ ցնցում մը ունեցաւ, որովհետեւ դեպքանը կը ժամանէր անակնկալ մէկ պահուն: Ան չնկատեց նաեւ, որ ուրիշ երկու ինքնաշարժներ կը հետեւէին դեպքանին, եւ այդ ինքնաշարժներէն մէկը, դեպքանին ինքնաշարժը անցնելով՝ եկաւ ու կանգնեցաւ իրմէ քանի մը քայլ անդին:

Համազգեստաւոր վարորդը վար իջաւ, բացաւ հետեւի դուռը: Դեպքանը միջահասակ եւ բարեձեւ անձ մըն էր: Արամ զայն կը տեսնէր կողմնակի: Ետեւի ինքնաշարժէն քանի մը հոգի արդէն վար իջած էին: Անոնք երիտասարդ կամ միջին տարիքով յաղթանդամ մարդիկ էին: Միւս ինքնաշարժէն եւս իջած էին նոյն թիւով երիտասարդ եւ յաղթանդամ մարդիկ: Սակայն Արամ չնշմարեց զանոնք, որով-

հետեւ իր ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացած էր դեպքանին վրայ...

— Անտղիմ փամփուշտը գլխում, միւսները կուրծքիմ, կուրծքիմ ձախ կողմը, սրտիմ», գրուած էր հրահանգին մէջ: Արամ երկու փամփուշտ արձակեց դեպքանին դիմուն, իսկ մնացեալ փամփուշտները պարպեց կուրծքին...

Թիկնապահները ձեռքերը տարին իրենց բաճկոնին ներսի գրպանը, Արամ մէկ կողմ նետեց իր տարճանակը եւ կը պատրաստուէր կտրելու ինքնաշարժներու խիտ ու դանդաղ շարքերը եւ անոնց մէջէն հասնելու դիմացի մայթը, ուր կը սպասէր իր պահապան հրեշտակը:

Յանկարծ երկու հոսեկու բազուկներ փաթթուեցան Արամին, որ ցնցուեցաւ, փորձեց սահիլ զինք անշարժացնող օդակէն դուրս: Երկու համազգեստաւոր ստիկաններ տնկուեցան իր դէմը: Եւ ամէն կողմէ վազելով՝ մարդիկ շրջապատեցին զինք:



Այսօր պատերը լուռ են եւ խուլ: Դուրսի ձայները կը կորսուին քարերու ծակտիկներուն մէջ: Կեանքի կոհակները կը բախին անտեսանելի խութերու: Մարդուն մեծագոյն գիւտը եղած է քարայրներու երեք կողմերուն ակնցնել շորորդ մը, զանոնք անջատելու համար ազատ աշխարհէն: Առաստաղ մը, չորս պատ եւ դուռ մը, որ կը կղզուի դուրսէն: Այսպէս են տուներու սենեակները, շոգեկառքերու բաժնեակները, շոգեխաւերու խցիկները եւ բանտերու խուցերը:

Այս խուցը իմ աշխարհս պիտի ըլլայ երկար ժամանակի մը համար, որովհետեւ այստեղէն դուրս զայլ իմ ձեռքս չէ եւ խուցիս կղզանքն ու բանալին կը գըտնուին դրան միւս կողմը:

Երբ ոտիկանները զիս ձերբակալելէ ետք, հրեցին ինքնաշարժի մը մէջ, աչք մը նետեցի միւս մայրին վրայ: Վրէժուհիին կանգնած էր վաճառատան ցուցափեղկին առջեւ եւ կը նայէր իմ կողմս: Կեցւածքը վճռական էր եւ պատրաստ էր մի-

ջամտելու, բայց փողոցին ամբողջ լայնքը, ինքնաշարժներու խճողումը եւ զիս չբնապատող ամբոխն ու սաստիկանները մեզ կը բաժնէին իրարմէ։

Ճամբայ ելլելէ առաջ, ինքնաշարժը հնչեցուց իր ահազանդը անցք պահանջելու համար եւ վրէժուհիին սիւուէթը կազմ-կամաց կորսուեցաւ ինքնաշարժներու եւ մարդոց խճողումին մէջ։

Սաստիկանապետը զիս ընդունեց առանձին, իր գրասենեակին մէջ։ Ներկայացուց երկայն հարցարան մը։ Կարգ մը հարցումներուն տուի ճշգրիտ պատասխան։ Իսկ անոնց, որ չէի ուզեր ճշգրիտ պատասխան մը տալ, չհասկնալ ձեւացուցի։

Երբ հարցարանը իրեն յանձնելու կը պտտրաստուէի, հնչեց հեռաձայնին զանգը։ Սաստիկանապետը կ'ուսկնդրէր երկար եւ կու տար կարճ պատասխաններ, հասարակար խոսակցութեան նիւթը ինձմէ պահելու համար։

Երբ հեռաձայնին ընկալուչը տեղը դրաւ, դէմքը խժժոռած էր։ Անկէ ետք ինձի հետ աւելի խիստ վարուեցաւ։ Այն ատեն կուշակեցի, որ դեպքանը մեռած էր։

Մինչեւ յաջորդ առտու արդելափակած մնացի սաստիկանատան վանդակապատ խուցերէն մէկուն մէջ։ Ժամը տասին զիս տարին Արդարութեան պալատը՝ ներկայացնելու համար հարցաքննիչ դատարին։

Արդարութեան պալատին սեմէն ներս հաղուր ոտք դրած՝ սաստիկան մը հանեց ձեռնակապերս՝ յարդիւու համար օրէնքը։ Արդարութեան քուրմերուն առջեւ պէտք է ներկայանալ անկաշկանդ ձեռքերով եւ ո՛չ թէ իբր կալանաւոր։

Հարցաքննիչ դատարը ակնոցաւոր ու վայելուչ երիտասարդ մըն էր։ Սակայն ան մտազբաղ ու նոյնիսկ մտահոգ կ'երեւէր։ «Հաւանաբար, մտածեցի, գործի դալէ առաջ, ան վէճ մը ունեցած է իր երիտասարդ կենդ հետ, որ պահանջկոտ ու զեղեցիկ ըլլալու էր»։

Ան իր պաշտօնը կատարեց քաղաքավար եւ նոյնիսկ բարեացակամ կերպով,

բայց չկրցանք զիրար հասկնալ, որովհետեւ անոր միտքը ուրիշ տեղ էր, ուրիշ հոգի ունէր։

Սկզբնական մանրամասնութիւններէն եւ ձեւակերպութիւններէն ետք, ան անցաւ բուն նիւթին։ Դատարները շատ զարգացած, հեղահամբոյր, իմաստուն մարդիկ կ'ըլլան ընդհանրապէս։ Անոնք կ'ըլլան ընտանիքի տիպար հայրեր, հոգածու ամուսին, անհասարակ թարեկամ, սակայն երբ տեղ առնեն իրենց աթոռին վրայ եւ հազնին իրենց համադրեալը՝ կը դառնան անտանելի, կասկածամիտ եւ բծախնդիր մարդիկ։ Անոնք ճիշդ կը թափեն ո՛չ միայն ամբաստանեալին ուսերուն վրայ բեռցնելու աշխարհի բոլոր ոճիւրները, այլեւ կ'աշխատին անոր կապել մեղսակիցներու անթիւ եւ անհամար շարք մը։

— Հիմա ինձի չես կրնար հաւատացնել, որ մեղսակից չունէիք եւ անդամ չես կազմակերպութեան մը, — ըսաւ հարցաքննիչ դատարը, աչքերուս մէջ նայելով։

— Այո՛, ունիմ մեղսակիցներու անթիւ եւ անհամար շարք մը, որ Հայ Ժողովուրդն է եւ կը պատկանիմ կուսակցութեան մը, որ կը կոչուի Հայքիւն։

— Ասիկա պատասխան մը չէ, այլ՝ յայտարարութիւն մը։ Մարդիկ քեզ շարաթ մը առաջ տեսած են երիտասարդ օրիորդի մը հետ, Թատրոնի մը առջեւ։

— Այդ մարդիկը կը ստեն կամ գոյութիւն չունին, որովհետեւ անցազրիտ վրայ կայ պաշտօնական կնիք մը, որ կը հաստատէ այս երկրէն ներս մուտքիս թուականը։ Եւ այդ թուականը կ'ըսէ, թէ ես այս երկիրը մտած եմ երկու օր առաջ։ Ես այս քաղաքին մէջ մարդ չեմ ճանչնար։

— Այդ կը ստուգենք հետագային, երբ ատեան կանչուին ականատես վկաները։

— Ի՞նչ կ'ուզէք փաստել, պարոն դատար։

— Կ'ուզեմ փաստել, որ զուգ մեղսակիցներ ունեցած էք, մասնաւորաբար երիտասարդ օրիորդ մը։ Ձեր դատապար-

տեղի արարքէն օր մը առաջ, գիշերով, թիւ 6 գիծի օթոպիւսներէն մէկուն վարորդը եւ գանձիչը ձեռք տեսած են Ազատութեան Հրապարակի կայանին առջեւ, Հոն նշմարած են նաեւ սեւ շրջազետտով, ճերմակ դօտիով եւ ճերմակ պայուսակով օրիորդ մը, Նլած էք նոյն օթոպիւսին մէջ եւ իջած էք նոյն կայանը, թէեւ օթոպիւսին մէջ նստած էք իրարմէ հեռու եւ խօսք չէք փոխանակած...

— Եթէ այդպէս է, Հոս բերէք այդ օրիորդը, որպէսզի վկայէ...

— Այդ մեր պիտանալիքն է, — պոռաց յանկարծ Հարցաքննիչը: — Արդէն անոր հասցէին ստորագրած եմ զբառնեմակո ներկայանալու հրամանագիր մը: Քանի մը օրէն Հոս կ'ըլլայ...

Հասկցայ, որ Վրէժուհի արդէն անհետացած էր Հրապարակէն եւ Հաւանաբար վերադարձած էր իր երկիրը...

— Հիմա ըսէք, թէ ինչո՞ւ սպանեցիք այդ դեպքանը: Ինչ էր ձեր արարքին պատճառը: Զայն երբէն ի վեր կը ճանչնայիք: Ըսէ՛ք ձեր ոճիւրին զրդապատճառները...

— Իրաւունք չունիք զիս ոճրագործ որակելու, նախ որովհետեւ տակաւին վերջին չէ արձակուած իմ դէմս, եւ երկրորդ գործածեալ ոճիւր մը չէ եւ ես ալ ոճրագործ չեմ...

— Այսինքն՝ ըսել կ'ուզէք, որ դուք չէիք դեպքանին վրայ կրակողը եւ զայն սպաննողը: Այդպիսի կեցուածք մը կ'ըլլանայ ծանրացնել ձեր վիճակը: Ինչ պիտի ըսէք, երբ տասնեակներով ականատես վկաներ երդումի տակ հաստատեն ձեր յանցանքը:

— Ես բողոքեցի ձեր դործածած ոճիւր բառին դէմ, բայց չըսի, որ ես չէի դեպքանը սպաննողը: Ես Արամ Գ... իմ ձեռքով սպաննեցի դեպքանը երկրի մը, որ անպատմելի շարիք դործած է իմ ազգիս: Մեզմէ խլած է ամէն բան՝ կեանք, ինչք, պատիւ, սրբութիւն, դարբերու ժառանգութիւն եւ մշակոյթ, եւ աշխարհի բեմերէն կ'ուրանայ իր ոճիւրները, կը խեղաթիւրէ իրականութիւնը եւ կը շարունա-

կէ մեզ հալածել մինչեւ մեր աքտորավայրերը:

— Ուրեմն, ձեր արարքին զրդապատճառը վրէժխնդրութիւն է:

— Ա՛յ, պարոն դատաւոր, վրէժխնդրութիւն կը նշանակէ՝ «Այն ընդ ազգիս եւ ատամն ընդ ատամն»:

— Եթէ վրէժխնդրութիւն չէ, այն ատեն ատելութիւն է...

— Ա՛յ, պարոն դատաւոր, ատելութիւն ալ չէ: Մարդ կրնայ ատել մէկը, զոր կը ճանչնայ, մէկը, որ ուզակի շարիք դործած է իրեն: Ես այդ դեպքանը չէի ճանչնար, այդ դեպքանը ինծի ուղղակի շարիք չէ դործած: Այդ դեպքանը կրնար բարի անձ մը ըլլալ եւ տարբեր պայմաններու մէջ, հաւանաբար ըլլար իմ մէկ լաւ բարեկամս...

Հարցաքննիչ դատաւորը մտիկ կ'ընէր ուշի ուշով, բայց կը զգայի, որ զիս չէր հասկնար: Մենք կը գտնուէինք տարբեր մակարդակներու վրայ:

Կը պատրաստուէր շարունակել իր հարցումները, երբ հնչեց սեղանին վրայ գտնուող հեռաձայնը: Թօսակցութիւնը շատ կրկար շտեպ: Ան ջղայնութեամբ ընկալուելը դրաւ տեղը: Տրամադրութեանը ակնք վատթարացած էր: Աչքերուն մէջ կարողացի խորունկ տրամուծիւն մը... Մեր նախուածքները իրարու հանդիպեցան եւ հասկցայ, որ ան ալ ունէր իր դահիճը, որ հաւանաբար իր կիներ էր:

Քանի՞ ամբաստանեալներ ծանր պատիժներու կամ մահուան դատապարտուած են, որովհետեւ ատեան գալէ առաջ, դատաւորները վէճ ունեցած են իրենց կողակիցին կամ գաւակներէն մէկուն հետ: Մակայն իմ Հարցաքննիչ դատաւորս այդ անսակէն չէր: Ան խղճամիտ էր ու վերապաշտ:

— Այս հարցաքննութիւնը կը շարունակենք ուրիշ օր մը: Ինծի կրկնեցէք վերջին հարցումիս պատասխանը, որպէսզի արձանագրեմ:

Եւ երիտասարդ Հարցաքննիչ դատաւորը արձանագրեց իր վերջին հարցումին տրուած պատասխանս, եւ քովը արձանագրեց իր տպաւորութիւնը:

«Բնորդ տունայնորդ կը փաստեն, զր Արամ Պ... իր արարքը գործած է տառն-
ձիծ, առանց ռեւէ մէկուն օժանդակու-
թեան եւ մեղակցութեան»:

Հրաշալի հարցաքննիչ դատաւոր, ան գրիչի մէկ հարուածով Վրէժուհին եւ Նեմեսիսը փրկած էր դատական հետա-
պնդումներէ:

Եւ մարդիկ կը պնդեն, որ համակրե-
լի հարցաքննիչներ եւ դատաւորներ դո-
յութիւն չունին...

.. Ատեանի վերջին նիստին, սրահին մէջ առեղ նետելիք տեղ չկար: Ամբաս-
տանոց կողմը վարձած էր լաւազոյն փա-
տարանները եւ դրամ չէր խնայած՝ զիս
դատապարտել տալու համար: Սակայն
իմ փաստարանս հասկցած էր անոնց ար-
կար կէտը: Անոնք ճիշդ կը թափէին հար-
ցը սահմանափակելու համար քրէական
յանցանքի ծիրին մէջ:

Ընդհանուր դատարանը ի պաշտօնէ
կը բաժնէր ամբաստանող կողմին տեսա-
կէտը, բայց կը գգայի, որ իր կուտակած
փաստարկութիւնները արուեստական էին
եւ նոյնիսկ չէին համոզած զինքը: Ան եր-
կար չխօսեցաւ եւ իր ամբաստանաճառը
աւարտեց հետեւեալ խօսքերով.

— Ահաւասիկ երիտասարդ մը, ուս-
եալ եւ լաւ ընտանիքի զաւակ, որ կը լքէ
ամէն բան, ընտանիք, բարեկամ, ուսում
եւ կու դալ այս երկիրը մէկ նպատակով
միայն, սպաննել, սպաննել արժէքաւոր
դիւանագէտ մը, ընտանիքի տէր եւ զա-
ւակներու հայր, տարիներ առաջ եւ ու-
րիշներու կողմէ գործուած անարդարու-
թիւն մը սրբազրեւու համար: Ան զին-
ւած կու դալ այս երկիրը, կ'ուսումնասի-
րէ վայրերը, կը սպասէ դարմանակալ, կը
կրակէ իր զոհին վրայ բազմաթիւ ան-
դամ, հարկաւ զայն սպաննելու նպատա-
կով: Օրէնքի յեղուով ասիկա կը նշանա-
կէ մարդասպանութիւն: Մարդասպանու-
թիւնը ոճիքներէն մեծագոյնն է. ուստի՝
կը պահանջեմ, որ անոր դէմ արձակուի
վճիռներուն ծանրագոյնը, այս պարագա-
յին՝ ցկեանս բանտարկութիւն:

Ընդհանուր դատարանին այս խտու-
թիւնը գործացուց բոլոր ներկաները՝

նախագահէն մինչեւ վերջին հանդիսատե-
սը, մահաւանդ՝ որ պաշտպան փաստա-
բանս հոյակապ կերպով ներկայացուցած
էր հարցը:

Ծանր լուսթիւն մը ճնշեց սրահին վը-
րայ: Անտարբերներն իսկ ցնցուեցան՝ լը-
սելով ընդհանուր դատարանին այս ծայ-
րայեղ խտուսթիւնը:

Նախագահը թեթեւօրէն հազաց, այժ
մը պտըտցուց սրահին վրայ, նայեցաւ
երդուեալներուն եւ իր օգնականներուն
կողմը, յետոյ դէմքը դարձուց իմ կողմս
եւ ըսաւ.

— Ամբաստանեալ, ըսելիք մը ու-
նի՞ր:

Ըսելիք ունէի հարկաւ: Ըսելիք ու-
նէի ներկաներուն, դատակառ տեսանիւն
եւ, մահաւանդ՝ երդուեալներուն, որոնց
արտադրութիւնէն կախում ունէր իմ ճա-
կատագիրս: Երդուեալները պարզ քաղա-
քացիներ են, յաճախ ընտանիքի հայր եւ
մայր եւ ընդհանրապէս լաւ տրամադըր-
ւած կ'ըլլան ինձի պէս երիտասարդներուն
հանդէպ, սակայն կը սարսափին աւարկե-
լութիւն բռնէն...

— Պարոն նախագահ, յարգելի եր-
դուեալներ, — ըսի որքի ելլելով, — ձե-
զի համար ի՞նչ կը ներկայացնեմ: Ո՞վ է
Արամ Պ... , անհայրենի՞ք մը, առանց
ինքնութեան եւ առանց արմատի երիտա-
սարդ մը, անդաւանանք եւ անօրէն ար-
կածախնդի՞ր մը, որուն միակ նպատակն
է կոխել իր ատրճանակին բլթակին վը-
րայ՝ սպաննելու համար դիւանագէտ մը
եւ խուճապ սփռելու համար ձեր քաղաք-
ներուն մէջ եւ ձեր հրապարակներուն վը-
րայ...

«Ո՛չ, պարոն նախագահ, ես ո՛չ մէկն
եմ եւ ոչ ալ միւսը, որովհետեւ կ'ատեմ
բրտութիւնը, կ'ատեմ պատերազմը, կ'ա-
տեմ ջարդերը եւ անարդարութիւնները:
Ես ունիմ իմ ինքնութիւնս, ես ունիմ իմ
տրմատներս, խորունկ եւ յաւերժական:
Ես խաղաղասէր եւ բարի ազգի մը զա-
ւակն եմ եւ իմ արմատներս նոյնացած են
իմ հայրերուս սուրբ ու դարաւոր հողին:

«Հաւանաբար զարմանաք, եթէ ձեզի
ըսեմ, որ իմ խուցիտ մէջ անջուռն գիշեր-

ներ անցուցի՝ խորհելով իմ սպանած մարդուս կնոջ և զաւակներուն, այդ արիւնքի և այդ որբերուն մասին: Յորհեցայ անոնց մասին և լացի, լացի երկա՛ր, լացի ժամե՛ր...

«Ո՛հ է մէկուն չէ արտօնուած խել մարդկային կեանք մը, որ արարչութեան ամէնէն թանկագին և ամէնէն նուիրական բանն է: Ես խլեցի մարդկային կեանք մը և լացի...»

«Բայց, պարոն նախագահ, ո՞վ լացաւ մեր հարիւր հազարուոր անմեղ ծնունդներուն վրայ: Ո՛չ ոք: Ո՛վ քաղաքակրթ և զբիտոնեայ աշխարհը, ո՛չ երբորդ Աշխարհը և ո՛չ ալ Չորրորդ Աշխարհը: Պարոն նախագահ, ո՞վ լսեց մեր անմեղ քոյրերուն և բարի մայրերուն ճիշերը և աղաղակները: Ո՛չ ոք, բացի Իրենց դահլիճներէն, այսինքն՝ իմ սպանած դեսպանին հայրենակիցներէն: Անոնք լսեցին և շամշցան, անոնք լսեցին և չապին, բայց ևս լացի իմ զոհիս այրիին և զաւակներուն համար...»

«Հաւանաբար տեղեկացաք մեր ազգին զժողով, արիւնալի և լուսաւոր պատմութեան, տեղեկացաք մա՛նաւանդ 1915ի Ապրիլին սկսած ահաւոր սպանդին, որ թէ՛ և առաջինը չէր, բայց եղաւ վերջինը, որովհետեւ այլեւս սպանուելիք հայ չէր մնացած: Մեր դահլիճները յաջողած էին իրազորած վերջնական լուծումը, կամ Իրենց այդպէս կը կարծէին: Անկէ ետք ուրիշ ժողովուրդներ ալ ենթարկուեցան վերջնական լուծումի, հո՛ս, Եւրոպայի մէջ: Պարոն նախագահ, յարգելի երգչուհուներ, ձեզմէ շատեր հաւանաբար ասորեցան այդ ճղնաթամային շրջանը...»

«Մեր դահլիճները չլացին իրենց հարիւր հազարաւոր անմեղ զոհերուն վրայ, որոնք թիկնապահներով և ոստիկաններով շրջապատուած դեսպաններ չէին, այլ՝ անպաշտպան ծերեր, երեքացող կիներ, կմախացած մանուկներ և կաթին տեղ իրենց մօր երակներուն արիւնով կերակրուող մանուկներ: Չեմ խօսիլ այդ նորածիններու մասին, որոնք հանուեցան իրենց մօր արգանդէն և շարտուեցան

ժայռերու վրայ կամ շամփուրուեցան սրահներով:

«Մենք հպարտ էին ու բարի՝ մեր լեռներուն տէս: Անոնք խարեցին մեր տըղամարդիկը, գանոնք տարին պիտուր՝ իբր ստրուկ աշխատցնելու համար ճամբաներու վրայ: Յետոյ անոնց փորել տըղին համայնափոսեր և զանոնք դնողահարեցին այդ փոսերուն եզերքը: Անոնք զանկը ջարկախեցին մեր բանաստեղծներուն, պայտեցին մեր եկեղեցականները... և մեզմէ խլեցին ամէն բան, մեր դարաւոր հայրենիքը, մեր հողերը, մեր տունները, մեր դաշտերը, մեր դարբնարանները: Մեր հազարամեայ եկեղեցիները վերածեցին ախոտի, դրժեցին զաշինքներու վրայ դրած իրենց ստորագրութիւնը, և այսօր կ'ուրանան ամէն բան: Ո՛չ միայն կ'ուրանան, այլև մեզ կը զրպարտեն, կը վարկաբեկեն և կը հալածեն:

«Հարցուցէք մեր ճանչցած ոեւէ հայու և անկէ պիտի իմանաք իրողութիւնը, դառն և ահաւոր իրողութիւնը: Ինծի բերէք հայ մը, որուն սիրելիներէն մէկը կամ միւսը չէ սպանուած, դահլիճ դարձած ամբողջ ազգի մը կողմէ: Հարցուցէ՛ք որբերուն, թէ՛ ո՞ր ճամբուն վրայ ջարդուեցան իրենց ծնողները, քոյրերը, եղբայրները, հարցուցէ՛ք երիտասարդի մը, թէ՛ իր դերաստանէն քանի՞ հոգի ողջ մնացած է: Իւրաքանչիւր հայ սեւ խորան մը ունի իր սրտին մէջ, ուր ցայգալամբ մը իսկ չի պլլւար:

«Այո՛, հարցուցէ՛ք մեր հանդիպած հայուն, թէ՛ ինչո՛ւ էր աչքերը միշտ տըրտում են, թէ՛ ինչո՛ւ կը թափառի աշխարհէ աշխարհ, թէ՛ ինչո՛ւ չ'ապրի իր պապենական հողերուն վրայ, թէ՛ ինչո՛ւ կը շարունակէ խօսիլ իր լեզուն և երգել իր երգերը: Եւ անոնք ձեզի պիտի պատմեն իրականութիւնը:

«Մէկ հոգի կրնայ սուտ խօսիլ, մէկ հոգի կրնայ խեղաթիւրել իրականութիւնը, բայց ոչ աշխարհի շորս ծագեցուն ցրուած հարիւր հազարուոր, միլիոնաւոր հայութիւնը:

«Պարոն դատաւոր, բացէ՛ք հին և նոր քարախններու հաւաքածոներ և պի-

տի տեսնէք, որ Քրիստոսն Հազար տարի առաջ գոյութիւն ունէր Հայաստան կոչուած երկիր մը, որ իմ հայրենիքս է: Կարողացէք անոր լեռներուն, գետերուն, լիճերուն, քաղաքներուն եւ դաշտավայրերուն անունները անոնք հայկական անուններ են...

«Մեր դահլիճները ո՛չ միայն չլացին իրենց գոհերուն վրայ, ո՛չ միայն զղջում չլայտնեցին, այլեւ ուրացան ամէն բան, ուրացան մեր գոյութիւնն իսկ: Աւելի՛ն՝ մեղադրեցին մեզ եւ մինչեւ այսօր կը մեղադրեն, կը հալածեն, կը սպանան մեզի եւ կ'ուզեն նոյնիսկ մեր դէմը հանել այն քանի մը տասնեակ հազար հայերը, որոնք կ'սպրին իրենց մայրաքաղաքին մէջ...»

«Շատեր իմ արարքս կը վերագրեն ատելութեան կամ վրէժխնդրութեան: Անոնք հիմնովին կը սխալին: Մէկը ատելու համար պէտք է զայն լաւ ճանչցած ըլլալ: Ես չէի ճանչար եւ նոյնիսկ չէի տեսած դեսպանը մինչեւ այդ վայրկեանը, երբ կրակեցի անոր վրայ: Վրէժխնդրութիւն: Այս պարագային այդ բառը ծիծաղելի է եւ անհեթեթ: Անոնք հաւանաբար կ'ակնկալեն միջերկրական երկիրներու մէջ կիրարկուող վնասօրէնքային, որուն հիմնական օրէնքն է «կիւմմի մը՝ կիւմմի դէմ»: Եթէ այդպէս ըլլար, մեր տուած մէկուկէս միլիոն զոհերուն փոխարէն պէտք է սպաննէինք նոյն թիւով, այսինքն՝ մէկուկէս միլիոն թշնամիներ: Իսկ աւելի տրամաբանական ըլլալու համար, պահելով թուաբանական համեմատութիւնները, տրուած ըլլալով, որ մեր զոհերուն թիւը կը ներկայացնէր այդ օրերուն մեր ժողովուրդին ամբողջութեան կէսը, պէտք է սպաննէինք 15էն 20 միլիոն թշնամի...»

«Վը ցաւիմ, որ ստիպուեցայ զործել այդ արարքը, որ չի համապատասխաներ բարոյական սկզբունքներու, բայց չեմ զղջար ատոր համար: Եւ եթէ ինծի հարցընէք, թէ այդպիսի արարք մը պիտի զործէի՞ տարբեր պայմաններու մէջ, պատասխանս պիտի ըլլար՝ ո՛չ:

«Ես ձեզմէ ո՛չ գութ եւ ոչ ալ կողմ-

նակաութիւն կը պահանջեմ, այլ՝ արդարութիւն: Ո՛չ թէ օրէնքին սահմանած արդարութիւնը, այլ՝ բացարձակ, անբեկանելի, անյեղի արդարութիւնը, որ բիծէր հոգիէն, խիղճէն եւ համոզումէն:

«Ահա՛, այս էր ըսելիքս»:



Այսօր, խուցիտ պատերը լուռ են եւ տխուր:

Անոնք վարժուած էին ինծի, եւ որոշ մտերմութիւն մը սկսած էր հաստատուիլ մեր միջեւ: Բայց պատերը տխրեցան, երբ վերադարձայ դատարանէն: Անոնք հասկըցան, որ մեր մտերմութիւնը պիտի չխորանայ եւ մեր բարեկամութիւնը շուտով վերջ պիտի դնէ:

Ատեանին նախագահը, իր երկու օգնականները եւ ինն երդուեալները զացած էին առանձնանալու՝ իրենց յատկացուած սրահին մէջ խորհրդակցելու եւ վճիռ արձակելու համար:

Անոց բացակայութիւնը տեսնց երեք ժամէն աւելի: Ասիկա կրնար ըլլալ շատ դէշ կամ շատ լաւ նշան մը: Կարծ խորհրդակցութիւնները աղէտալի կ'ըլլան ամբաստանեալին համար: Երկար խորհրդակցութիւնները տարակարծութեան նշաններ են ատեանի անդամներուն միջիւ: Այդ տարակարծութենէն կրնայ դուրս գալ շատ լաւ կամ շատ գէշ արդիւնք:

Երբ ատեանին 12 անդամները սրահէն ներս մտան, սիրտս սկսաւ արագ-արագ տրոփել: Նախագահը տեղ առաւ իր աթոռին վրայ, սեղանին վրայ դրաւ ձեռքը բռնած թուղթը եւ կարդաց:

«Ոճրադատ ատեանը, իր զոնիփակ նիստի ընթացքին, ութ ձայներու մեծամասնութեամբ Հաստատեց Հետեւեալը.

«Արամ Գ... կրտկա՞ծ է դէսպան Գ.ին վրայ՝ զայն սպաննելու նպատակով: Պատասխանը եղաւ՝ Այո՛:

«Արամ Գ. դիտակցաբար եւ ծրագրուած կերպով սպաննա՞ծ է դէսպան Ք.էն: Պատասխանը եղաւ՝ Այո՛:

«Կարեւի՞ր է այս արարքին մեղմացու-

ցիչ պարագաներ գտնել: Պատասխանը եղաւ՝ Այո՛:

«Աւստի՛ ոճրադատ ատենանը Արամ Պ.էն կը դատաւարտէ եօթը տարուան բանտարկութեան: Բայց նկատի ունենալով անոր տարիքը, կեանքին պարագաները եւ հոգեկան վրդովումը, ատենանը յարձար նկատեց առկախել չորս տարուան բանտարկութեան դործադրութիւնը: Ամբաստանեալը հինգ օր ունի՛ ղեմելու վըճարեկ ատենանին»:

Խուցիս պատերը լուռ էին եւ տխուր, որովհետեւ հոս պիտի մնայի քսան ամիս միայն, 16 ամիս մնալէ ետք: Վրաս թեթեւութիւն մը իջած էր: Ըմբռնչիներու համար այս ուրախ պահը, երկնցայ մահաճակալիս վրայ: Ծառ չանցած՝ լսեցի բանտապահին ոտնամայնը եւ խուցիս կղզականքին մէջ անոր բանալիին ձայնը:

Բանտապահս միջին տարիքով մարդ մըն էր: Ան երկար տարիներու փորձառութիւն ունէր եւ շատ խստութեամբ կը վարուէր անուղղայ եւ արհեստավարժ օճրագործներուն հետ, բայց որոշ սկաւրութիւն մը ունէր բոլոր անոնց հանդէպ, որ երկասարդ էին եւ գործած էին իրենց առաջին յանցանքը, որովհետեւ բնտանիքի հայր էր՝ եւ ունէր երկու չափահաս մանչ:

Բանտապահը ինծի հրկարեց արցակ մը նամակ:

— Այս նամակները անօրէնին քովն էին ամիսէ մը ի վեր: Գիտես, որ դատա-

վարութեան ընթացքին ամբաստանեալներուն արգիլուած է հաղորդակցիլ դուրսի աշխարհի հետ: Բայց հիմա, որ վճիռդ անկուած է այլեւս, կրնաս օրը օրին ստանալ նամակներդ եւ փափաքած, օրաթերթերդ ու դիրքերդ:

Մեկնելու պահուն, ան դարձաւ իմ կողմս եւ ըսաւ.

— Կը շնորհաւորեմ: Առտուան թերթին մէջ կարդացի խօսած ճառդ, իսկապէս հոյակապ էր: Դատաւորը եւ երդուեալներն ալ շատ ազնիւ դտնուեցան: Նոյն պայմաններու մէջ, ուրիշ սեւէ մէկը պիտի դատաւարտուէր անուշադի քսան տարուան բանտարկութեան:

Նամակները կու գային աշխարհի չորս կողմէն, ծանօթներէ եւ անծանօթներէ: Նամակներէն մէկուն վերի եւ վարի տնկիւնները գրուած էր՝ Ն. 11, թէ եւ ստորագրութիւնը անծանօթ անուն մըն էր: Անմիջապէս հասկցայ, թէ գրողը Վրէժուհին էր...

Գունակութիւնս դարձաւ կատարեալ: Վրէժուհի կը խոստանար ինծի գրել շատ յաճախ, որկէլ հայկական թերթեր եւ դիրքեր...

Վրէժուհի ինծի կը սպասէր տեղ մը՝ իր սեւ շրջագրահատով, իր ճերմակ դօսիտով եւ պայուսակով: Պիտի վազէր իմ կողմս, պիտի բռնէր ձեռքերս, պիտի նայէր իմ աչքերուս մէջ եւ պիտի ըսէր.

— Վարձըք կատար, Արամ:

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

Յ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

ԺԱՄԱՂՐՈՒՔԻՆ

Անճրհուններուն հետ առաջին,
բազմաթիւն մը մինակ մարդոց,
լամբարներով կը դեզերի անտառներուն:
Այդ վայրերու՝ գեշերային
կախարդանքը չէ, որ նետած է
կիներ ու մարդիկ թաւառներուն մէջ,
ոչ ալ սիրային հանդիպումներու
հեռանկարը: Հետուէն՝ դեղերու
կէտեր կը թուին
կամ գիծեր լոյսի:

Ժամադրութիւն մը վայրի,
որ արեւի եւ աստղերու
ժամացոյցը կը ճշդէ:
Բոյրներուն մէջ շննիի,
անճրհի եւ հողի,
խիունջներու պատեանները դուրս կու գան —
մարմինն անոնց լպրծում ու սպիտակ,
խոնու հողին դանդաղորէն կը սահի:

Անոնց կռփին՝
սերունդներու հաւատարիմ յաջորդութեամբ,
մարդիկ կը շարժին անձայն, ուշադիր...
Կրճուտ հանոյճով ու ճղումով կոյր՝
անոնք կը փալեմ պատեանները թաց
եւ կը մէկտեղեն գամբիւզներու մէջ...

Լոյսը լուսնի՝ կ'իյնայ անոնց
փայլերուն ու ձեռքերուն,
դարձնելով դէմքերն իրենց
մեռելային, անիրական:

Կարծէ՛ք լուսնահար մարդկութիւն մըն է,
որ դեռ կը շրջի
խաւարին մէջ անտառներուն...

ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏԻ

ԾԱԹՐԱՄԱՍԻ ԱԽԱՀԱՆԸ

Հոս աւագանն է խորտակուած նաւերու :
Կազարագոյն օլիֆներուն վրայ մաւք՝
այրած նաւեր հոս ինկած են հողք կողքի :

Այնկոծման հետ նսիւններ մետաղի,
կաղկանձ ինչպէս, կը տարածուի ամէնուր —
Նաւեր, որոնք տարափներուն կը յախին :

Կայմեր կանգնած են ջրառայդ նաւերէ :
Շագնաւ մը երգեհուած,
մարդու մտան վիրաւոր,
կողին վրայ կ'երկարի :
Բայց նայերու երամներ
կամրջակին կը հանգչին,
ծանգ ու երկաթ մնացած
կմախֆներուն միջև քեթեւ կը սահին՝
աշխուժ գիծեր տաշխով :

Ծայրամասին
նաւահանգիստին գարնուած,
ամայութեան մէջ խռչտանգուած նաւերու՝
ուագանը կը մնայ :
Նաւեր, որոնք խորտակուած,
կարսնցուցած ամէն ձգտում մեկնումի,
հանգուած կեանքեր կը յուշեն...

Հոն՝ քախֆին եւ ճիւղն մէջ նայերու,
Նաւեր, որոնք կը ճանչեն անդադար,
բայց եւ այնպէս պիտի մնան այնտեղ, մի՛շտ :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Մ. ԻՇԽԱՆ

ՄԾԱԿՈՅԹԻ ՊԱՀԱԿՆԵՐ

(ԹԱՏԵՐԱԽԱՂ ԶՈՐՍ ՊԱՏԿԵՐ)

Դ. ՊԱՏԿԵՐ

Մարտիմնաններու հիւրանմանքը: Կնդրոնը դրուած է ընդարձակ տեղան մը, ներմակ սփռոցով վրան պնակներ, գաւաթ, պատառաբաղ, եւայլն: Ինչպէս Յանս' ծաղիկ: Վարագոյրը բացուելուն՝ Զուարթ գրազած է գիմեսեղանը կարգի դնելու գործով: Երբեմն-երբեմն մայրը՝ տիկին Մարտիմնան, ներս կու գայ եւ տեղանին վրայ կը տեղաւարդէ ազանդերի ու կերակուրի ճոր պնակներ ու կը մեկնի:
Ներս կը մտնէ պարոն Մարտիմնան:

1.

- ՄԱՐՏԻՆԵԱՆ. — Պատրաստ է սեղանը:*
- ԶՈՒԱՐԹ. — Գրեթէ... խմբիքի շիշերը բերե՞մ հիմակուրնէ:*
- ՄԱՐՏԻՆԵԱՆ. — Հարկ չկայ, թող լաւ մը պահին:*
- ԶՈՒԱՐԹ. — Քանի՞ հողի են, բո որն ալ կրնա՞նք նստեցնել սեղանին շուրջ:*
- ՄԱՐՏԻՆԵԱՆ. — Պայման չէ, որ նստին բոլորն ալ, կրնան ոտքի վրայ առնել իրենց բաժակները:*
- ԶՈՒԱՐԹ. — Հիւրերը որ գան՝ ես ներս պիտի քաշուիմ:*
- ՄԱՐՏԻՆԵԱՆ. — Ինչե՞ք ես, ի՞նչ ես...*
- ԶՈՒԱՐԹ. — Տրամադրութիւն չունիմ:*
- ՄԱՐՏԻՆԵԱՆ. — Ալ մոռցիր այդ միջադէպը. աշխատէ ուրախ երեւիլ:*
- ԶՈՒԱՐԹ. — Մոռցի՞ր... շարունակ գմոցներ կը կրկնեն շուրջէս. մեռցս չէ:*
- ՄԱՐՏԻՆԵԱՆ. — Կը հասկնամ. մեն է յուսախարութիւնը, ասիկա կեանքիդ առաջին փորձառութիւնը եղաւ:*
- ԶՈՒԱՐԹ. — Բայց, հայրիկ, անհաւատալի է: Ամբողջ երկու տարի շուրջս դարձաւ. վայրկեան մը չէր մոռնար զիս: Ի՞նչ ջերմ խօսքեր, ի՞նչ եր-զումներ. եւ յանկարծ այս նամակը. ո՛չ, չեմ կրնար հաշտուիլ...*
- ՄԱՐՏԻՆԵԱՆ. — Իս չեմ պարմանար: Երիտասարդ օտարական մը, որ առան-ձին է եւ զուարճութիւն կը փնտռէ...*
- ԶՈՒԱՐԹ. — Ո՛չ, ո՛չ, զուարճութիւն չէր. ես այդքան ալ յիմար չեմ: Ան-կեղծ էր իր գլացումը ինծի հանդէպ: Աչքերուն մէջ յաճախ արցունքի կաթիլներ տեսած եմ: Արցունքն՝ որն ալ կեղծ են:*

- ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Աղջիկս, կեանքը այսպէս է: Որքան ատեն հետդ էր, պիւտոն միասին կ'աշխատէիք, այդ բոլորը բնական էին թերևս: Բայց ահա, տեսար, հազիւ մեկնած քաղաքէն՝ սէր ու արդունք ցամաքցան: Պողոս-բիւնութեամբ քեզի գրեց, որ մոռնաս դիւք: Այսպէս է կեանքը, մա'նաւանդ երբ դիմացինդ օտար է:
- ԶՈՒԱՐԹ** — Մեկնելէն երկու օր առաջ, լուրջ խօսակցութիւն մը ունեցաւ հետս: Ղերբը այգիքան յուզուած չէի տեսեր: Ըսաւ՝ աշխարհը իրար անցնի՝ քեզմէ չեմ հրաժարիր, առանց քեզի չեմ կրնար ապրիլ...:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Մոռցիր, այլևս մի՛ մտածեք այդ մասին: Սիրոյ վէրքերը խորունկ կ'ըլլան, բայց չուտ կր բուժուին, երբ չքրքրես:
- ԶՈՒԱՐԹ** — Սէ՛ր, ի՛նչ սէր... կ'ատեմ՝ զի՛նքս:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Աւելի լաւ կ'ընես, եթէ ախտախոս անտարբեր մնալ: Բան չես կորսնցուցած. ամբողջ ապագայ մը ունիս առջիւդ: Նայէ, որ այսու-հետեւ աւելի խոհեմ շարժիս...:

Տիկի՞մ Մարտինեան մերս մտած է արդէմ, ձեռքը կերպ-կուրի մոր ամամներ, գորս կը դնէ սեղանին:

2.

- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Նորէ՛ն ձոնի մասին կը խօսիք. մոռցիր ըսի քեզի: Ա՛խ, ի՛նչ ընեմ, որ մօրդ խօսքը մտիկ չրբի բամանակին: Եթէ մտիկ ըրած ըլլայիր՝ հիմա այսպէս չէիր տանջուած: Փառք տուր Աստուծոյ, որ քեզ ազատեց Յիմսը անծանօթ այս խարբային ձեռքէն...:
- ԶՈՒԱՐԹ** — Մամա, նորէն մի՛ սկսիր...:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ** (կ'ընդ) — Գուն գնա՛, դործդ տես, Զուարթը քիչ մը միեակ ձգէ ինձի հետս:
- ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Լա՛ւ, լա՛ւ, այս տան մէջ իմ կարծիքս հարցնող չը-կայ արդէն (կը մեկնի):

3.

- ԶՈՒԱՐԹ** (սեղանը կարգի դնելու պատրուակով, երեսը դարձնելով ձորմէմ) — Հայրիկ, ուրիշ խօստովանութիւն մը ունի՞մ քեզի ընելիք:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Ըսէ՛, սիրտդ բա՛ց, կը թեթեւնաս:
- ԶՈՒԱՐԹ** — Զոնիին հետ կապ չունի:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Ահ, ի՞նչ է ուրեմն:
- ԶՈՒԱՐԹ** — Պարոն Հայկունին ձեռքս խնդրած է:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Հայկունի՛ն, մե՞ր Հայկունին...:
- ԶՈՒԱՐԹ** — Այո՛:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Քանի՞ օրուան պատմութիւն է ստիկա:
- ԶՈՒԱՐԹ** — Մօտ երկու տարուան:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ ես լուր չեմ ունեցած. ինչո՞ւ դադարեցի պահեցիր:
- ԶՈՒԱՐԹ** — Ձէի ուզեր յայտնել, չէի կրնար: Այն ատեն ես տարուած էի ձո-նիով. եւ յետոյ՝ Հայկունին որեւէ զիջք չունէր տակաւին:
- ՄԱՐՏԻՆԵԱՆ** — Յանցաւոր ես, մեծապէս յանցաւոր. դոնէ հայրդ պէտք է տեղեակ պահէիր: Գուն ի՞նչ պատասխանած ես իրեն:
- ԶՈՒԱՐԹ** — Ձեմ պատասխանած... մինչեւ հիմա պատասխանի կը սպասէ:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Լա՛ւ որ այդպէս է: Հայկունին միջազգային դէմք է այսօր: Երկրորդ Հայկունի մը շունինք մեր իրականութեան մէջ:

Կը ինչէ դրան գտնել: Զուարթ կը բանայ եւ ներս կ'առայ՝ օրդէ վարդանեանը եւ Ուրարտեանը: Զուարթ կը մեկնի դէպի Խահսնայ եւ մերթ ընդ մերթ կը յայտնուի՝ գիմեսնանը յարդարելու համար:

4.

ՄԱՐՏԻՆԵԱՆ (ընդառաջելով հիւրերուն) — Հրամայէք, Հրամայէք, բարի եկաք:

ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Բարեւ, Մարտինեան. կանո՞ւխ եկանք արդեօք:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Ճիշդ ժամանակին. հիմա միւսներն ալ կը հասնին:

ՎԱՐԳՆԵԱՆ.— Երտակը, շատ լաւ մտածեր էք՝ ի պատիւ Հայկունին այս գինեականը: Գրասիրաց Միութիւնն ալ կը խորհի սեղանով մը պատուել մեծ հայր, բայց տեսնե՞ք, ժամանակ պիտի ըլլա՞յ:

ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Ինչո՞ւ, այդքան շո՞ւտ կը մեկնի:

ՎԱՐԳՆԵԱՆ.— Այս շաբթու վերջը ճամբորդ է դէպի Ամերիկա:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Անկապած կորուստ մը պիտի ըլլայ մեր գաղութին համար:

ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Այո՛, սակայն պէ՛տք է մեկնի. հոն է տեղը եւ ապագան: Հրատարակչական տան մը հետ պայմանաւորուած է նոր վէպի մը համար:

ՎԱՐԳՆԵԱՆ.— Ո՞վ կը սպասէր նման յաջողութեան մը. երեսակայեցէ՛ք, Ամերիկայի մէջ Հայկունիի վէպը պետք—սերը է ներկայիս:

ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Մեծ ազգ ենք, եղբայր...

ՎԱՐԳՆԵԱՆ.— Ըսողներ կան, որ Նոպելի մրցանակը իրեն պիտի տան երգեր, բայց քաղաքական նկատումներով ժախողեցուցեր են:

ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Անկարելի չէ: Հայ ենք վերջապէս, կունակ շունինք: Ամէնինչ ազդեցութեամբ եւ հաշիւով կ'ըլլայ:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Վերջերս թերթերը նոր բան գրեցին:

ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Չկարդացի՞ք: Ետտ մեծ դեահատանքներ կային: Ես տուի մէկ մասը: (Գրպանէմ քերթը համելով)՝ Տեսէք, թէ ի՞նչ կը գրէ ա—մերիկեան մեծագոյն թերթերէն մէկը: (Կը կարդայ): «Հէյկընի վէպը հզօր գործ մըն է»: (Գտնուելով միւսներուն)՝ Հասկցա՞ք անշուշտ, Հէյկընը Հայկունին է:

ՎԱՐԳՆԵԱՆ.— Ինչո՞ւ փոխած է անունը:

ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Է՛, բնական է. ամերիկացիք Հայկունին չեն կրնար հնչել: Կարեւոր չէ այդ պարագան. կարեւորը իր մասին յայտնուած կարծիքներն են: (Կը վերսկսի կարդայ), Ուրեմն, «Հէյկընի վէպը հզօր գործ մըն է, վերջին տարիներու ամէնէն աւշագրաս գիրքը, որ կը յուզէ, կը կը յափշտակէ եւ առատօրէն կը վարձատրէ ըմբօրանքը: Հեղինակը՝ Հէյկըն, իր իսկ ձեռքով անգլիերէնի քարգմանած է գայն, մայրենի լեզուէն: Գիրք մը ախաւսիկ, որ դժբախտ ժողովուրդի մը ռաբրգուքիւնը կը պատմէ մեզի, ցնցող դրուագներով...»:

ՎԱՐԳՆԵԱՆ.— Գուս՛, ի՞նչ աղուոր գրած է...

ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Գեո կայ, դեռ չըրացուցի: Աս ալ հատուած մը՝ ամերիկեան ուրիշ թերթէ: (Կը կարդայ): «Հէյկըն կու գայ աստուածաշնչակամ Հայաստանէն եւ աշխարհիմ կը պատմէ Հայկական Յեղասպանութիւնը խոր զգայութեամբ եւ հզօր արուեստով...»:

ՎԱՐԳԱՆԵԱՆ — Կեցցէ՛ն Հայկունի...

Քոնեզը կը հնչէ: Մարտիմեան կը բռնայ եւ Յերս կ'առաջնորդէ Նայիրեանն ու պարտն Մարգարէն:

5.

ՄԱՐԳԱՐ — Բայ եւ ձեզ... Այս ի՞նչ սիրաբերդ է...

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Բան մը չէ, համեստ սեղան մը՝ ողջերթ մտղթելու համար մեր բուրբ սիրելի Հայկունիին:

ՄԱՐԳԱՐ — Ինչո՞ւ լուր չտուիր ինձի: Ըսէիր՝ սուրնս սիրով կը տրամադրէի՝ աւելի փառաւոր բան մը կ'ընէինք. արժէր Հայկունիին համար:

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Հոգ չէ, պարոն Մարգար, Հայկունին մեղմէ կը հաշուընդիտան անդամի պէս հարազատ:

ՄԱՐԳԱՐ — Ինձի հասկցուցէ՛ք մէյ մը. ճի՞շդ է, որ այս տղան իր գիրքի անդերէն հրատարակութենէն հարեւր հազար տուար շահեր է:

ՄԻՒՍԵՆԵՐԸ (խուճրով) — Այո՛, ճիշդ է:

ՄԱՐԳԱՐ (քերտաւատ) — Ջարմանալի է, ուղղակի՛ դարձանալի: Ի՞նչ կը կարծէք, խաղ մը չկա՞յ ասոր տակը:

ՆԱՅԻՐԵԱՆ — Ո՛չ մէկ խաղ: Ճամբան պարոն Մարգարին կը բացատրէի՛ չէր հաւատար:

ՄԱՐԳԱՐ — Նորէն հաւատալու չի դար: Կը նշանակէ, իսկապէս ամէն ապրանք ամէն շուկայի համար չէ: Ջարմանալի աշխարհ է այս Ամերիկան:

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Յաջողութիւնը Ամերիկայէն դուրս ալ սկսած է տարածուիլ: Ձյունեցի՞ք, Հայկունիի գիրքը նաեւ Ֆրանսերէնի եւ սպաներէնի կը թարգմանեն:

ՎԱՐԳԱՆԵԱՆ — Իրա՞ւ կ'ըսէք:

ՆԱՅԻՐԵԱՆ — Ձկարգացել՞ք, ամերիկեան մամուլը մեծ զոգնատով կ'արտատայ յայտուի: Մեր թերթին վերջին թիւին մէջ մենք տուինք կարեւորները: (Գրպանէն քերթ մը հանելով)՝ Մտիկ ըրէք: (Կը կարդայ): «Է՛կէյլընի վեպը հզօր գործ մըն է, վերջին տարիներու ամենէն ուշագրաւ գիրքը...»:

ՎԱՐԳԱՆԵԱՆ — Մի յոգնէք, պարոն Ուրարտեանը թիչ առաջ Եկրախաչէն կարգաց նոյն բանը:

ՆԱՅԻՐԵԱՆ — Լաւ, յսեցէք սա մէկը — «Է՛կէյլըն կու գայ Եստուսմաշնչապիւն Հայաստանէն...»:

ՎԱՐԳԱՆԵԱՆ (ընդհատելով) — Գիտենք, ան ալ կարգացուցաւ:

ՆԱՅԻՐԵԱՆ (դժգոհ, քերթը ծալելով) — Ես Հայկունին մանկութենէն կը ճանչնամ. միտին գնդիկ կը խաղալինք զպրոցը: Շատ ուշի՛մ տղայ էր:

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Մեզի հայրենակից կ'ըլլայ. լուսահոգի հօրն ալ ծանօթ եմ. վերջին ծայր գրասէր մարդ էր: Հայկունի նահապետական մեծ ընտանիքի զաւակ է:

ՎԱՐԳԱՆԵԱՆ — Յայտնի է. ազնուական բան մը կայ վրան:

ՆԱՅԻՐԵԱՆ — Եւ որքա՞ն համեստ:

ՄԱՐԳԱՐ — Եթէ դրամը բունել գիտնայ՝ կը հարստանայ այս ընթացքով:

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Հարստութեան աչք չունի, պարոն Մարգար, նիւթը չէ հետաքրքիր գինք:

ՄԱՐԳԱՐ — Սխալ կ'ընէ. կեանքի մէջ մարդ առիթէն օգտուիլ գիտնալու է, յաջողութիւնը տեսական չ'ըլլար:

- ՆԱԹԻՐԵԱՆ.— Ուշացաւ Արդեօք պիտի չգա՞յ :*
- ՎԱՐԴԱՆԵԱՆ.— Բազմազբաղ անձնաւորութիւն է :*
- ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Անգլերէն իր նոր վէպը սկսած է գրել :*
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Երէկ Ազգային մարմինները ի պատիւ իրեն ընդունելութիւն մը սարքած էին Առաջնորդարանի դահլիճին մէջ :*
- ՎԱՐԴԱՆԵԱՆ.— Արդեօք պատշաճ չէ՞, որ մեզմէ երկու հոգի երթայ՝ զինք հոս բերելու :*
- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Հարկ չկայ. խոստացած է եւ անպայման խոստումը կը կատարէ :*

Նոյն պահում դրամ գանգը կը հնչէ եւ Մարտինեան մերս կ'ստաշմորդէ օրում հիւրը՝ Հայկունիմ :

6.

- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Հրամեցէք, պարոն Հայկունի, ճիշդ այս վայրկեանիս մենք ալ ձեր մասին կը խօսէինք :*
- ՀԱԹԿՈՒՆԻ.— Եւ ի՞նչ կ'ըսէիք :*
- ՎԱՐԴԱՆԵԱՆ.— Ձեր յաջողութիւններուն վայելքը կ'ըմբռնէինք :*
- ՄԱՐԳԱՐ.— Ինչպէ՞ս է պարոն Հայկունիի առողջութիւնը :*
- ՀԱԹԿՈՒՆԻ.— Ծառ լաւ, շնորհակալ եմ :*
- ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Տեսաք անշուշտ «Արախտ»ի այն թիւը, որ ձեզի նուիրած էինք :*
- ՀԱԹԿՈՒՆԻ.— Տեսայ, շնորհակալ եմ :*
- ՆԱԹԻՐԵԱՆ.— Ձեռքերնիզ հասա՞ : «Հրապարակ»ի գերջին թիւը, ուր ձեր մասին շատ աղուոր յօդուածներ տպած էինք՝ ամերիկեան թերթերէ Քաղերով :*
- ՀԱԹԿՈՒՆԻ.— Այո՛, շնորհակալ եմ :*
- ՄԱՐՏԻՆԵԱՆ (խոհամտի կողմը տանող դուռնէն կը կանչէ).— Ձուա՛րթ, ազ- շիկս, ըմպելի բեր :*

Ձուարթ կու գայ, Ժպիտով կը բարեւէ Հայկունիմ եւ կը սկսի գիմի լեցնել բաժակներում մէջ. ապա՝ իւրաքանչիւրին բաժակ կը հրամցնէ :

- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Հրամեցէք, ներողամիտ եղէք մեր համեստ սեղանին համար. թող ամէն մարդ իր պնակը ինք լեցնէ :*

Հիւրերը կը մօտեման սեղանին եւ կը սկսին զա՞զամ ուտելիքներ դնել իրենց պնակին մէջ : Վերի ծայրը կեցած է Հայկունիմ : Պահ մը դամակ ու պատառաքողներու ազմուկ, կողք կողքի խօսակցութիւններ, Ժպիտներ եւ ոգեւոր շարժումներ : Հայկունի լուռ է եւ խոռուն :

- ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Սիրելի բարեկամներ, այսօրուան այս հաւաքոյթը կազմակերպուած է ի պատիւ պարոն Հայկունիին : Ինչպէս ծանօթ է բոլորիդ, ան շուտով կը մեկնի ռէպի նոր հորիզոններ... պէտք չունիմ ձեզի ծանօթացնելու մեր բոլորիս սիրելի պարոն Հայկունիին, որուն գրական համբաւը հռչակուած է ամէն կողմ : Իր սքանչելի գրելով՝ ան հայուն*

պածախի անունը անկամ մը եւս փառաւորեց քաղաքակիրթ աշխարհի սարածքին: Այս վարկեանիս, յուզումով կը վերջիչեմ այն օրը — աւելի քան երկու տարիներ առաջ — երբ միեւնոյն բարեկամներով հաւաքուած էինք նոյն այս յարկին տակ, որոյէտի իր անտիպ մնացած վէպը լոյս ընծայենք: Այն ատեն, Հայկունի հայ դրագէտի ճակատագիրը բաժնող անտեսուած հեղինակ մըն էր. այսօր, համաշխարհային զէմք է ան: Փանի մը օրէն պիտի բաժնուի մեզմէ՝ մեկնելու համար Ամերիկա, ուր իրեն կը սպասէ փայլուն ապագայ: Վստահ եմ, որ պիտի ըմբռնայ ժեզ, պիտի շնորհայ մանուսկր իր թաղմաշարչար ժողովուրդը: Այս հաւատքով ու մտահոգութեամբ բաժակս կը բարձրացնեմ ու կը խմեմ իր կենացը, նորանոր յաջողութիւններ մաղթելով իրեն: Բարի ճանապարհ, պարոն Հայկունի, ձեր կենացը...

ՄԻՒՄՆԵՐԸ (Խմբովիմ). — Ձեր կենացը, ձեր կենացը...

ՄԱՐՏԻՆԵԱՆ. — Ներկաները բոլորն ալ, այս կամ այն ձեւով, հայ արժէքներու պաշտամունքը ունեցող մշակութի պահակներ են եւ բազմաթիւ յիշատակներով կապուած պարոն Հայկունիի հետ: Այս պատճառով, դիտեմ, թէ իրենց սրտի խօսքը պիտի փափաքին ուղղել անոր: Առաջին ձայնը կու տամ Գրասիրաց Միութեան ժբաջան նախագահ պարոն Վարդանանին:

ՎԱՐԴԱՆԵԱՆ (դանդաղօրէմ առաջ գալով). — Ի՞նչ ըսեմ, ինչպէ՞ս արտայայտեմ ինքզինքս: Բացառիկ պատիւ է ինծի համար խօսիլ ի ներկայութեան մեծ վարպետին, որուն առջեւ կը խոնարհին օտար դժուարահաճ ըննադատներն անգամ: Սա վարկեանիս սիրտս կ'ուռի հպարտութեամբ: Ըմբարտութեան զէմ մեղակշած չեմ ըլլար՝ յայտարարելով, որ երբ պարոն Հայկունիի դիրքին հայրէն տղայութիւնը հրապարակ ելաւ, առաջին ընթերցողը ես եղայ, դիւերը մինչեւ լոյս քունտ փախցուցած: Սկիզբի առաջին էջերէն անմիջապէս զգացի, որ անմահ գլուխ-գործոցի մը առջեւ կը գտնուիմ: Ձէի սխալած: Եւ իմ այս համոզումս չքաշուեցայ բարձրագոյն յայտնելու ամէնուն, ամէն տեղ: Թող շնորհի, թէ մենք հայերս ընդունակ չենք գլուխ-գործոցներ արտադրելու, Թոյստոյներ, Կէօթէներ, Հիւկոներ տալու: Հայը ո՛չ մէկ մարդի մէջ ետ կը մնայ օտար ազգերէն: Մեծ է եղած անցեալին եւ մեծ է նաեւ այսօր: Վկայ՝ Հայկունին եւ իր նմանները, որոնք մշակութի եւ գրականութեան գեղեցիկ վրայ ասպարէզ կը կարդան ամէն յառաջագէմ ազգի գաւակներուն: Պարոն Հայկունի, դուք պատիւ կը բերէք ձեր պատկանած ազգին: Ծնորհագարտ ենք ձեզի, որ, փառքի կատարելութեան վրայ կանգնած՝ չուրացաք ձեր հայութիւնը: Ձեր իրաւունքն էր ասիկա, բայց դուք այդպէս չբրիք: Երախտագարտ ենք ձեզի, որ անգլերէնի գանձերուն այնքան վարպետօրէն տիրանալով հանդերձ, շնորհաբար մեր լեզուն եւ կը շարունակէք տակաւին խօսիլ զայն: Վստահ եղէք, պարոն Հայկունի, որ Գրասիրաց Միութեան համեստ մատենագարանին մէջ ձեր նուիրած հաստը պիտի պահենք իրրեւ անզին մասունք մը:

ՄԱՐՏԻՆԵԱՆ. — Պարոն Վարդանանի այս պեղեցիկ խօսքերէն ետք, կ'առաջարկեմ բաժակները պարպել մինչեւ յատակը:

ՈՒՐԱՐՏԵԱՆ. — Ես ալ կ'առաջարկեմ խմել տէր եւ տիկին Մարտինեաններու կենացը: Անոնց տունը միշտ թաց է եղած զբողիներու եւ մտաւորականներու առջեւ: Իսկական մշակութի տուն:

ՎԱՐԴԱՆԵԱՆ. — Ո՛ւր է Տիկինը:

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Խոհանոցը ըլլալու է: Գնա՛, աղջիկս, մամադ կանչէ, վայր-
կեան մը թող գայ:

Ձուարք կը մեկնի եւ կը վերադառնայ մամայիմ հետ,
որ յոգնած երեւոյթ ունի:

7.

ՁԱՅՆԵՐ — Ձեր կենացը, ձեր կենացը...

ՄԱՐԳԱՐ — Ձեռքերնիդ դալար, տիկին Մարտինեան, պէտքեր շա՛տ հա-
մով է:

ՎԱՐԴԱՆԵԱՆ — Քիւֆթէն ա՛յ, քիւֆթէն ա՛յ...

ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ — Անուշ ըլլայ: (Աղջիկը բաժակ մը կը դնէ ձեռքը),
Բարով էք եկեք, ձեր բոյորին կենացը... Թոյլ տուէք, այս առթիւ, իմ
մասնաւոր շնորհակալութիւններս յայտնել պարոն Հայկունիին, որ հա-
կառակ բազմազարդ ըլլալուն, ամբողջ տարի մը Ձուարթիս հայրէն
սորվեցուց...

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Պարոն Հայկունիի երախտիքը շատ մեծ է այս դաղութին
մէջ: Մաղթենք, որ մօտ ատենէն դարձեալ հաւաքուինք նոյն յարկին
տակ, այս անգամ օրիորդ Ձուարթի բարեբաւաստիկ նշանտուքին առի-
թով...

ՁԱՅՆԵՐ — Մաղթե՛նք, մաղթե՛նք:

ՄԱՐԳԱՐ — Ձուարթ, աղջիկս, դէ՛ աճապարէ. ատանկ բան մը եթէ յաջող-
ցընես՝ գիտցի՛ր, կեքահայրդ ե՛ս պիտի ըլլամ: Ի՛նչ ըսէր, տիկին Մար-
տինեան:

ՏԻԿԻՆ ՄԱՐՏԻՆԵԱՆ — Աստուած թող բարին կարգադրէ, ինչո՞ւ չէ, մեր ալ
ուզածը ատ է... Կը ներէք ինձի, ներքը գործ ունիմ: (Կը մեկնի):

8.

ՎԱՐԴԱՆԵԱՆ — չի՞ շք է, պարոն Հայկունի, որ ամերիկեան Փիլմի ընկերու-
թիւն մը ուզած է ձեր վէպը գնել՝ սինեմայի վերածելու համար:

ՀԱՅԿՈՒՆԻ — Տեղեկութիւն չունիմ:

ՄԱՐԳԱՐ — Աշխատեցէք, որ ըլլայ: Փիլմերը շատ դրամ կը բերեն: (Բաժա-
կը քարճարացնելով)՝ Հայկունի՛, սղաս, ջուս փառքիդ եւ յաջողութեանդ
կենացը...

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Հայ գրականութեան եւ անոր անխոնջ մշակներուն կենացը...

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Յայտնի է, որ պարոն Ուրարտեան ողևորուած է եւ կ'ուզէ
խօսիլ: Ձայնը իրեն կը պատկանի:

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Ես մեր թերթին սիւնակներէն ամէն օր կը խօսիմ հասարա-
կութեան հետ: Բայց այս առիթը պատմական նշանակութիւն ունի:
Հայկունի մեր ժողովուրդի հարազատ եւ արժանաւոր դաւակն է, անոր
ծոցէն ծնած, արիւնը արիւնէն եւ ոսկորը ոսկորէն: Ո՛չ ոք ինձի չափ
տեղեակ է Հայկունիի կրած դրկանքներուն: Երբ մեր տպարանէն լոյս
աշխարհ կու գար իր մեծարժէք վէպը, ես օրը օրին արիւնոզ սրտով
հետեւեցայ այն բոլոր տառապանքներուն, որոնց ենթարկուեցաւ ինք:
Միշտ կ'ըսէի իրեն. «Մի՛ յուսահատիր, տպագան ջուկդ է, վատնդի գա-
զափարը անմահ է, եւ մտքի լոյսը՝ անկորնչելի»: Ձէի սխալած: Այ-
սօր, դուք ձեր աչքով կը տեսնէք արդիւնքը: Ստեղծագործ հայ հան-

ճարը կը շարունակէ դավննպսակներ խլել երկրէ երկիր, յանձին Հայկունիի: Հարկ կա՞յ այս հանճարեղ հայրերի գիրքին արժէքները թուելու: Ո՛րքան խորքով, նո՛յնքան ճեւղով արուեստի կատարեալ դործ մըն է ան: Հայկունիի կուռ ունին եւ հարուստ լեզուին մէջ վերակենդանացած կը գտնենք Զօհրայներու, Զարգարեաններու, Վարուժաններու ստեղծագործ թափն ու թոփէջը: Մեր ժողովուրդի կենսունակութեան ակերը ցածքիլ չեն գիտեր: Ո՛ւր են հզօր Բարեւոնը եւ դառող Ասորեստանը: Կայսրութիւններ փոչի են դարձած, իսկ մենք կա՛նք, կը մնա՛նք ու պիտի մնա՛նք դարէ դար... (Մափաւարութիւններ):

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Զուարթ, աղջիկս, բաժակները պարսպ մի ձգէր: Այս տոնախմբութեանէն քեզի ա: բաժին կ'իյնայ: Հայկունին հայերէնի ուսուցիչ է:

ՄԱՐԳԱՐ.— Ուրեմն, պարոն Հայկունիի եւ Զուարթի կենացը ժիւսին խըմենք:

ԶՈՒԱՐԹ.— Հայրի՛կ, ինչո՞ւ ինծի մէջը կը խտնես. շնորհակալութիւն, ես արժանի չեմ...

ՆԱՅԻՐԵԱՆ.— Զեր կրկուրին կենացը:

ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Երկու խօսք ալ օրիորդ Զուարթին կողմէ:

ԶԱՅՆԵՐ.— Այո՛, այո՛, կ'ուզենք:

ՄԱՐԳԱՐ.— Մի՛ սո՛ւցնէք աղջիկը. կարմրեցաւ:

ԶՈՒԱՐԹ.— Կը ներէ՞ք, ես խօսիլ չեմ գիտեր:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Դէ՛, աղջիկս, չեն մերժեր. ըսէ՛, ինչ որ որտէ՛ղ կը բխի:

ԶՈՒԱՐԹ (սաստաւելով).— Ես շատ ուրախ եմ, որ պարոն Հայկունի կը գընահատուի բոլորէն. ուրախ եմ մա՛նաւանդ, որ իրեն պէս մեծ ուսուցիչի մը աշակերտելու բախտն եմ ունեցած: Պիտի ջանամ իմ վրաս դըրած իր յոյսերը արդարացնել: Այսքա՛ն:

ՄԱՐԳԱՐ.— Պուսօ՛, աղջիկս, լաւ խօսեցար:

ՀԱՅԿՈՒՆԻ.— Զեր կենացը, օրիորդ Զուարթ:

ԶԱՅՆԵՐ.— Կենացնուդ, կենացնուդ...

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Բոլորս ալ պիտի վաճառէինք անշուշտ, ո՛ր իր խօսքը ըսէր նաեւ յայտնի հրատարակուիչի եւ ճշրագրանքի խմբագրատան պարոն Նայիրեան:

ՆԱՅԻՐԵԱՆ (սասանց յայտադնելով).— Կ'ողջունեմ բարեկամս՝ պարոն Հայկունին, որուն անունը շողաց իրրեւ լուսատու ասող այս աշխարհի մթնամած հորիզոնին վրայ: Թող ներուի ինծի համեստօրէն յիշեցնել, թէ առաջին գրախօսական նուիրողը մեր թերթը եղաւ իր չափազանց ուշագրաւ հասարկն, երբ տակաւին թերահաստութիւն կը տիրէր անոր արժէքին շուրջ: Կը գրէինք այն ատեն, թէ կեանքի երկաթէ ուրիշ մը չնշեցնող դործերուն կը պատկանի ապագան: Զէինք սխալած: Արդարեւ, հայրենիքի լուսաշող իրականութեան բաց աչքերով նայող բարեկամս՝ պարոն Հայկունի, խոշոր նուաճում մը կատարեց, բանալով կամաւոր կոյրերուն աչքերն անգամ: Ես կ'ողջունեմ հայրենասէր դրողի իր մեծ տաղանդը: Առաջաւոր դիրքերու խիզախ ուղեւորը հանդիսացաւ ան եւ հասաւ տեղ մը, ուր կանգնած են արուեստի ու գիտութեան աշխարհահռչակ մեր մարտիկները: Ո՞ր մէկը թուել այդ լուսափայլ անուններէն.— Ռուբէն Մամուլեան...

ՎԱՐՆԱՆԵԱՆ (քերտէն խօսքը խլելով).— Ուրիշը՞ Սարոյեան:

ՌԻՐԱՐՏԵԱՆ.— Մայքըլ Արլէն:

ՄԱՐՏԻՆԵԱՆ.— Հանրի Թրուայս:

ՆԱՅԻՐԵԱՆ — Աքիմ թամբրով :

ՄԱՐԳԱՐ — Գալուսա Կիւլպէնկեան, մի՛ մոռնաք ջարիւղի արջան :

ՆԱՅԻՐԵԱՆ — Շարլ Ազնաւուր :

ՎԱՐԳԱՆԵԱՆ — Հանրի Վերնէօյ :

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Գառգու :

ՆԱՅԻՐԵԱՆ — Եւայն, Էւայն... Կարելի է դեռ երկարել շարանը հայազգի տաղանդներուն, որոնք Եւրոպայէն մինչեւ Ամերիկա մեր պարծանքը կը կազմեն : Անոնց շարքին կը բարձրանայ տառ նոր աստղ մը Էւա, յանձին Հէյկընի... Փա՛ռք բոլոր անոնց, որոնք հայ անունին դրօշը բարձր կը պահեն ի սփիռս աշխարհի... (Ծափահարութիւններ) :

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Սիրելի բարեկամներ, մեր մէջ ունինք ծանօթ առեւտրական պարոն Մարգարը, որ գրականութեան հաւատարիմ բարեկամ մը եղած է հինէն ի վեր : Պիտի չուզէի իր համեստութիւնը վիրաւորել, բայց քանի որ տեղը եկաւ՝ ըսեմ՝ պարոն Հայկունիի գիրքին հրատարակութիւնը կարելի պիտի չըլլար գլուխ բերել՝ առանց իր ընծայած նիւթական օվակցութեան : Կը խնդրենք, հետեւաբար, որ երկու խօսք ալ ինք ընէ :

ՄԱՐԳԱՐ — Մեր սեղանապետը զժուար վիճակի մէջ կը դնէ զիս : Ես խօսող չեմ. չուկայի մարդ եմ : Նախորդ ճառախօսներու փայլուն ուղիղմանքէն ետք, ի՞նչ կ'ուզէք, որ ըսեմ ձեզի : Պիտի փորձեմ, սակայն, տըպաւորութիւններս պատմել կարելի եղածին չափ հարագտաւ կերպով : Ասկէ ուղիղ երկու տարի եւ հինգ ամիսներ առաջ, բարեկամէս՝ Մարտինեանէն, հրաւէր մը կը ստանամ իր տունը հանդիպելու : Գործս կը ձգեմ եւ կ'աճապարեմ զովը երթալ : Գիտեմ, թէ երբ Մարտինեանը զիս կը կանչէ՝ կարեւոր հարցի մը համար է : Բարեկամս հարցին էութիւնը կը պարզէ եւ օր մըն ալ ինձի կը ծանօթացնէ խելացի աչքերով եւ վրձնական շարժումներով համակրելի երիտասարդ մը : Առաջին վայրկեանէն կը զգամ, որ բացառիկ անձի մը առջեւ կը գտնուիմ : Ապագայ ունեցող մէկը, որ շա՛տ հետունքը պիտի երթայ : Ձէի սխալած : Այդ երիտասարդը պարոն Հայկունին էր : Եւ հետագային, երբ առաջարկութիւն եղաւ ՆՏ հազար ռուբլի տրամադրել անոր զրքի հրատարակութեան համար — չ'արժեր անշուշտ խօսիլ այդ մասին —, առանց վարանելու հանցի եւ տուի : Աւելին ալ պատրաստ էի տալու : Ժամանակ մը ետք, մինչեւ իսկ պարոն Հայկունին գրասենեակս կանչել տուի եւ իմ պատրաստակամութիւնս յայտնեցի իրեն : Միշտ ըսած եմ. մեզմէ՛ օ՛չ ոք իրաւունք ունի ազգային պարտականութիւններէ փախուտ տալու : Գրողը իր գրիչով, գիտունը՝ իր գիտութեամբ, ունեւորը՝ իր զբաղմով ոչնչք է զոհողութիւններ ստանձնեն : Երջանիկ կը զգամ ինքզինքս, որ իմ շնչին օժանդակութեամբ՝ պարոն Հայկունիի յաջողութեան ու վերելքին կրցայ նպաստ մը բերել : (Ձայնը բարձրացնելով)՝ Միզի Հայկունիներ պէտք են ամէն ասպարէզի մէջ, որպէսզի օտարներու առջեւ մեր երեսը ճերմկցնեն. ցոյց տան սովորուն, որ քարէն հաց կանող հայը գիտէ նաեւ քարէն լոյս հանել : Եա՛տ ապրիս, տղա՛ս, Հայկունի գրիչը դալար... (Ծափեր) :

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Պարոն Մարգարը խօսիլ չեմ գիտեր ըսու, բայց հիանալի խօսեցաւ, մեր բոլորին սրտէն : Ինչո՞ւ չէք խօսեր, պարոն Հայկունի, զուք շատ գանդաղ կ'ընթանաք :

ՄԱՐԳԱՐ — Պարոն Հայկունիին մի ստիպէք, առողջութիւնը կը խանգարուի : ՎԱՐԳԱՆԵԱՆ — Պարոն Հայկունի, ի՞նչ պիտի ըլլայ անգլիերէն ձեր նոր վէպին խորագիրը :

ՀԱՅԿՈՒՆԻՒՄ — Դեռ չեմ որոշած :

ՆԱՅԻՐԵԱՆ — Պարոն Հայկունի, ի՞նչ ծրագրեր ունիք ապագային համար :
ՀԱՅԿՈՒՆԻՒՄ — Այնտեսակցութեան բազմաթիւ հրահրերը ստացած եմ ամե-
րիկեան հանդէսներէ :

ՎԱՐԴԱՆԵԱՆ — Սքանչելի :

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Պարոն Հայկունի, ինչպէ՞ս կը տեսնէք հայ գրականութեան
ապագան...

ՆԱՅԻՐԵԱՆ — Պարոն Հայկունի, ի՞նչ կը ժտածէք Հայաստանի գրականու-
թեան մասին :

ՄԱՐՏԻՆԵԱՆ (ընդմիջելով) — Յայտնի է, որ բոլորը այն անամբեր ենք պա-
րոն Հայկունին լսելու : Կը խնդրենք, որ Ամերիկա յմեկնած՝ իր վեր-
ջին պատգամը տայ մեզի :

Պահ մը երկիւղած լուսիւն կը տիրէ : Եւ պարտն Հայ-
կունի դանդաղորէն կը սկսի խօսիլ :

ՀԱՅԿՈՒՆԻՒՄ — Ենթահակալ եմ սիրոյ եւ դնահատանքի այն ջերմ խօսքերուն
համար, զորս ուղղեցիք ինձի : Կը հաւատամ ատոնց անկեղծութեան :
Բայց, չեմ գիտեր ինչո՞ւ, մահացողի մը դազապին առջեւ արտասան-
ւած դամբանականներու տպաւորութիւնը գործեցին վրաս : Մի՛ գար-
մանաք : Անվերազարձ մեկնող մըն եմ ես հիմա եւ այս բաժանումը վե-
րամիացում չունի այլեւս : Այսուհետեւ, գոյութիւն չունի ձեր ճանչ-
ցած Հայկունին. անոր տեղը գրաւեց Հէյլընը : Կողմունեմ իմ հին դըր-
չեղբայրներս, որոնք կը շարունակեն վառ պահել պայծառական օճախի
կրակը՝ արիւնհլով, հառայեղով, հայհոյելով եւ յուսալով : Անոնց աք-
ժանիքը աւելի մեծ է, քան իմ շահած փառքս : Կը զգամ, որ յուսախաբ
կ'ընեմ ձեզ : Դուք, վատտ՛ եմ, ուրիշ բան կը սպասէիք : Հաւանօրէն
վերջին անգամն է, որ այսպէս կ'արտայայտուիմ : Հաւանօրէն այսու-
հետեւ ստիպուած ըլլամ բուն դերիս մէջ մտնելու՝ պաշտպանելու հա-
մար անգլիագիր Հայ հեղինակի համբաւս : Գիտեմ, այդ դերը պիտի
չոյ՛ն ձեր ինքնասիրութիւնը : Ի՞նչ փոյթ. այսօր կ'ուզեմ, որ ճշմար-
տութիւնը լսէք իմ բերեցս : Կը բաժնուիմ ձեզմէ՝ հողիս մէջ անհուն
վիշտ ու ափսոսանք. ներեցէք ինձի՝ իմ այս յաջողութեանս համար :

Կը տիրէ ճնշող լուսիւն. բոլոր գլուխները խոնարհած
են : Պահ մը այս վիճակը կը շարունակուի, մինչեւ որ լուս-
իւնը կը խզէ տանտէրը :

ՄԱՐՏԻՆԵԱՆ — Իրեն յատուկ համեստութեամբ պարոն Հայկունի փորձեց
նսեմացնել իր արժէքը, բայց չյաջողեցաւ : Այնարհէն վաւերացումս
արժէք մը անկարելի է թաքցնել :

ՆԱՅԻՐԵԱՆ — Պարոն Հայկունի մեզի կանխիկ խոստումներ չտուաւ, բայց
մենք վստահ ենք, որ իր բարձր հեղինակութեամբ թանկագին ծառա-
յութիւններ պիտի մատուցանէ մեր ազգին :

ՎԱՐԴԱՆԵԱՆ — Պարոն Հայկունի չի մոռնար անշուշտ Գրասիրաց Միութիւ-
նը, որուն կէտ-նպատակը այնքան մօտ է իր սրտին :

ՈՒՐԱՐՏԵԱՆ — Պարոն Հայկունիին պէտք չկայ յիշեցնելու, թէ ի՞նչ կը
սպասուի իրմէ : Ան քաջածանօթ է մեր կրթական, մշակութային եւ
հանրային գործերու տխուր կացութեան :

ՄԱՐԳԱՐ .— Դուք պարոն Հայկունիին ձգեցէք...: Ես չեմ կասկածիր, թէ
ինք պիտի դառնայ մեր առաքեալը Ամերիկայի եւ ամերիկահայ բար-
գաւած գաղութին մէջ:

ՄԱՐՏԻՆՆԱՆ .— Մերիկի բարեկամներ, պարոն Հայկունիի ժամերը թանկա-
զին են: Ձեր բոլորին անունով խորին շնորհակալութիւններ կը յայտ-
նեմ, որ իր ներկայութեամբ պատուեց այս սեղանը եւ հոգեկան վա-
յիքի քաղցր պահեր պարգևեց մեզի: Կրկին բարի ճանապարհ կը մաղ-
թեմ իրեն, վստահ, որ զինք տեւաբար պիտի գանենք աւելի ու աւելի
բարձր գիւղերու վրայ:

ԲՈՒՐՇ (աւփ եւ բաժակներ ի ձեռին) .— Բարի ճանապարհ, պարոն Հայ-
կունի եւ յաջողութիւն...:

Մի առ մի կը քօքուեմ Հայկունիի ձեռքը եւ կ'ուզուիմ
դէպի Ելքի դուռը: Մարտինեամ կը հետեւի հիւրերուն:

ՄԱՐԳԱՐ (դրան մէջէն) .— Պարոն Հայկունի, չափազանց ուրախ կ'ըլլամ,
եթէ մեզի ալ այցելելու պատիւը շնորհէք: (Կը մեկնի):

Հայկունի եւ Զուարթ առանձին կը մնան:

9.

ԶՈՒԱՐԹ .— Կը ներկէք, ես չկրցայ արտայայտել ինքզինքս. այնքա՞ն բաներ
ունի ըսելիք, բայց երբ խօսք առին՝ շփոթեցայ, մոռցայ ըսելիքներս:

ՀԱՅԿՈՒՆԻ .— Գու երկու խօսքդ, Զուարթ, ամէնէն աւելի յուզեց զիս:

ԶՈՒԱՐԹ .— Սքանչելի ազրում ըլլալու է զգալ, որ ամէնուն հիացումին ա-
ռարկան էք. կեցած էք բարձրը եւ բոլորը ձեզ կը դնահատեն, ձեզմով
հպարտ են: Ի՞նչ լաւ խօսեցան ամէնքն ալ:

ՀԱՅԿՈՒՆԻ .— Այո՛, լաւ խմբերդ էր, միտերան, ներդաշնակ:

ԶՈՒԱՐԹ .— Եւ դեռ սովորութիւն ունէիք, կը յիշէ՞ք, պնդելու յաճախ, թէ
հայերը չեն դիտեր խմբերդ կազմել:

ՀԱՅԿՈՒՆԻ .— Գիտեն, պայմանաւ, որ օտարը ըլլայ չափ տուողը:

ԶՈՒԱՐԹ .— Միշտ նոյն թերահաւատն էք:

ՀԱՅԿՈՒՆԻ .— Ընդհակառակը, ես հաւատացեալ եմ, կ'ուզեմ հաւատալ մեր
սուրբերուն եւ սրբութիւններուն, բայց կը տեսնեմ, որ մենք սուրբ
չունինք: Մենք առանձին սուրբեր չենք կրնար ստեղծել. ատոր համար
ալ ուրիշներ մեզի պարտազրած են իրենց այլանուն եւ այլատեսակ
սուրբերը: Մենք կարօտ ենք ուրիշին հիւսած պսակին, ուրիշին վկա-
յութեան ու վկայականին, որպէսզի խոնարհինք պաշտամունքի սե-
ղաններուն առջեւ:

ԶՈՒԱՐԹ .— Կը չափազանցէք...: Դժգո՞հ էք ձեր յաջողութենէն:

ՀԱՅԿՈՒՆԻ .— Դժգո՞հ...: Ո՛չ: Բայց վախով կը դիտեմ զայն: Յաջողութիւ-
նը ճակատագրական, ահաւոր ուժ մըն է, երբ քու միջավայրէդ դուրս
կը հանէ քեզ, կ'առնէ-կը տանի վարար դետի մը պէս ու չես կրնար
կանգ առնել, չես կրնար ետ նայիլ, կը դառնաս ստրուկը անոր բռնա-
կալութեան սուկիէ զահին:

ԶՈՒԱՐԹ .— Տարօրինակ է, մէկը, որ կը վախնայ յաջողութենէն:

ՀԱՅԿՈՒՆԻ .— Այո՛, Զուարթ, ես կը վախնամ իմ յաջողութենէս:

ԶՈՒԱՐԹ (խորհրդաւոր) .— Կը վախնաք ամէ՞ն տեսակ յաջողութենէ:

- ՀԱՅԿՈՒՆԻ (Ժպտեղով)** .— Օ՞ր, ո՛չ անշուշտ:
- ԶՈՒԱՐԹ (յանկարծ վնասկան)** .— Պարոն Հայկունի, կը յիշէ՞ք, ժամանակին ինծի կարեւոր հարցում մը ուղղած էիք, շատ կարեւոր հարցում մը, որ կապ ունէր ձեր եւ իմ կեանքին հետ:
- ՀԱՅԿՈՒՆԻ** .— Ինչպէ՞ս չէ:
- ԶՈՒԱՐԹ** .— Ուշացայ պատասխանելու, յանցաւոր եմ: Ի վիճակի չէի, բայց այսօր...
- ՀԱՅԿՈՒՆԻ (ընդմիջելով)** .— Ո՛չ, աւելի լու է, որ լուռ մնաս դարձեալ:
- ԶՈՒԱՐԹ (զուլթը կախելով)** .— Մի՛ վախեալ, ձեր սպասած պատասխանն է:
- ՀԱՅԿՈՒՆԻ** .— Գիտե՛մ, քիչ առաջուան զովասանքներուն վերջարանը՝ դեղիցիկ խօսքերու ընծայումէն ետք, կենդանի ձօնը, կեանքով ու շունչով լիցուն դեղիցիկ ընծան: Ծիւղատոր համար պէտք է, որ լուռ:
- ԶՈՒԱՐԹ** .— Ձե՛մ հասկնար ձեզ:
- ՀԱՅԿՈՒՆԻ** .— Ահա կեչած ես դիմացս, անհունորէն սիրելի, քաշող, հրապուրիչ, իբրև ժարմնացած Հայ լեզուն՝ երբեք այսքան մօտ չէիր եղած ինծի...: Բայց որքա՛ն հեռու եմ ես հիմա քեզմէ, որքա՛ն հեռու...: Հայկունին դոյութիւն լուրի սյուեւ, Հայկունին մեռաւ. ապրողը հիմա Հէյկունն է:
- ԶՈՒԱՐԹ** .— Երկուքն ալ նոյն անձը չե՞ն. դուք ազատ չէ՞ք ձեր ընտրութիւնը ընելու:
- ՀԱՅԿՈՒՆԻ** .— Ո՛չ, ես ազատ չեմ այլեւս:
- ԶՈՒԱՐԹ** .— Ո՞՞վ կը բռնէ ձեզ:
- ՀԱՅԿՈՒՆԻ** .— Խարտիչահեր եւ կապուտաչուի քու հակառակորդը:
- ԶՈՒԱՐԹ** .— Ներողութի՛ւն, չէի դիտեր, թէ դուք այդպիսի մէկը ունիք ձեր կեանքին մէջ:
- ՀԱՅԿՈՒՆԻ** .— Այո՛, ան, Յաջողութիւնը...:
- ԶՈՒԱՐԹ** .— Պարոն Հայկունի, մի՛ հեղձեք դեմ:
- ՀԱՅԿՈՒՆԻ** .— Ամբողջ հողիովս կը սիրէի քեզ՝ ինչպէս իմ մայրենի բարբառաւ: Ձեր երկուքը մէկ անձ եւ մէկ մարմին էին իմ աչքիս. կ'ուզէի քեզի տալ իմ լաւագոյնս, իմ ոգեկան բովանդակ հարստութիւնս...: Ան ինձմէ խլեց այդ բոլորը...:
- ԶՈՒԱՐԹ** .— Բայց ո՞՞վ:
- ՀԱՅԿՈՒՆԻ** .— Ան՝ խարտիչահեր եւ կապուտաչուի քու հակառակորդը...:
- ԶՈՒԱՐԹ** .— Պարոն Հայկունի, լուրջ չէք խօսիր հետս:
- ՀԱՅԿՈՒՆԻ** .— Ընդհակառակը, շատ լուրջ եմ, լալու չափ լուրջ...: Իմ ձեռքէս խլեցին ա՛յն՝ որ կրնայի տալ քեզի: Աւա՛ղ, ձեր ճամբաները այսուհետեւ կը բաժնուին իրարմէ:
- ԶՈՒԱՐԹ (տխար եւ բեկուած)** .— Իրաւունք ունիք. ես արժանի չեղայ ձեզի. ես յանցաւոր եմ...:
- ՀԱՅԿՈՒՆԻ** .— Ո՛չ ոք յանցաւոր է, Զուարթ, յանցաւորը ձեր կեանքն է, ձեր քմահաճ, ձեր անհաստատ կեանքը: Մնաք բարով:

Հակումի կ'ուզուի դէպի դուրս եւ կ'անհետանայ:
 Զուարթ կը մնայ աշտանացած, լուռ, աչքերուն մէջ արցունքի կարծիւնք:

Վ Ա Ր Ա Պ Ո Յ Ր

(Շար. 4 եւ վերջ) Մ. ԻՇԽԱՆ

ԾՈ՛Վ ԻՄ, ՀՈԳԻ՛...



Գիտէի թէ տեղ մըն էիր
 Մօտերը իմ,
 Եւ ես արգէն քու շառայդ կ'ունկնդրէի,
 Եւ ջուրերուդ բոյրն զգլխիչ
 Կ'ազարէր զես,
 Բայց չկայի՛ր, Ծո՛վ իմ, հոգի՛:

— Եւ վերապահ շրթները իմ,
 Արմէններու նաւին մտան
 Սպասումի արեւներէն մաքեր էին...

Տագնապին մէջ այս անորոշ,
 Իմ խոտորած երթը սանձող
 Բացերուն մէջ՝ ահա՛ յանկարծ
 Պատկերացար իբրեւ բովչանք,
 Եւ քու կողքիդ բուսցաւ թէ
 Փայլատակեց վառայ ծովում տեսիլն անեղ...

Եւ պահ մը ետք,
 Երբ լոյսերով պատարուն
 Աչքերը իմ կրկին բացի,
 Բացը՝ ծլած մարմինիդ,
 Ահա կրա՛կ կը դառնար,
 Եւ կրակը, Այվագեանի ալիքին պէս իններորդ՝
 Իմ վարարած մարմինէն ներս կը խուժէր...

Հիմա արդէն,
 Վերադարձող արագիլի թեւածումներ
 Շուտն իրենց դեմքիս վրայ կը նետեն,
 Ու գանկիս մէջ դաշն բզզին.
 Ապափնած հիւանդի մը տարփանքով,
 Հայրենաբարձ իբրեւ խեղճ՝
 Կը մաքրուիմ համբոյրներու երայրեով,
 Ու երբ բափով այսպէս կ'իջնեմ ալիքերուդ,
 Կը տռչորիմ ես մայն բափով տեղագրիմ,
 Ու կը դողա՛մ, Ծո՛վ իմ, հոգի՛, ի՛մ ազու,
 Ձգողական հմայքին դէմ խորհերուդ...

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

Յ. ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

— Արտակ Գասպարեան:
 Սարսափած՝ Սոնան լքեց սենեակը, նոյնիսկ շառնելով բարեւը երիտասարդին, որ երեք տեղէն կարմիր մտմով կնքուած նամակ մը յանձնեց Մարանին ու մնաց լուռ: Մէկ ուշքով հետեւեր էր մեկնող աղջկան, միւսով՝ շափեր տեսարանը: Տիկին Գոհարեան խելք ըրաւ անոր աթոռ մը հրամցնելու:
 — Նստեցէք, պարոն Արտակ:
 — Ծնորհակալ եմ:
 Քնստաւ: Վասնզի Սոնային շրջանակին մէջ անիկա կը մանկանար, կորսնցնելով պաղարիւնն ու լրջութիւնը:
 Նամակին վրայ իշխանական զինանշան մը կամ ատոր մօտ բան մը, երեք լիզուներով: Մարանը պատռեց զայն:
 Մազաղաթի գոյնով մեծկակ երես մը թուղթ, կէսը տպագիր, տիտղոսաւոր ու նշաններով:
 — Իշխան Պողոս Արծրունի:
 Այրերը ուղղեցին իրարու իրենց նայուածքը: Տիկինը, ափ է բերան, հասկնալու տենդին մէջ տարօրէն եղկելի:
 — Ինչո՞ւ դուք բիրիք այս նամակը, — հարցուց Մարանը Արտակ Գասպարեանի, զրեթէ յանդիմանական լեշտով մը:
 — Պիտի դայի արդէն, — պատասխանեց երիտասարդը, առանց անդրադառնալու ըսածին:
 Մարանը հանեց ժամացոյցը:
 — Այս ժամո՞ւտ, հո՞ս:
 Լուեց. ժամացոյցը կախ՝ մասներէն:
 Անոր դիմագիծը առաւ դործի մարդու խտուրթիւն ու դժգոհանք: Բանսձեւուած մեղադրանքը՝ յստակ:
 Արտակ Գասպարեան, վարիչը ծխախոտի անանուն ընկերութեան մը նորահաստատ մէկ գործարանին, որուն դրամազուտիին ստուար մասը կը պատկանէր Մարանին: Արտակ Գասպարեան իրա-

ւունք չունէր ուրիշներուն դրամովը դարձող գործ մը այսպէս թե-
թեալի բռնելու ու օր ցերեկով, գործատուն ձգած, վազելու...
պագումներու ետեւէն: Չըսաւ անշուշտ այս նախադասութիւնը,
բայց անոր նայուածքէն պարզ էր բանաձեւը մեղադրումին:

Ելաւ ոտքի: Առանց նայելու աջ ու ձախ, ուղղեց ինքզինքը
դուրս: Անոր հետ կը թուէր դուրս կլլել Տիկին Գոհարեանի աչքե-
րուն սիւնէթը Իշխան Պօղոս Արծրունիի, հասած փեսացու ու ապա-
զայ լո՛րտ: Սահակ Պարզեւեան, մատներուն ծայրովը վար էր ըրած
կողքը, շտեմելու համար այդ անքանքար երկտասարդը, որ իր յա-
մառ հաւատարմութեամբը շատոնց կը նեղէր դիւրագայթ գրադէտը:
Արտակ Գասպարեան, լուրջ, վճռական, ուրախ՝ Սոնային մեկնու-
մով:

Երբ Մարանին ինքնաշարժէն աղմուկը հալեցաւ մօտիկ հեռա-
ւորութեան մէջ, Սահակ Պարզեւեանին բնակարանը կը դառնար իր
մետաղեայ տիրութեան:

Իտինքը սկսած:

Օրը, պարաստ չուելու:

Սպասուածները՝ նետուած անտոյգ իրադարձութեանց:

Անգա կէօրկէօլնա, Տիրան Տիրանեան:

Ո՛ւր, ե՛րբ:

Երբ բացաւ անիկա աչքերը, դէժը գտաւ, առանձին, Արտակ
Գասպարեանը:

Ն.

Պարզ ու վերսպահ երիտասարդ մըն էր այդ Արտակ Գասպար-
եանը:

Նորահաստատ ծխախոտի գործարանի մը ընդհանուր վարի՛չը,
այսինքն՝ Եղիպտոսի համար մեծ տողանդի մը իրաւատէ՛րը, ինչպէս
նաեւ պաշտօնական սիրահարը Սոնա Գոհարեանին՝ տարիներու զիծի
մը վրայ:

Գանձաւոր անոր դիմադէրը՝ կ'արտայայտէին քաղցր կորով
մը ու պարկեշտ վճռականութիւն մը, որ նուէրն է մեր յաջողու-
թեան, դժուարին տարիներու կորովէ: Դիմազկուն, բայց համեստ այս
կեցուածքը տարբեր է ամբարհաւան ու վիրաւորիչ կերպէն, որով կը
պարզուին հարուստ ծնած ու մեծցած երիտասարդներուն տուրքերը,
մեծ շափով գրամին արգասիք: Կորովի, վճռական, ուղղուած դէպի
գործնական հորիզոններ:

Հանդարտ, գուռայ, կոկիկ՝ անիկա աննահանջ աշխատաւորն էր
իւր գիւրգիւն, ու դազանագօ՛ւտայ մը, ինչպէս որակեց դայն օր մը
Սահակ Պարզեւեանը, հիացած՝ ճակատագրին դէմ — գազա՛նը —
անոր կորովէն: Ու հասած առաջին աստիճաններուն:

Տղա՛ն՝ սնանկ ու ինքզինքը ավարթումանի մը չորրորդ յարկէն
վար նետելով մեռած ակնավաճառի մը, այս իսկ դժբախտութեամբ
անիկա սրբագրուած էր պատանեկան խակութեան հաստ ու պոռոտ
առատութենէն ու ըրած ինքզինքը մեղով: Կը պտըտէր անիկա խոր ու
քաղցր տրամութեամբ մը հովանաւոր, կարծես պահելով մշտադոյ,

ալքին առջեւ ահաւոր տեսարանը ջախջախուած հայրիկին, դռնկէն կիսուած կապուտի մօտ արեան շղարշով մը գատնելով ինքզինքը մարդոց անվախճան հոգեբէն:

Այդ հայրիկին ողջուցը, անիկա առած էր ընթացիկ այն կըրթութիւնը, որով կը պայմանաւորուի եզրպատահայ մեր երիտասարդութեան իմացական յորինուածքը,— երեքէն չորս լնգու, տոմարակալութիւն, սրատեսութիւն, ճկունութիւն, թափանցում՝ ու մեծ լափով՝ պատուածութիւն. այսինքն՝ նկատմանբու հանդէպ անկախութիւն ու առեւտրական պարկեշտութեան դէմ անպարկեշտութիւն: Վերջին այս ստորոգումները արդիւնք են մեր բացառիկ, գաղթական ճակատագրին ու, մասնաւանդ՝ միջավայրին, որ սեմական խորութեամբ, բարդութեամբ կը կնքուարէ մատաղ հոգիները: Պոլսոյ մէջ, դարաւոր ընտելացում մը պատանիները կը կապէ իրենց հօրը արահետին ու ծաղը կը ուտեղծէ: Գահիրէի մէջ աւաղ է ամէն բան, այսինքն՝ իսխուտ: Ուր ամէնէն առաջ հոգին անոնց, որ հոն են նետուած ճակատագրին թեւերէն: Անոնք, որ իրենց մասնեղով կամ ուղեղին ուղեղովը հաց հանեն պիտի հողէն ու օղէն, անոնք պարտաւոր են լախօրէն մարգել այդ պայտարանները ու նետուի կրկէս, բազմապիսակ մրցորդներու բանակին մէջ ու դիմանալ ամբողջ շէր ու կասկած արարին, ամբողջ խելք ու խարդաւանք Հրեային, յոյնին, որ ահաւոր իր ազգայնականութիւնը կը տարածէ իր սպրանքներուն ու շուկային: Ու դիմանալ տակաւին ամէն ազգի յղեւած ու հզօր բախտախնդիրներու, գործի իշխաններու, անզլիացիին, որ կ'արհամարհէ ու Ալեքսանդրին նման սուրով կը կտրէ հանգոյցները, խաւացիին, որ կը տաքցնէ իր չրջպատը եւ միաններուն, բոլորն ալ պաշտպանուած մեծ պետութեան մը փառքովը, հեղինակութեամբը:

Արտակ Գասպարեան կարծրացուց իր պայտարանները, բայց մնաց թերի: Վասնզի հօրը կանխահաս մահը զայն նետեց շուտով մրցման կրկէսին: Անիկա ստեն շունեցաւ երկրորդական ուսումը կատար հանելու: Գործնական, նեղմիտ, միայն ու միայն գրում հետապնդող այդ գաստիարակութիւնը — անհրաժեշտ՝ այդ մարդերուն — չհասաւ անոր մէջ իր վճռական բիւրեղացումին: Հացի կարօտ՝ անիկա սկիզբը բրտու կեանքին, իր ցեղին մեծատուններուն ընթացիկ ճամբովը: Քաղաքական պայմաններ, պատերազմին ահաւոր պահանջը մարդու, նպաստեցին անոր: Ձինադազարէն տարի մը առաջ, անիկա իր մուտքը ունեցաւ շատ մը գործերու մէջ,— քարտուղար, յանձնակատար, բանակի հայթաթիւններու թարգման, զինուորական տնտրումներու եւ զնումներու ճիւղին մէջ ճարպիկ ալ միջնորդ: Նիւթական այս տենդին կը զուգապիպէր հոգեկան խորունկ խռովք մը: Անոր երիտասարդութեան առաջին յոյզերը մաս էին առած այդ օրերու մեր ցեղին հզօրագոյն տաղնապէն, որ հազարամեայ գերութեան ընթացիկ անտէր աշխարհի սփիւռններու մեր եղբայրներուն այնքան կանխահաս ու պատիւ: Այդ երիտասարդութիւնը, այդ կայծակումին ու բորբ խռովքին մէջ դարձնուած՝ կը սիրէր իր ցեղը ալլապէս խոր, հաւատաւոր ու մոլեռանդ ու տարբեր էր իրեն յաջորդ սերունդէն, որ պատրանքին ահաւոր իր սթափումէն, ինքզինքը գտաւ խորտակուած իր հոգեւորէն ու ծնեց մէջքը դէպքերուն հովին: Հիմա զփուար է իր ազգը սիրելը: Այդպէս չէր այն օրերուն: Ու եղաւ անիկա իր ազգին ճակատագրին հետ հազորդ, այսինքն՝ խանդավառ տղայ:

Մինչև Մարանը, անոր դրամով կանգուն գործարանը, նամբան, — պա՛րզ :

— Սոնա Գոհարեանը :

Նրբեմն աղջիկ մը վճիռ մըն է մեր ճակատագրին :

Միտմիտ, խանդավառ, բայց սեռային մարզէն զիջ մը վեհերոտ՝ անիկա խօսած էր առաջին անգամ Սոնային հետ, այս օրէն տարիներ առաջ, յիշատակի ու սուգի հանդէսի մը մէջ, կատարուած ընդարձակ զոհաւորումոյ, սուգի եւ բողոքի իրքեւ ցոյց, ապրիլեան մեր մեծ զոհերուն տարեդարձին առիթով : Որուն մէջ, Սահակ Գարգեւեան, գիտարար ատենախօսը, ըրեր էր մէկը իր խորունկ ու հոյակապ տոննաբանութիւններէն, յուզեր՝ Հազարաւոր բազմութիւնը, իսկական խռովք անկեղծ պատգումին : Անոր բառերուն համատարած կրակին մէջ մարմին կ'առնէին ինկող գրադէտներուն, մտաւոր մշակներուն ու յեղափոխական գործիչներուն սրբազան նկարները, բոլորն ալ տրուած հոյակապ կարկառով, անձնական աղերսին անփոխարինելի իրականութեամբ : Ու անոր բառերուն մուխին մէջ կը թանձրանար ՅԸԻ ամբողջ ողբերգութիւնը, խոր ու սրտատուչ պատկերներու դրուագի մը վրայ, արագ, ուժգին, հեռապառ ու անհաս, մարզը մինչեւ ընդերքը դալարող : Պերճախօտութիւն չէր ատիկա, այլ անոր անձին հրթիռ դառնալը, ա՛յնքան՝ որ հասարակութիւնը կը դադրէր ինքն իրմէ, թախճահար իր բեկումէն, քաշուած անոր ետեւէն, յոյսի, երջանկութեան, աղատութեան դերագոյն համապատկեր մը մինչև : Ու կը սինէր անիկա մեր հերոսներուն հոգիները իբր հէնքը մեր նոր երազին : Ու կը զմբէթէր անիկա անոնց զոհողութիւնը կառոյցին վրայ մեր նոր արբայութեան : Ու կը բուրվատէր իր ծիրանի սուզը դէպի անոնց յիշատակը ու անըմբռնելի մահը, մա՛հը մեծերուն ու փոքրերուն, անուններով եւ անձնական կապին լեզուութեամբ բարբախուն, ոգեկոչելով մեծ ստուերները բոլորին, անձուրտա՝ այս աշխարհին վրայ, խողխողած այն ճամբուն իսկ վրայ, որուն գործատուներն էին եղած : Ու կը սրբացնէր բոլորը, բոլո՛րը, նոյնիսկ անո՛նք, որոնք քրազի կատաղութեան մէջ դանակ էին շարժած իր վրայ, հալածած զինքը կիսազունդէ կիսազունդ, անմահ ապաշախ արցունքներով աւելնով մեր սկարութիւններն ու մեր քննները, մեզ հրաւիրելով պայծառ պատկերին ահաւոր, ցնորեցուցիչ հըմայքին — հայ ազատութեան : Խօսքին զարհուրելի ուժը, կորուստին անպարագիծ ընդարձակութիւնը, հեռուններէն զմբէթուող արշալոյսին ակնխափող առքը, մթնոլորտը ու սրտէն լսելի յաղթանակին առաջին զօղանջները, մեր եռազոյն ու մեր նոր Հարստութիւնը խելայեղ բանի մը վերածել էին այդ սգահանդէսը : Լացին մարդերը, դրագէտը : Արտակ Գասպարեան այդ արցունքին մէջէն ու այդ պահին հրթիռէն էր խօսած գրագէտին «չուքը» կազմող Օբիտորին : Միտմ՛ծ :

— Այո՛ : Եթէ այսօր իմաստ մը կայ տակաւին այդ բառին մէջ, աւելի ճիշդ՝ այն օրուան իմաստը : Վասնզի յետպատերազմեան սերունդը այդ բառին տակ զետեղած է ուրիշ զգայութիւն :

Այդ օրէն, անձանձիւր, յիմար, կապուեցաւ անիկա դրագէտին, սրտատուչ, յուսահատեցնող հուատարմութեամբ մը, իր եռանդին մէջ, քառապատկելով իր դատողութիւնները, ստեղծելով իր խորէն նոր շնորհներ, Պարգեւեանի նախաբերած երակներէն : Զօրաւոր զգացումներ կ'ընեն այս հրաշքները : Ծուկայի տղայ՝ անիկա կորովով ուրացաւ ինքզինքը, ուր միտքը գերազան է միւսը : Հետաքրքրուեցաւ

բուրբ աչն հարցերով, որոնք գրազէտին տաղանդէն փշրանքներ ունէին իրենց ծաղեհրուն մէջ, — հրատարակութիւն, գրքոյկ, յառաջարան, թերթ, եւ այլն: Ու երեւցաւ ամէն քիչ-չատ հանդիսաւոր առիթի, ուր, ժամանակի տնդը, պատերազմին առաջացուցած անարգար պայմանները, մեր ցեղին հանդէպ ծրագրուած ոճիրը մեզ կ'ընէին նեղարար, լքուն, իրարու դէմ լարուած ու կարօտ: Կարօտ՝ առնուազն բաւերով գրօտնքին: Այս յարատեւութիւնը, յուզիչ՝ որքան թափանցիկ, շահագործուեցաւ մեծատաղանդ գրազէտին ընկալեալ անփութութեամբ: Գուք տարտամօրէն ծանօթ էք նեղութեան օրերուն, որոնց մէջ գրազէտը լքուեցաւ իր «յոզած» բարեկամներէն: Այդ շրջանին Արտակ Գասպարեանը փոխարինեց պակասդ գուրդուրանքը: Ու անուն շունէր այդ անօրինակ զոհողութիւնը տղու մը կողմէ, որ կ'աշխատէր շարաշար, կը վազէր հոն՝ ուր շահու մը ստուերը դողար, կը բիւրապատկէր ինքզինքը՝ հասնելու համար կարիքներուն զոյգ ընտանիքի, — իր տունին՝ ինչպէս գրազէտին: Ու ըրաւ, ինչ որ կարելի է մարդկօրէն, առանց ծիծաղելի իյնալու, պահելով իր վարկը, զգեստները, մայրն ու թոյրերը, պատշաճ յարգանքի մէջ ու պահելով անյադուրդ փորը մեծատաղանդ մակարոյթին: Անսահման էր այս նուիրումը: Իր վատտակը — դրամին առատ օրերն էին — անիկա հոսեցուց Գարգիւեանին ոտքերուն, որուն անգարծան արկարութիւնը դրամին հանդէպ գաղտնիք չէր անոր: Ծախելը հանոյք է շատ մարդոց — ու աղբիւրը՝ շահին, քիչ կ'ըլլաւ: Առատութեան այդ մէկ-եքուտ տարին ուրիշներ սեպակահան գործ հիմնեցին: Արտակ Գասպարեան, տխուր սէրով մը կը հետեւէր մեծատաղանդ այն թերութիւններուն, սրոնք Գարգիւեանի ձախողանքը պայմաններ էին, ու կը ցաւէր տաղանդին չափ, անոր տկարութեանց փաղանդին: Իայց մնաց զգոյշ, յարգասլից եւ հլու, մանաւանդ ուղիղ՝ գրազէտին, ինչպէս անոր ձեռմակ գլուքին՝ դէմ: Անիկա վայելեց անոր լիակատար համակրութիւնը, տնոր շունչին տակ, սորվելով բանօգուտը՝ ձէրէր, ու արժանաւոր, խանդավառ հիացումներ (գրազէտը այս տարազներուն տակ կը զետեղէր զուցէ իր երազները, ուխտերը, ամպարագիծ իր եռանդը, երբ ունէր տարիքը երիտասարդին): Անոր քաջալերովը մղուեցաւ խօսք առնելու, զանազան առիթներով սարքուած երեկոյթներու եւ մտերմիկ հաւաքոյթներու մէջ, միջկուսակցական եւ մարտնակրթական մարզերէ: Կազմակերպեց հայ-արիները, ինչպէս նաեւ ղեկարուեստի անունով զանազան միութիւններ, չինայելով ժամանակ, սիրտ ու դրամ, ըլլալով մղիչ ուժը իսկապէս բանօգուտը այդ գործունէութեան: Հանրանուէր ու ազնուացուցիչ ասպարէզ, համաբաղաբացի կեդրոններու մէջ այնքան անհրաժեշտ: Ձոր կ'ուրանան դրամին ծառաները ու ծիծաղելի կ'ընեն անարբագրելի ազգայինները: Անիկա միութեան գետին մը յարգարեց ընդմէջ պղերգ կամ շահագրաւ անտարբերներու (չըսելու համար չէզոքներու) ու կուսակցական կարգապահ սրտեռանգն զինուորներու: Հետեւելու համար Գարգիւեանին, չյարեցաւ կուսակցութեան մը: Ամէն տեղ ու ամէնուն հետ: Մեր հոգին անարգասիք հող մըն է, արօրէն հետու: Մշակեցէք զայն ու պիտի ունենաք ձեր ուղածէն աւելի: Կապուիլ՝ սահմանուիլ ըսել է: Սահակ Գարգիւեան այս տարազները հնարած էր իր մեկուսացումը արգարացնելու համար: Արտակ Գասպարեան կը հաւատար այդ տարազներուն: Յոյց տուաւ ինք, սրամտութիւն, անհասանում եռանդ, արուեստի հաստատ զաշարանքներ անգամ, —

բոլոր այն բաները, որոնք դիւր էին Պարզեւեանի շիջերուն: Անիկա իր գիշերները յատկացուց ջուրթակի, հեռաւոր բաղձանքներով, որոնց մասին զգուշացաւ բացուելէ: Դաշնակ ու ջուրթակ: Հարկաւ:

— Սոնա՞ն, այս ամէնուն դէ՞մ:

— Օտա՛ր, բոլորովին:

Արտակ Գասպարեան, Պարզեւեանի խողովակովը ըրաւ նաեւ ծանօթացումը Մինաս Մարանին:

Մարզերու անմիջեւ ճանաչող, պանդոկապետը, մէկ-երկու շքափումով, գուշակեց երիտասարդին ընդունակութիւնները, ինչպէս մատաղատի անոր քրոջը հազիւ սկսած գեղեցկութիւնը: Անկէ պաշտօնականաւ աղջիկներուն համար, պակաս պիտի չլլայան արժանաւոր տղաներ: Լայնքին լարուած իմացականութիւններ առանց հաշիւի թայլ շնն տուներ: Դրամը ամէն մարդու մէջ կը ստեղծէ արքանի, հեռանկեալ զըստարանքներ: Ու զուր անգը չէ, որ կազմակերպուած սրիկայութիւնը միշտ կը յարգուի: «Պատուական» ու «պատուաբեր» ազգայինը, մի մոռնաք, իր տունին մէջ իսկ կը պահէր օրբասուն օրիորդներ:

Ատենը եկած է, որ դիտնաք, թէ ի՞նչ անմեկնելի դիւրութեամբ, քսանամենի աղջիկներ, սանկունանկ ծագումով, իւրացուցած էին զանակալութեան նոր ձեւը, որ պատերազմին ու տարագրութեան փոքրագոյն նուէրը եղաւ մեր աղջիկներուն, պոսեցի կամ դաւառացի, բախտին համ մէկ նայուածքովը ազատած գեհնէն ու ինկած Յգիւտտա: Պատուական ինքնավաճառումը չէ տսիկա, զգացապաշտ ու յիմար, որ կիրքին կիկլունին հնազանդ, պիտի քուրի գոհի գոհի, մինչև որ հիւանդութիւն մը խորանէ դանոնք: Պաշարի ապրանք, մարմինը այդ յիմար կոյտերուն: Ա՛յլ, տիրական նուաճում մը, գործադրուած՝ անմիջեւ տաղանդով — վասնզի ամէն տեղ պատկուեցաւ յաջողութեամբ — խոր ու հսկայ մարզերու վրայ, ձեռներէց ու կազմակերպիչ այրեր ասոնք՝ որոնք մեծատարած հարատուութիւններ էին հիմնած իրենց կորովի տարիներուն ու վաթսունէն ետքը: Մանուկի նման, ինկած թափին տակը պարմանի այդ շնորհներուն, հերքելով իրենց վաստակաւոր, զարաւոր նախանցեալը, իրենց թոռներուն ալ տարիքէն պակաս այդ աղջիկները տունելով ներս իրենց պարտաներէն իբր սենեկապանուհի, զուք ճշգրեցէք — թագուհի, ենթարկելով այդ նորածն գեղեցիկներուն իրենց կիկներն ու տղաքը, եկեղեցիին պատգամը ու ազգին խղճմտանքը:

Ի՞նչ էին հաշիւները Մինաս Մարանին, հիմներու համար ծխախոտի նոր գործարանը: Մարդիկ թափանցել կարծեցին, մեկնելով տարիքէն, վերայի Մեյիսէին մատակ կատաղութենէն, Գասպարեանին խորապէս հրապուրիչ քրոջէն: Ո՛վ ինչ գիտնայ: Ոմանք ուզեցին օգտագործել խորունկ նախատինքը — իբր հակազգեցութիւն —, որուն ենթարկուեցաւ Սիլանտիտ պանդոկին տէր ու անօրէն Մինաս Մարանը, ծխախոտի իշխանի մը կողմէն, երբ համարձակած էր այս վերջինը Մարանէն յանձնարարուած արարած մը վերաւորել, շնական խորամանկութեամբ մը թելադրելով զժբախտ երիտասարդին վերադառնալ տուն ու իր քոյրը զրկել իրեն տեղ, որուն համար Մարանէն աւելի հոգածութիւն կանխաւ տպահոված էր յայրատ ծերունին: Մինաս Մարան նախատինքին պտտասխանեց նոր գործարանով: Ունինք այս ձեւերը, վրէժ լուծելու ուրիշին վարկէն կամ համբաւէն: Իրար չքաշելու, իրար կործանելու այս ռզին է, որ մեզ ըրաւ յիմար՝ օտար-

ներու յահաղործումին լքելու չափ հսկայ, յաջող ճարտարարուեստներու Բարուն եւ Պահրէն փաստ է այս տրտում առաջինութիւններուն: Ինչ ալ ըլլան՝ աշխուհիքը Մարանին, իրողութիւն է, որ ձեռնարկը նորա բախումս: Երիտասարդ անոր վարիչը նետուեցաւ անոր յանձնաձեռնին, քանակապակ կորովով: Անիկոս, սակն մարզի երեւան բերած իր յամառ, հետապնդող պարկեշտութիւնը դրաւ ի սպաս նոր դործին, ընդարձակելով, ճիւղաւորելով, իր՝ ինչպէս ապրանքին վարկը արժեւորելով արտակարգ եռանդով:

Կան կարգ մը գործեր, որոնք գործաւորը իրենք կը կաղապարեն: Նախնական առուտորի ճարտարարուեստ մը ստեղծելը կազմած է հզօր սուրբերու կրկէս իջնելուն:

Նորահաստատ գործարանին վարիչը, այդ իսկ շնորհով, կ'արժէր աւելի, քան ընթացիկ միութիւնները, որոնք, երկարատեան, աղատական ասպարէզներու փառքերը նկատուեցան մեր մէջ ու կազմեցին փնտռուած, հազուադէպ փետացուններու վրանեայ դասակարգը, պատերազմէն բուական տառ, պանքաներու մարզէն սանկունանկ ախաններու պետերը ասոնք՝ որոնք ուրիշներուն դրամները կը հաշուեն, մեծ տեսրակներու ներմակ դեղնութիւնը կը ճարեն իրենց փափկացած մորթին ու աղջիկցած մատներուն, հազուելով կոկիկ ու հանդարտ, մտածելով պարկեշտ ու լուրջ, օծուն ու ժպտուն, մինչև որ վերածուին տարտած, ջնջուած արարածներու, ո՛չ ալ, ո՛չ ձախ, «չնորհուած» կազ մը պահելով իրենց ցեղին հետ, երբ ազգային գործերու փոտտախրութիւնը ժառանգած են ստեղծել կատաղի հայրենասէր իրենց պաշտօնեայ հօրմէն, կամ լքելով, ուրանալով հիմնովին իրենց ցեղը, երբ հիլուելիական կամ ամերիկեան խոշովակէ ինկած են պանքան պարտիւոց ու, աճած անոր բորբոսին մէջ, շորտ անգամ աւելի հրեայ, քան վտերական ճունուտը: Եզրիպտոսի մէջ շատ ալ ցունցառ լեզան անոնք:

Անիկա աւելի կ'արժէր, քան այն պաշտօնեաները, պետական տիւաններու երջանիկ ուրեցընէր, հնդկահառ ու առիւծ նոյն տանն, արաբ ու եւրոպացի, որոնք անտեսող իրենց տուրքերով, հիմը կը դնեն իրենց դրամին, ապրելով ֆուլով սանկ տաս մը տարի, մինչև որ ամսականները վերածուին տունի, տունը՝ ափարթըմանի ու կազմելի ազգային վարկը: Անոնք պիտի ամուսնանան «եղոտ» կտորներու, պիտի հասկնան փորէ ու մտքէ, պիտի ապրեցնեն իրենց զուակները պարտադիր միջակութեանը մէջ իրենց իմացքի հորիզոնին ու պիտի պատկին իրենց փառասիրութիւնը ազգային պաշտօններու աղաչուած թեկնածութեամբ, սկսեալ «եկեղեցւոյ» հողաբարձութենէն մինչև թեմականի անդամակցութեան գերազոյն փառքը:

Անիկա կ'արժէր աւելի, քան մեծահամբաւ տուններու, դարձեալ խոտին մարզերէն, մեծահամբաւ անօրէնները, որոնք անգամ մը առուի ինկած իրենց գործերը կը վարեն խնջին, թաթին ու յիշտին տակը մենն-աղա փաթրոններուն, հանդուրժելով նոյն տանն բուսական ախուր բաներ:

Ջարգացած:

— Իր ընկալչութիւնը, Պարգեւեանին դիւր զալու համար կանխապատրաստ իր նուիրումը ըրած էին բաց անոր ականջները քիչ մը ամէն բանի: Երեկները՝ գործին: Երեկուները, մինչև գիշերին կէսերը, անիկա յատկացուցած էր միտքին: Խայտաբղէտ քաղաքը, ինչպէս են մա'նաւանդ Արեւելքի մեծ ոստանները, կը սորվեցնէ կեանքը:

քին մէջէն, ճարգերու վրայէն շօշափելի ըրծայելով ապրելու մեծ ուսումին հիմնական, դժուար յեղելի օրէնքները: Շուկայ մը երբեմն աւելին կ'ընէ, քան տնտեսական ուսումներու մատենադարան մը: Անկա իւրացուցած էր թերթերու՝ ինչպէս ատենախօսութեանց դիւրին իմաստութիւնը, շինելով իրեն համար իմացական հաւասարակը՝ ուսթիւն մը, դժուար նուաճուած, բայց ատով աւելի թանկ: Թօռուն, եռանդուն, անձանձիւր, բայց «չպատուած», միւսոնն երեսին, սենային մարդէն:

Անկա փնտռուած երիտասարդն էր, քիչ-շատ ունեւոր այրիներէն, որոնք ակնավաճառ, դրամափոխ, հողատէր իրենց ամուսինները զերեսի ջուրով թաղած» (ատենին աղջիկ կարգելը արժանի էր այս գոհունակութեան, հիմա՝ այրի ինչալը), զաւելըներուն ժտանադուրթիւնը արգային առաջնորդարանով օրինականացնելէ ետքը, ձեւը կը գտնէ, թողօնը տնտեսելու գործին մէջ «իրենց մասն ալ պահելու», ու յարգուած, լեզու ինչալէ խորապէս զգոյշ, գոհանալով իրենց թաղին Ապտոյնով կամ սանկունանկ քուզէնով մը, կը խնամեն իրենց որբերը, հասցնելով իրենց աղջիկները նշանի տարիքին, աշխատելով չհիննալ իրենց մարմինէն, զոր կը բուծանեն բծախնդիր գուրգուրանքով, քիչ անկողիններու նորոգիչ յատկութեան քաջածանօթ ու զործադրիչ: Անոնք պիտի ապաւորեն, այդ կիսաթարմ «պարկեշտութեամբ» ու, մանաւանդ՝ քիչիկ մը գիրուկ շնորհով միւսիւ Վահաներն ու միւսիւ Մերունները, այսինքն՝ բոլոր չտփի ու վախի դամուած, իրենց համբաւին, դրամին, առողջութեան վրայ դողահար երիտասարդները, օժիտին լափ կիսավտանջ իրենց հրապոյցովը — անվրէպ մազնիս — ինչպէս իրենց աղջիկներուն նոր, զազգադիտուն, բայց կնճռոտ շնորհովը, քանի որ բարբերը, մանաւանդ պատեղազմէն սաղին մտան նոր փուլի, ու փնայցուններու կիներուն հետ երբեմն պարտաւոր ծղան ընդունելու նաեւ անոնց անդրանիկ տէրերուն անդրանկութեան իրաւունքը:

Հասկնալի է, որ Արտակ Գասպարեանը, երբ դոյութիւն չունէին Արծրունի իշխանները, վայելէր խոր համակրութիւնը Տիկին Գոհարեանին, որուն աղջիկը պապենական, թաքնաթաղուր մանեակէն զատ ոչինչ ունէր սնտուկին խորը: Որուն աղջիկը մօրը մեղքէն զատ սեպական մեղք մըն ալ ունէր, պոռայի պէս փութթուած վիզին: «Փնտռուած» փնայցու, այդ Արտակ Գասպարեանը, նաեւ ազատական ապարդէներու մէջ դրամ շինած էր կէս-մտաւորականներէն կամ եւրպա չըրած, բայց գործի քիթ ունեցող հաստատ հասառուններէն, որոնք վաշխով, շարաշահութեամբ ու աւելի անխոստովան միջոցներով երեք-չորս տարին հեղ մը տուն մը կը տնկեն, ու կը քաշուին անկիւն, մէկզի, մանաւանդ ազգային գործերէ, իրենց ժամանակը յատկացնելու համար իրենց «չէնքերուն», Գահիրէի ամէնէն «տաքէ հեռու» կողմերը համեստ բոյնի կը վարձեն, շահելու համար վարձաքէն՝ ինչպէս ազգային հանգանակութեանց անպակաս, «անամօթ» հարկէն, տաղաւարներուն՝ տէրտէրին վճարուելիք օրհնողչէքէն ու պատահական նպաստի տարապարհակէն: Հարուստներ անշուշտ ասոնք, մոռցած զրեթէ իրենց մանկութեան հայերէնը, կատարելագործուած արաբերէնով, իրենց աղջիկները կաթոլիկ ու զպտի վարձարաններ զետեղած, ուսուցման սուրբը շահելու հերոսական աչքը-բացութեամբ: Ու կան տակուին ուրիշներ, բոհիկ կամ բանակի հաշուապետ, շորցած, կորցած, ճիղճիղ երեսով, շնազայի զլուխով, ու

րոնք չորցած, կորցած, թել-թել երեսով ու երկար աչուքներով, դէպի շոքուլա հակած գոյնով իրենց աղջիկները ձեռքէ հանելու իրենց անդարման հիւանդութեան մէջ, պիտի մեռնին բաց այքով, պատուիրելով կիներուն չդպիլ արժեթուղիներուն, ու Արտակներ, այսինքն՝ առանց դրամի փեսաներ հալածել: Ու փաստարաններ, տարփածուներ, ճարտարապետներ, համալսարանի դասախօսներ, առնուազն նոր կամ չնոր մարտա(*) մը իրենց անութիւն, զոր պարտաւոր են ջըշի մէկու մը, ազատելու համար իրենց գլուխը՝ ինչպէս քսակը աննահանջ թափանցումներէ:

Պարզեւեանի՞ն համար

որ դրագէտ էր միայն ու հացկատակ, ու Սոնային վրայ մութ իրաւատէր:

Անճարակ, ու մանուկի չափ անխելք՝ այն ամէն մարդերուն, ուր սեռն ու վայելքը չեն զար առաջին փ.անի, անիկա յայտնուեցաւ փորձ դիւանագէտ Արտակին հետ իր յարաբերութեանց մէջ, երեսան բերելով շատ ճկուն տաղանդ մը, զիչն ու ստեղծողը իր ուզածին պէս էշի կրնայու: Պատճառներ: Ո՛վ գիտէ: Դիտուած է, որ հացին տաղանդը, հզորագոյն տաղանդը կենդանիին, կարճամիտ է ու կը զատածի, այսինքն՝ վարարութեան մէջ կը դիտորի: Սեռային տաղանդը կենդանիին շնորհուած դերագոյն իմացակամութիւնն է, վեր՝ հացին վարար ու թանձր նիւթականութիւնէն: Ամէն սիրահար աւելի կ'արժէ, քան զառամ ծերակուտական մը: Սահակ Պարզեւեան, այդ տղան վարելու գոտար խաղարկութեան մէջ, դորձածեց մեծ ոճի, ըզգուշալից ու հաշուով ըմթացք, իր բառովը (երբեմն յեղափոխական էր եղած ու դորձածած զայն)՝ տակտիկա, զարմանք առթելու չափ չըջապատին, որ խաղի այնքան անատակ այդ մարդուն մէջ, բազմաթիւ առիթներով, կը հաստատէր այս նոր տուրքերը: Ոչինչ՝ զոր անդիտանար տղուն զգացումներէն: Բայց ուրիշ՝ զտած էր խելքը, յարգարելու զէպեհրն ու կեանքին զնացքը այնպէս, որպէսզի ունենար տղան միշտ ջովիկը: — Մշտապատրաստ վառահ՛ն, օր մը նստելիք ահա ուր մեղքին, ինչպէս կը շնորհէին կարծեցեալ իմաստունները: Կեղծիքին անկարող անոր իստեւածքը — դուք գիտէք, թէ անիկա շատ, շատ բան էր մեղքին պողոտաներէն, վատ ու յիմար, անսիրտ ու ապերախտ, անողք ու անապաշտ, բայց երբեք սողացող, այսինքն՝ զիջող ու մարդահաճ — ինչպէ՞ս էր զտած հաշտութեան եզր մը, որպէսզի իրարու գլխովին հակառակ բաներ հանդուրժէին զիրար: Դրէք զէ՞մ զէ՞մի Պարզեւեանին շնականութիւնը ու Գասպարեանին հաւատաւոր ու վերապահ ամօթխածութիւնը: Մէկուն աւարտած զգայապաշտութիւնը, որ չէր խնայած յիսունին մօտիկ, մատ մը աղջկան, ինչպէս կ'սխրո՞ւէր ըսել մեծբերան բաժրասանքը ու միւսին զարթոյնում մաքրութիւնը, որ կը վախճայ տարփանքին գոլէն: Նախա՛նճը: Քատորդ դարէ աւելի տեւողութեան մը վրայ զայն ուրանալէ՛ քաջը, անիկա կը զգար ատ բանն այլ, սանկ ծակող, բայց դեռ քիչ, ամէն անգամ, որ շանթածէն յոգնած, մտածէր բոպէ մը օրուան, երբ իրեն պակասէր պիտի ինչ որ Սոնան էր, մարմին ու հոգի, հեշտանք ու զուր-զուրանք, պաշտում ու աղապատանք հաւատարապէս: Այդ պահերուն անիկա ինքզինքը կը դատէր նոր մարդ ու կը դառնար կիներու կարտ-

(*) Մարտա — չաւուրիլի կտոր միւ: Ինծի անձանք է բառին ստուգաբանական ծագումը:

ւանին, որոնք անուններ էին հիմա ներքին տափաստանէն, դերեզմանին մէջ փայտով վերցուած շորուկ անուններ: Արտակ Գասպարեանին իրաւունքները: — Այսինքն՝ սիրահար երիտասարդի մը զգուսանիք տակ «չդրուելիք» ու «պոռացող» իրականութիւնը, որ ժամանակին Հետ կը թանձրանար ու կը զունաւորուէր: Անշուշտ, որքան ատեն, որ երիտասարդին նիւթականը մնար իրեն ծանօթ սահմաններու, անիկա մտքին անկիւնէն իսկ չունէր անցուցած «աղջիկը» զիջիլ «անքանքար» մէկուն: Գրագէտը, այս վերադիրը արտասանած պահուն, անոր մէջ կը զետեղէր նենգամիտ ու խորիմաստ իր շնականութիւնը: Անիկա հիմնովին կ'անգիտանար բոլոր Իանգլանդէն նշմարները, որոնք երիտասարդը, իր միամտութեան մէջ, անապարած էր հայթայթելու իր միտքին: Կ'ուրանար, առանց ատիկա զգալի ընելու, տղուն խօսելու շնորհը, արուեստներու հանդէպ անոր բացոյրտ յուզումները, կարճ՝ ա՛յն ամէն առաւելութիւնները, որոնց համար գրագէտը ինքզինքը հպարտ յայտարարեց: Քանքա՛րը: Բայց որո՛շ: Հինգ հազարով կը սկսէր անոր բազը: Ու այդ դումարը՝ Անգլիոյ մուրացկաններուն օրինաւոր կենսագի՛նը, որուն հետ անիկա ըրեր էր ծանօթացումը Լոնտոնի անօթութեան օրերուն:

Բայց ի՛նչ սքողուն բնականութեամբ, անիկա կը քաջախիտ երիտասարդը, պաշտօնական բոլոր առիթներու, որպէսզի պարզէ ամէնուն, մնալով պատշաճ, անպաշտօն իր թեկնածութիւնը, զերծ՝ նշանին լրջութեան, բայց թեթեւ՝ անգլիական Փլըքթին անվնաս ցոյցով: Յայտ ու բարեհաճ, անիկա տկանջ ունէր թեթեւ իսկ շշուկներուն, որոնք կը բուսնէին զոյգին ետեւէն, երբ կ'անցնէր ինքը, առաջ, դէպի բեժ, երկու երիտասարդներուն մէջտեղէն:

Ամբողջ այս ռազմափարութեան մէջ, անիկա չահեկան էր հայրական իր հովովը, որ կը հակակշռէր դայթակղութեան շշուկը, ու անոր անմին կը բերէր տեսակ մը նորութիւն: Անիկա պարտաւոր էր ընդունիլ շնորհաւորութիւններ անգամ, տափակ, կեղծ, որոնք երիտասարդին փառքը կը պատմէին ու Սոնան կը դողէին: Ու ժպտելով կը հայհոյէր անիկա իր մտքին բոլոր այս խաժամուժը:

Սոնա՞ն:

Անիկա կը հանդուրժէր այդ երիտասարդը, դրագէտէն տարբեր պատճառներու տակ:

Տկար էր անիկա ամէնէն առաջ ինքն իր դէմ: Անշուշտ փարթած օրինակը մարդուն, որուն ոլորտին մէջ բացուեցան թերթերը անոր հողիին ու շինուեցաւ անտես կառոյցը անոր յատկութիւններուն, այսինքն՝ ինչ որ մեր բառերով սովոր ենք նկարագրել տնտեսանէլ, անօգուտ պիտի չըլլար, ինչայելու համար խղճահարական տառապանքը, զոր մեր անտարբերութիւնը երբեմն կը հանէ մեր խորեմէն: Բայց ուրիշ է այրը, ուրիշ՝ կիներ: Առաջինը առջին բաց ունի աշխարհներ, ուր կը փախչի, ազատելու համար ինքզինքը իրմէ: Կի՛նը: Անիկա հետապնդուած երէին նման պիտի քուլի իր բունին, այսինքն՝ մեղքին խուռչիւն: Այդ է պատճառը, որ կիներ կ'անծի ցաւէն ու կը տկարանայ ամէն օր՝ մաշելով այդ գողտուկ լիզուէն: Տկար էր անիկա մօրմէն: Միեւնոյն մեղքը անոնց աչքերը կը կապէր նոյն շղթային: Բայց մինչ իր մարմինը, նոր սկսող իր մարմինը, նման ամէն զերթի, մեւ կը զտնէր հաշտուելու փարաւոննան սոխին, ու կ'ազդուորուար, հերքելու չափ, ներքին հիւծումը, անոր մայրը զգալի արագուստեմբ օրէ օր կը պարպուէր իր կիտուածէն: Խոր, անորակելի այդ

արգահատանքը աղջիկէն դէպի մայրը: Փուճ, պզտիկ, բայց մշտապէս զրկանքներուն ուսկանովը զգեսնուած կնիկ, որ Եգիպտոսի սա գերութիւնը կը կրէր անարդար քաւութեան նման, ողբալով ինքզինքը ու նոյնքան խո՛ր՛ իր աղջիկը: Այդ արգահատանքը ամէնէն բզկատող կսկիծը կը դառնար, երբ կը խորհէր իր բաժինին, մօրը դժբախտութեանը մէջ: Անոր մտքին, խռուատիւ պ ու ցայտուն, կը մնար գամուած նկարը աշնան իրիկուան, որուն մէջ մայրը գտաւ զինքը զրագէտին ծոցը, քակուած ու զուտ: Իրենց նայուածքնի՛րը՝ երբ հանդիպեցան իրարու: Անիկա ամիսներով կրէր էր ողոք սլաքը մօրը աչքին, կսկիծէ: Խնկն ու կործանած: Յետո՛յ: Մի հարցնէք անուանը բաներու, որոնք կը վրէպին մեներու մէջ: Յետո՛յ: Այսինքն՝ տանիքի մը տակ, Սահակ Պարզեւեանը, սիրուհին ու անոր աղջիկը, որոնք պիտի դարձնեն երկտեսաբարը նոյն ու մէկ մեղքին: Ու տանիքէն դուրս, աշխարհի աչքին, պիտի դարձնեն հազար-հազար հողմացոյցները կեանքի բաներուն: Վայի՛լքը: Որքա՛ն կը մեծցնենք տարողութիւնը սուղ այդ րոպէներուն: Ազգապղծութիւնը վեր ու դուրս է հեւտանքէն: Ու հինգ վայրկեան լոյսը ուրիշ տէր շունի մեծ դիշերի մը մարմինին մէջ, քան շէշտել սեւը մեծ զանգուածին: Մնացեալն է իրականութիւնը:

Տարիքին ու մեղքին կապուած զգացական այս ելիւնջները Սոնան կ'ընէին փոխն ի փոխ նկուն ու եռանդուն, յուսահատ ու վայելախորտ, խանդարելով անոր բուսային հաւատարմութիւնը, հրեւում դայն դուրսէն դէպի տուն, գարշութեան խուցին, ու անկէ ալ դուրս, սուտ հրախաղութեան, պահելով զինքը մշտապէս աշխարհութեան մը մէջ: Այս ատպնայնեցուն ընթացքին «հոն էք» միշտ, Արտակ Գասպարեանը: — Այսինքն՝ հաստատ դեռինը դոնէ, որմէ չվախանալու դողող աչքերը, մեղքէն արիւնած, անոր շղթայուած: Չայն կը սեանէր դոնէ ամէն օր: Ու երբ անոր աշխարհը կը հեծեծէր խուլ, դռնահարս ճնւածներու ներքեւ (անտարբերութիւնը թէկուզ մեղքին հանգէպ, կը յուսնեցնէ երբոր երկարի) խոր ու իրաւ բաներ այս անգամ, ու եղած այսպէս պարզուկ շրջումով մը: Մեր դժբախտութիւնը կախուած է յաճախ այս կարգի խեղճ աղանակներէ, որոնք մէկ օրէն միւսը կրնան դէմք փոխել: Այդ շնչին, բայց իրաւ բաներուն մամուլին տակ անոր օրը, երբեմն շարաթը ամբողջ՝ կ'ըլլար անձրեւի, խղճող մղձուկի կապարեայ շողի, առնելով անոր մարմինին բոլոր ճամբաները իր բիրուար լեղուներու ցանցին ու խղճելով, կուտիով ինչ որ ապրելուն խայտանքը կը կոչուի համատի արբանտներու քով: Այս անձկութեան վերամակին տակ, անիկա կ'ուզէր մէկը, մօս ու իրաւ: Որ անկողին չհոտէր ու չըլլար արձանացած արցունքը իր մօրը: Մուրին մէջ մեր մօտիկները մեզ կը նեղեն: Օտարին համակրանքը կ'արժէ աւելի:

Պէտք ունէր անոր, նորէն, երբ հակառակ մարզէն չեռ գիտոր ինչպէս անիկա կը կարծէր իր երկինքը պարզ, իր վերցուած այդ ճընշումներուն ստորտաէն անոնց դազաթին, տարածելով ինքզինքը դէպի բացերը, ապրումին մշտափոփոխ ծիածանին մէջ կամարագեղ, ու նայելով չորս գին, համակ բարութիւն, համակ քաղցրութիւն: Եւ փուճը, երկարատեւ ու դիմացող, ընդունակ է այս կարգի բերեղատեցած հոգեվիճակներ արտօնելու: Երբ աղջիկ մը կ'ուզէ վայելքը, նըշան է, թէ ինքզինքը տուած է աւելի խոր ուրիշ համերու: Ու այդ

Համերը վերլուծելի չեն շատ անգամ, վասնզի անոնց թելերը կ'երկա-
րին ժեր էութեան անայց ա՛քերը մինչեւ ու չեն պիտակուիր:

Տղուն Հանդէպ իր զգացումնե՛րը.

— Սովորական, մտերմիկ, իրաւ, երբ երիտասարդ աղջիկի իր
Հոգին ողորուէր սիրով: Բառքը ընդարձակ է ու զգացումէ աւելի վի-
ճակ կը մատնէ: Այսինքն՝ այն պահերուն, երբ յոգնած՝ գրագէտին
անձէն ու շունչէն, մա՛նաւանդ տարիքին անդարձան ժանգէն, որ ամ-
սըւան մը անկողինով կը համակէ Հոգիին բոլոր բաց մասերը, ու ի-
րադրումէն պայմանաւոր մղձուկէն հալածական, նետուէր դուրս,
կեանքին լայնութեան: Այդ պահուն, ներքին մղձուկէն հակառակ,
պարզ էր ու անմշուշ այս կեանքը, առջին, փոռած ամէնուն ալ Հա-
սողութեան, ոչ իբր տանջանքի պաստառ մը, այլ ուրիշ, մեղի մօ-
տիկ, կարծես մեկմէ բխած, հիւսուած բան մը, խառնուած ամենական
իրերու, խառնուած փոշիին, որ անփոյթ, անապատէն կը թեւէ մեր
աչքերը զէպի ու փառքին՝ ինչպէս սերմին աճիւնները կը սրսկէ մեր
հոգիինին, խառնուած՝ մուխի տուող միտքու նման կիներու շէմքին.
ու դալիւթեանց՝ ինչպէս ձուածու երեսներուն թրթուուն Համբոյրին:
Այդ կեանքը՝ որ կ'ընէր զայն բարի, սղայ, մխամխո, մոռցնելու
լափ սոււնը, ուրկէ կը փախչէր, գրագէտը, զոր Հետզհետէ կը դա-
տէր, ապարարոյ իր թանձրութեան ոսկեցեխէն զատելով աղբին ծա-
ւալը ու արժէքի ասնելով անոր անդթութիւնը՝ ինչպէս հոգեկան
փառխարը: Ոսկեգօծո՞ւմ մը՝ ինչ որ կ'առնէին իր աչքերը մարդերուն
աղբէն: — Անոնց ողորուէի կիրքը, զոր վէպերը կ'ընեն այնքան կեղծ
եւ որ, պարզ դիտուած՝ լուսնոտութիւնն է վերժակաւոր եւ ուրիշ
այինչ: Անոնց անյազ որկորը, ուրկէ կ'ոլորուին զէպի գայտ իջնելու
ինչ որ մեր հպարտութիւնը կը յորջորջենք: Ամբողջ մեր քաղաքա-
կրթութիւնը որկորային անպարտութիւն մըն է, ու մեր փառքերը՝
պատարը աւելի դիւրաւ հրելու գիտութիւն մը: Անոնց անդթութիւ-
նը, որուն չնք զագրած դիմակ ճարելէ, ու անոնց ամէնէն եղերա-
կան, անորբաղբիի դժբախտութիւնը, — իրենք դիրենք պաշտել կըր-
նալու դասապարտութիւնը: Ու քա՛րը, մեր բանաստեղծին բառով՝
կըանի՛թը, որ սիրտ անունը կ'առնէ մեր կուրծքին ներքեւ: Պժձան-
քի այս պահերուն, որոնք սիրոյ շրջուած երեսներ են այնքան յա-
ճախ, անիկա կը նեղուէր նաեւ մօրմէն, անոր հասցուցած իր շարի-
քէն աւելի, անոր յիմարութեանը հաշուոյն: Իր անկո՞ւմը: Հարկա՞ւ:
Կարելի կ'ըլլա՞ր ատիկա, առանց այդ զիշականս արարքին, քառա-
սունին մօտ այդ «չուանցու» խեղճութեան:

Ու կ'ուզէր զայն, այդ խելօք ու ծանր բանը, մատաղ հոգիով
երիտասարդը, իր զէմը, քովը, սեռէն ու սէրէն տարբեր ոլորտի մը
մէջը. — բարեկա՞մ, ընկե՞ր, գաղտնեկի՛ց: Ո՞վ անձկութիւնը մեր ե-
րիտասարդութեան, երբ զարնուած, փրած եւ սիրահէն: Երբ երկաթ
գօտի մը գիտես թէ կը պարուրէ, անվերադարձ, ջու թեւերդ, ու քեզ
կը կապէ խոնաւ ու ճերմակ ցեխին, որ միտն է երբեմն, — դոնդող
հայելի՛, սրուած կայլակով, սրպէսդի գիտես, ճանչնաս ինքզինքդ
ու քեզ ջախջախես: Կ'ուզէր զայն հետը: Խօսէր, մօտ ու իրաւ, այն-
պէս՝ ինչպէս կը ձեւուէր մտապատկերը իր միտքին անդունդներէն,
երբ նշմարել կը կարծէր զոյգերը, իրարու դէմ, կամ կողքին, անբաւ
բազմութեանը մէջ Հասող ձեւերուն: Իրենք դիրենք զատող, իրարու
երկարող, հազար օտարէ, հազար հետուէն իրարու քաշուած զարհու-
րելի բնականութեամբ, հերքելու լափ իրենց իրականութենէն դուրս

ուրիշ ամէն բան: Ու խօսէր անոր հանճո՛յքը, որ սպրեւումն է երբեմն, անկննիւ ու խեղճ, հրթիռ մը ինչպէս, օրերուն մեծ մուկին վերեւ՝ սասանող ու դողդոջ: Կամ՝ ցա՛ւը, որ մեր սիրտինն է, յաճախ՝ անբացատրելի, բայց որ կը զառնայ պարզ, երբ տեսնել գիտնե՞ք, երբ տեղ կը փոխենք: Պարապ տեղը չէ, որ «Կոունկ»ը մեր արուեստին կոթողներէն մէկն է: Հոգին պարզ ծաղիկ մըն է, լինելութեան մեծ անընթացի մը վրայ: Փոխադրեցէ՛ք դասն իր անուններէն, յաճախ գիտակի՛ւնենաք: Ամէն պարման, իր անունին պարտական է իր պանդխտութեան բովանդակ վիշաքը: Ո՛չ սէրը, ոչ ալ գոհարը կարող են լեցնել պարապը: Պարմաններն ու ծերունիները կարօտէն կը մեռնին: Գա՛ղջ, մշտաշարար հայրենի՛քը Սոնային, զաղջ ու պայծառ իր դաղջութեամբը, որ միտակ զէմքերուն զաւարճ ու շարպարը՝ չի հեղինակէր, աղջիկներուն միտերը հանելով՝ որտադրաւ այդ ճարտարապետութեան, այլ մանաւանդ կը հեղինակէ անդրազոյն հիւսուածաբանութիւնը հողի ըստած այդ բանին, անոր կառուին մէջ զետեղելով նեարդաւորելով, համաշարունելով ինչ որ համն է, հացն է, ներանդկարն է աշխարհի մը, երկրամասի մը, անտուգն քաղաքի մը եւ որ կը բացուի դուրսէն, աչքի ու մայնի, զնայցի ու պարի, տրամուսեան եւ խանդի, ժպտի ու լացի ինքնատիպ, այլամեթ հեղումներով: Վայելքնե՛ր, որոնք տեւողութեան խաւերուն տակ կը բերեղանային ու կը վառէին անոր ներքը, «չուացեալ ճրագարան», բազմառտեղն ու անչէ՛ղ: Կամ վերշտեր, որոնք կը սիթթէին սեւ իրենց ազլամազովը մերկութիւնը անոր զոյսարաններուն: Վէրքեր կան, որոնց նայիլ պիտի չուզէինք շատ մը բաներու դնով: Ամբողջ այդ մօտիկ անցեալը կը խուժէր վրան, մեղքի, զրկանքի, քայքայուն լքումի՛ կօր, հիւսուած ամպէ՛ մը կարապետուած, ու զգեստնո՛յ՝ այրէն սարսած, խարխուլ կամարները անոր հողիին, ա՛յնքան՝ որ անիկա ուս մը կը փնտրէր՝ գլխիկը դնելու: Մտապատկերին բեռը զօրաւոր է մեր դանկին վրայ: Ու մի ժողնաք, — տարազրութիւնը, թէկուզ ազատ երկրի մէջ, սպառող հիւանդութիւններէն մէկն է մեր հոգիին, որ շրջապատին անտարբերութեամբը ինքզինքը կը պատժէ ու օտար շէնութիւնները, օտար վայելահանգիսները անուխի վերածնէնն հետք կ'առնէ իրմէ՛ ներս: Անիկա, տարազրութիւնը, կը սպաննէ զանգը՝ անձը, առիթ տալով բացառիկ քանի մը անուաներու, որոնք կը նուաճէ երկրորդ սերունդի վրայ: Ոչ մէկ ատեն մեր ժողովուրդը ենթարկուած է հոգեկան այն անարիւնութեան, զոր կ'ընծայէ ան այսօր, թուրքին գոփոքէն դուրս, ազատ արհեստ մէջ, անտարբեր մշակոյթի մէջ: Կէս դա՛ր: Ու դուք, մեր յաջորդները, մոմով պիտի փրկուող ժողովուրդները այն ոգիին, որ մեր արուեստը, ինչպէս հաւաքական բուխքը շինեց, հազարամեայ մեր պատմութեան բողբոջ նախնիները հերքելով, յայտնուելու համար միշտ աւելի յամառ, աւելի խոր: Միտքն ալ կապ պէտք է կապէ հողին հետ: Հակառակ զօրաւոր սաղանդներու առատութեան, այսօր մեր գրականութիւնը իբր խաւսուած ու բերեղացում չի կրնար հակակշռել երանելի օրերն անգամ, ուր արուեստին տեղ խեղճուակ, ուսուցիկ երգեր կը բռնէին: 1870ը իբր գիտագիտական կ'արժէ, քան 1930ը՝

Սոնայի զգացումներուն իրական տարողութիւնը հանդէպ այս տղուն.

— Նեղսիրտ, վանող, դաժան, երբ բիւր ու տխուր բաներ, տունէն, մօրմէն, դարձնէն յուզէին զինքը զիչ մը աւելի խոր, իր

դիւրաբեկ ու դժուարասաց խաղաղութեանը մէջ: Այդ պահերուն, կ'ըլար անիկա կծկուն, շքեղու համար շար արարածը, որուն թարմ ու պայծառ տարիքին վրայ իր մազիւնները զարկած կ'աճէր մեղքին զաղցկեղը, մօրճն ու գրազէտէն, երկգլխանի հանգոյցով: Կ'ամբընա՞ր ինքն իրմէ, թէ կ'ատէր: Միամտութիւնը ուրիշներուն, ամէնէն շատ Արտակին վրայ: Կ'ուզէր, որ հեռանար, կորուէր աչքէն այդ անասնիւի բանը, որ անգիտութիւնն էր, հինցած բառով մը՝ անմեղութիւնը, իրա՛ւ՝ այնքանի, որ աղուն պատկերով, հերքելու չափ իր դարեւոր ստացումները կեանքին թեւերէն, փղձկումի տասնելով անոր խտապարանոց հպարտութիւնը ու թուլցնելով մեղքով կրացած անոր հոգին, դատապարտուա՞ծ՝ օրին մէկը իր աղտովը թափելու գետին: Ժխտական այս պահերուն, վանելու համար սրտառուչ այդ մաքրութեան ճշու՛մը իրմէն, ան կը նախատէր այդ տղան, իւրաքանչիւ իրորութեամբ, առանց պատճառներ տալու, առանց փաստի, ճարտարութեամբ իր ջիղերը պատրուակ անելով, այնպէս՝ որ ամէն սիրողի նման երիտասարդը կը մնար հեռու տաքնապին իրական զսպանակէն: Դառնահամ այս տեսարանները աղջիկը կ'ընէին աւելի քան գերազրդիտ: Անկարող իր խոցոտուած սիրտը զսպնու, կու լար անիկա ամէնէն գաղտնի, դաշնակին վրայ, մատները ըրած տարօրէն տրտում: Ու կու լար աչքով, սեպհական շարութեան, թէ մարդոց անսրբազրելի գէթախտութեան վրայ: Պարզելու համար ամբողջ թնձուկը այս վիճակներուն, վերլուծումը, անոր արագ ու հատու ձեւը, որ փորձուեցաւ կանխող էջերուն մէջ, անբաւական պիտի զար: Հոգեբանական վիճակները կը նմանին խառնարանէ մը ժայթքող երեւոյթներուն: Մեր տեսածը դուրս հեղուածն է միայն: Վերլուծումը, տալու համար երեւոյթը իր լիութեան մէջ, պարտաւոր է խորանալ: Ու ընթերցողը, միշտ հանդիսատես, չի կրնար հետեւի: Վասնզաւոր ճիգերու: Մնաց որ, արդի վէպը, բացի քանի մը ցանցառ այլամերժ փորձերէ, կը զգուշանայ այդ արկածախնդրութեանէն: Ամբոխը, նկատի ունիմ բոլոր ժողովուրդներու միջին ընթերցողութիւնը, ա՛ն՝ որ տանելի գիրքերուն բախտը կը չի՛նէ եւ հանադէմները կանգուն կը պահէ, այդ ամբոխը միշտ պիտի գոհանայ ուրաւագրումով: Կարգացուելու հարկը մեծագոյն սանձն է գրողին: Ի՞նչ գիշերներու չի ստիպեր ան: Մասնաւորելով մարդը մեր գրականութեան, դժուար պիտի ըլլար լրիւ իր ողբերգութեան մէջ տեսնել ջանքը զրոյշին, որ համարձակէր հոգին խորաշփելու: Բայց ի՞նչ հզօր մազնիս է անիկա, ստորախարհը, որ հոգին է մարդերուն: Մեր հոգի՞ն, այսինքն՝ հերքումներու, սխալներու, հակասութեանց, քայքայումի ու ազտի ատրաշէկ ու հսկայ քառ՛ս, զոր կ'ուրանանք, խըլուրդին նման մեր գլուխը թաղելով մեր աղբերուն ծոցը: Բայց զոր պարտաւոր ենք կշռելու, հին բառով մը՝ դատելու, ի հեճուկա մեր յիտարար արհամարհանքին, անսրբազրելի տոնքիչոտութեան, զմեղքի վարձքէ՞ք վեր այլուրութեան, օրի՛ն մէկը, երբ ստիպուինք հոն տեղաւորուած, հասունցած հսկայական խլիրդը տրորել քիչ մը: Վերաբուժութիւն: Ո՞վ չի գիտեր, թէ անմա՛հ է խեղդետինն Նիթին՝ ինչպէս ոչ-նիւթին վրայ: Ու մեր զանակները՝ խեղճ ու ժանգոտ: Հոգի՞ն, որուն մօտէն կ'անցնինք ամէն օր, մեր իսկ մէջքէն, կիրքին ու երազին, գործի տենդին եւ քանի մը ուրիշ ուժգին զգացումներուն նաւակովը, կամաւոր մշուչ ու ամպ սփռելով սահմանին շուրջը անպուղտին առջին: Եւ սակայն, անհերքելի, միակ իրականութիւնն

է այդ անդունդը, դէպի ուր կը նաւեն մարդոց որդիները: Կան, որ ազատին պիտի ըսեն կ'ուզեմ՝ պիտի ապրին իրենց ճօրը կապովը, աշխարհը կարծելով սեղանի Հանդէս, ճոխ կամ աղբատուկ, բայց միայն առ, ու մութէն առաջ, փոխ լոյսերով, պիտի յանձնուին սկզբնային հոսանքին ու, մոմերնին չհատած՝ պիտի զոցեն աչքերնին: Ուրիշներ, մեն զժբախտները ասունք, պիտի մխուին մութին ալ փորէն ներս, ներս, խոր, ու պիտի չգա՛ն: Մարդերը կ'ապրին զոյգ այս զիծերով: Աշխարհէն ոչինչ հասկցողներ, ճանչցողներ, որոնք դաշտի սունկէն կը տարբերին իրենց ստերով: Ու շատ անողներ, շատ պահանջողներ, միւսները, որոնք զո՛ւ պիտի երթան իրենց ախորժակներուն: Անդունդէն ետ դարձողները: Հարկա՛ւ, եղկելիները ասունք, որոնք զժոխքէն կամ արքայութենէն չեն ընդունուիր ու Յովնանին մէջ կը փոխուին մեր ասիերը: Անոնք ահաւոր իրենց «փորձը» պատմած ատեն անհաւատալի կը թուին մեզի, այնքան տարբեր է անդիլ աշխարհի երբայն ալ գալը, սա մեր դիտցածէն: Մեն ապրողներն ու մեն երեւակայողները: Այսինքն՝ մեղաւորները, նիւթին կամ իմացանիւթին մեն սպառիչները: Այսինքն՝ հում նիւթը, որուն վրայ կը գետնեղենք մեր սրունքը, մետաղա թելէն ալ բարակ ու կը յաւակնինք երկնակամարը վստահիլ անոնց հասակին: Ի՞նչ յիմարութիւն է մեր հոգին: Ինչո՞ւ չենք հասկնար: Ճիշդ իր իմաստին մէջ պատմումը բոլոր «ետ դարձողներուն»: Ի՞նչ է մնացածը այդ մարդոցմէն, որոնք յափն ու ելան խաւարակուտ գուտնները, եթէ ոչ պուտիկ մը փուխ, ձափի՛ ու միտքի փուխ, որ պիտի սաւառնի որոշ ատեն մը ու հանդի կրկին, ծոցը միջոցին, ուրկէ թիած էր տրդէն: Մարդկ՛ր, հազարաւոր դարեր կանխող մարդեր, ի՞նչ կ'ուտէիք դուք ձեր հոգիէն, որ պէտքի այնքան զանուած ըլլային սկզբները՝ մեր թոռներուն: Ինչո՞ւ չսանձեղիք տեսողութիւնը, ու թողուցիք, որ մեր անարին բազուկները կատարել ձգտին մեն խորտակումը, ա՛ն՝ որ լուծէր մեր միտքուն զժբախտ, զազրելի ճարտարապետութիւնը, փաթթելով մեր աշխարհը զլզլեակին մէջը իր օրէնքներուն ու իր դիտութեան: Մեր հոգի՛ն: Իջեր չեն բաւեր քեզ տարադիւր: Ու երիտասարդ աղջիկ մը, որ տախտապարուած մեղքին կնճիթէն, շղթայուած՝ կիրքին օղերէն, ու վարսուած է անոր զայտին, ինչպէս ծաղիկ մը՝ աչքին, օրը քանի՛ հեղ շանցնի պիտի սա հերքումներուն, սլացքներուն, ընկրկումներուն հակամարտ ստեղծներէն:

ՅԱԿՈՒՅ ԾԵԱՅԱԼՆ

(Շար. 14)

Մ Ա Տ Ո Ւ Ռ Ը . . .

Լուսիքամբ հիւսուած քարերու հեքիաք,
Որ հագար տարուան խոհերով կ'ապրի.
Ու գմբէքին տակ՝
Ջանգը ոնկեզու կը սպասէ տնճկաւ
Արձագանգին հին
Ու տագնապահար իր աղերսներուն...

Շիրմաբարերու շարքն է անանուն,
Որոնց ստուերին՝
Ժամանակը դեռ կեանքի փշրանքներ կը կոցահարէ:

Ինծի կը պատմեն,
Թէ այս մատուռէն հաւատացեալ մը,
Իր հագար տարուան մզաւանջներով՝
Իմ հագիէս ներս
Ապաստան գտած՝ յամառ կը սպասէ
Օրուան, երբ ստույգ պիտի սուրայ դուրս
Ու կիսատ ձգած իր պատարագը ամբողջացնէ...

Չ Մ Ր Ա Ն Գ Ի Շ Ե Ր . . .

Մաւթը կը շրշի փոքոցէ փոքոց,
Ու անձրեւը ցարտ կը խուծէ մերթ ներս,
Հոն՝ ուր դեռ առկայծ լուսամտիս մը կայ:


Լուսամուտէն դուրս՝
Հայեացքը գետին, մարդ մը կ'ըշտասպէ...

Կ'ըսեն, թէ անդույ ան պիտի երթայ
Հեռուն, ուր երգը լուռ կը բաշխուի քարերու սրտին:

Պարտեզին մէջ՝
Սպիտակ վարդեր անտէր կը մեռնին...

Փ Ա Ն Ո Ս Ճ Ե Ր Ա Ն Ե Ա Ն

digitised by A.R.A.R.@



Մ. Հ Ա Յ Ե Ա Ն

**ԱՆՓՈՓՈՒԵԼԻ ԵՒ ՅԱԽԵՐԺԱԿԱՆ Է
 ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ՈՒ ՉԻ ԿԻՆԱՐ,
 ԱՐԳԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՄՆԱԿԱՆ
 ՆՈՐՈՒԹԻՒՆ ՉԷ**

Տե՛ր, տա՛ր ինձի յարևո՞ղ յղածուս էմբի մը
 զնկեցիկ փրթումներ, որմէ փաստեմ ինձի, բե
 րս յետինք չեմ արտրածներում, եւ մուսգ ալ չեմ
 արծել արեամարեան մարդոցմե:

ՇԱՊԼ ԳՅՅԻՆՐ

*Թերեւս օր մը Աստուած բաւ համարէ հայ բանաստեղծներուն տառա-
 պանքը, լսէ անոնցմէ մէկուն խնդրանքը եւ, ինչպէս որ Պօպլէրի տուաւ, ա-
 նոր ալ տայ զեղեցիկ քերթուածներ յղանալու շնորհը, պա՛րանաւ, որ այդ
 շնորհին չընկերանայ վաղահաս մտնը, ինչպէս պատահեցաւ Պետրոս Դուր-
 եանին, Մեծարենցին, Տէրեանին, Չարենցին ու Սեւակին:*

*Թերեւս ուրիշ օր մըն ալ մեր ազգակիցները համոզուին, որ մեծագոյն
 զօրավարներուն եւ արտակարգ գիտուններուն փառքերէն աւելի մնայուն ու
 դրեթէ յանրժական փառք մը կը պարզուեն Պօպլէրները՝ իրենց ազգին:*

*Պօպլէր ո՛չ միայն յետիններէն չէր արարածներուն, այլեւ շատ բարձր
 էր իր սիրան կամ արհամարհած մարդոցմէն, հակառակ անոր, որ իր ապ-
 րած շրջանին շարժարանքէ զատ շատ վարկ չտուցաւ իր ժամանակակիցներէն:*

Շարժապատկերը, պատկերասփիւռը, եւ գալիք ուրիշ նոր հնարքներ անկասկած որ արհամարհելի հնութիւններու պիտի վերածեն այն լեռնակուտակ դրականութիւնը, որուն հեղինակները ատուելի կամ նուազ չափով հետաքրքրական, յուզիչ եւ զուարթացուցիչ դէպքեր հնարած ու պատմած են առանց բանաստեղծական շնորհի, եւ յարածուն կերպով կը շարունակեն պատմել, նկարագրել իրական ու երեւակայական պատմութիւններ, հաճելի ժամանց մը պարզեւելով ընթերցողներուն, որոնց ջանջախիչ մեծամասնութիւնը դեռ կը գոհանայ դպրական հանրային կրթութեամբ, քանի որ չի ճանչնար զեղարւեստական վերացումը, բայց կարծես թէ հեռաւոր կերպով կը զգայ անոր գոյութիւնը։ Ատոր համար է թերեւս, որ, ժամանակի ընթացքին, դրեթէ բոլոր անարուեստ գրողները մոռացութեան կը արուին եւ կը մնան այն հեղինակները, որոնք արձակ կամ տաղաչափեալ գործերու մէջ յաջողած են դնել բանաստեղծական շնորհ։

Տեղն է շեշտելու, որ տաղաչափութիւնը կամ ոտանաւորագրութիւնը որեւէ գրութիւն բանաստեղծութեան չի վերածեր։ Զգացում, յուզում կամ մտածում յայտնել՝ ընդունուած կաղապարի մը մէջ ձեւաւորուելով, բանաստեղծութեան չի մտեցներ գործը, երբ արուեստի շնորհը շունի գրողը, եւ երբ միայն խօսքերը չափելով, ձեւելով ու տրամաբանութեամբ տողերու վերածուած են։

Բանաստեղծութիւնը այն հիմնական տարրն է, որ բարձրագոյն արուեստի գործերէն կը ծորի եւ տակաւին ո՛չ ոք կրնայ ճշգրտութեամբ սահմանում մը տալ անոր, որովհետեւ գիտութիւնն ու ճարտարարուեստի յառաջացումը բաւական չեն սահմանելու մարդկային էութեան ամէնէն նուրբ ու ամէնէն բարձրորակ ծալքերը։ Երանի՜ թէ չքանդուի այդ խորհուրդը։

Իսկապէս գեղեցիկ կամ գեղարուեստականօրէն իսկապէս մեծարժէք քերթուածը աշխարհի բոլոր նիւթական հարստութիւններէն վեր կը նկատուի քաղաքակիրթ աշխարհին մէջ, մինչ շատեր մեր մէջ տակաւին կը խորհին, որ պարզ ուտելիքի մը չափ իսկ արժէք չունի...

Բայց ի՞նչ կ'անցնի-կը դառնայ մեր շուրջը։

Մեր օրերուն, ի՞նչ չափով բանաստեղծութիւն կայ արուեստի գործերուն մէջ։

Քաղաքակիրթութեան պատմութիւնը թերեւս օր մը յաջողի պատասխանել այս հարցումին, երբ խելացիոր մեր վազքին մէջ ժամանակ դտնենք սուրճանանալու, փակելու մեր ականջները ժխորին դէմ եւ փակելու մեր աչքերը մեքենականացած աշխարհի մը դէմ։ Երբ, ուրեմն, յաջողինք մեր ներքին թանկագին լինելութիւնը տեսնել եւ լսել, թերեւս ըմբռնենք, որ դարէ մը ի վեր մեզի հրամցուած նորութիւններէն շատ շատեր, փոխանակ մեզ մտեցնելու արուեստի մարդկային էութեան, մեզ հնուացուցած էին ճշմարտութենէն ու փորձուած էր մեզի պարտագրել ոչ-մարդկային լինելութիւններ։ Յիշեցէ՛ք Անտերսընի «Իշխանիւն նոր լաթերը»։ Պէ՛տք է, որ տգիտութեամբ չամբաստանուելու վախով՝ անտեսանելի, անդոյն կերպասին գեղեցկութիւնը դժվենք։

Անարուեստ փորձարկումներուն փաղանգը կ'աճի օրէ օր։

Անտարակոյս, իսկական արուեստագէտներու թիւն ալ կ'աճի, բայց աղժուկին մէջ յաճախ կը շփոթենք լաւը գէշին հետ։

Վերջին կէս դարու բանաստեղծներէն շատեր, իբրեւ զլիսաւոր մտահոգութիւն՝ ջանացին չկրկնել հինը ու փնտել ինչ որ չէր յղացուած տակաւին։ Բայց բանաստեղծութիւնը ամէն իսկական բանաստեղծի դրիչին տակ թերեւս

ալ կրկնութիւնն էր այն մարդկային աննիւթական լինելութեան, որ կը ձգտէր իմացական ու հոգեկան նոյն վերացումը բերել մարդոց: Այդ վերացումը առաջին մը արբեցութիւնն էր, որուն կը գիտակցի միայն մարդը՝ հանգէտ արուեստի գործին, եւ որ անփոփոխելի ու միշտ անբացատրելի խորհուրդ մըն է: Փոյ էլիսար կ'ըսէր, որ բանաստեղծը ներշնչուած մարդ մը չէ, այլ՝ ներշնչուող: Այսինքն՝ մարդիկը կը մղէ գիտակցելու բանաստեղծութեան խորհուրդին, որ մէկ է ամէն տեղ ու ամէն տանն:

Ի՞նչ է, ուրեմն, փնտռուած նորութիւնը: Քերեւա ալ նոյն բանը ասոր բեր բռնեցող ու ձեւով ըսելն է նորութիւնը: Այսպէս պնդեցին շատեր ու փորձեցին պարտապահել իրենց համոզումը, ինչպէս որ մասամբ յաջողեցան ապստիլ նկարչներն ու քանդակագործները:

Որքան տանն, որ նոյն հիմնական ասորը կը յղանան անձամբ զնոր՝ ձեւերով, կարելի է միայն յատալ, իմութեան վերադրել կզանը, եթէ ո՛չ՝ գիտական յառաջացումի պատշանեցման:

Այդպէս է, որ խոկական արուեստագէտներ գափննկասկ շահեցան այնպիսի յղացումներով, որոնք մինչեւ այսօր անընդունելի կը նկատուին արուեստը արհեստէն շղանդաճող եւ արուեստի անգիտութեամբ սաստազոյ մեծամասնութեանց կողմէ: Այս շփոթութեան գլխաւոր հեղինակները այն հետեւի անարուեստներն են, որոնք բանաստեղծի շնորհն գրկուած էին, բայց ճարտիկ զարուեստ նախողներ էին, թիւով շատ մեծ, քան իրական արուեստագէտները:

Նորակացութիւնը գծուար չէ գտնել:

Նրբ դարձ մը իր պարունակած բանաստեղծութեամբ կը յաջող գեղարուեստական գոհացում եւ վերացում բերել արուեստասէրներուն, ընդունելի է, եթէ նոյնիսկ բոլորովին նոր ու անծանօթ միջոցներով ու ձեւերով կոսուցուած է:

Արդիականութիւնը չի կայանար բանաստեղծութեան ջնջումին մէջ, այլ՝ յաւերժական այդ լինելութիւնը նոր միջոցներով ապուն մէջ:

Իսկ թէ պայման է արդեօք արդիական ըլլալ՝ մեր օրերուն արուեստագէտ ըլլալու համար, շատ կասկածելի է:

Եթէ Առտուած լսէ հայ Պօպլէրներու խնդրանքը, բանաստեղծներ պիտի ունենանք «հասկնալի» կամ անհասկնալի լեզուով արտայայտուող: Բայց Առտուած կ'ըրբ լսած է մեզ...

Կարելորը ո՛չ թէ նոր ըլլալն է, այլ՝ յաւանանապէս մարդկային, յաւանանապէս ընդունելի:

Մեքսիկո, 1983

ՄԿՐՏԻՁ ՀԱՃԵԱՆ

ՄԱՅԻՍ ԱՎԿԱՆԻԿԵԱՆ



Ներկայ տարուան Փետրուար Են, Հայաստանի մէջ մեռաւ Ժանօթ գրականագէտ, բանասիրական գիտութիւններու տաղթոր եւ Մ. Արեղանի անուան գրականութեան ինստիտուտի Հայ Հին եւ միջնադարեան գրականութեան բաժնի վարիչ Մայիս Ավգանիկեան, զուտարը՝ Նշանուոր պատմաբան եւ բանասէր Թադէոս Ավգանիկեանի: Մայիս Ավգանիկեան ծնած է 5 Ապրիլ 1918ին, Երեւանի Նաճանգի Իզդէր գաղաքը: 1935-1940

Թուականներուն, Հետեւած է Երեւանի պետական Համալսարանի բանասիրական ճիւղին, իսկ 1942ին սկսեալ շարունակած է Համալսարանական բարձրագոյն ուսումը՝ զիջակար ունենալով Հայագէտ Մ. Արեղանի:

1946ին պատրաստած է բանասիրական գիտութիւններու թեկնածուական իր թեզը՝ «Նախնորդ կնիւանցի» թեմայով, իսկ իրեն տաղթորայի թեզ պատկանած է «Հայ գեղարվեստական արձակի սկզբնաւորումը» տեսն ուսումնասիրութիւնը, 1972ին:

Մայիս Ավգանիկեանի ուսումնասիրութիւններով ու շնչերով սկիզբ կը դրուի «Միջնադարեան հայ տաղերգուներ» մատենաշարին, որուն Հատորներէն մէկը՝ «Գրիգորիս Աբամարցի» զարմեալ իրագործած է ինք: Իր մասէն կարճ մամուլի մը տալով, լոյս էրնեայէ ուրիշ ուշագրաւ ուսումնասիրութիւն մը՝ «Յայտնաւարէ» ժողովածուները եւ Երանց պատմագրական արձեւք:

Իննիսականի թէ Երեւանի մէջ՝ Մայիս Ավգանիկեան երկար տարիներ տալիս է Հայ գրականութեան պատմութիւն, աշխատած է նոյնպէս կրթական նախարարութեան մանկավարժութեան գիտահետազոտական ճիւղին մէջ, մատենակցիով զպրօֆեսոր Երանցի եւ զասպարէսու ստեղծման զործին:

1977ին սկսեալ ա՛ն կը վարէր գրականութեան ինստիտուտի Հայ Հին եւ միջնադարեան գրականութեան բաժնի վարիչի պաշտօնը:

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԸ ԵՒ ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Եթէ Մայիս-Նովան մի Հրաշալի միջոց էր Չարենցի 20ական Թուականների գեղարդիական սկզբունքների գրականութեան Համար, այսպէս նարեկացին այն կախարչական գաւազանն էր, որի հպումն իսկ բաւական էր Հրաշքներ գործելու: Գաղափարապէս մերժուած լինելով, նա բանաստեղծական այն դազաթիւն էր, որի սկունքներէց առատորէն իր «Ժարան» էր ջարժուած նոր դարի մեծ բանաստեղծը:

Վերը մենք տեսանք նրա անարդար, նոյնիսկ անպատշաճ արտայայտութիւնները մեծ բանաստեղծի հասցէին՝ պրոլետարական գրականութեան ըստեղծման ճանապարհին, բայց զա չկտոնեցրէց Չարենցին բազմէց Հրաշքուրէիւ նարեկացու բանաստեղծական Հանճարով, դիմելու մեծ բանաստեղծի թէ՛ պրոետական գիւննոցին եւ թէ՛ մանուաւնը կեանքի վերջին տարիներին Հոգեկցուելու մարդուն կատարելութեան մղող նրա ստեղծագործութեանը: 1937 Թուականի Ապրիլի 13ին գրուած՝ «Տուր ինձ, ով այդդոնեան արեւ, նժարն այս Հոգեւոր, որպէսզի կարողանամ ոչ միայն ցանկալ, այլեւ կատարել, ոչ միայն ձգտել, այլեւ Հասնել, ոչ լսկ ընթանալ, այլեւ՝ տալ ընթացք գիտակցական եւ անյեղի...» օրագրութեան անտարտ այս աւարտը գրաւ անկասկածելի վկայութիւնն է... Անվարան Հաւատքի անմեկնելի գրականութեանը իրական կեանքում մերձեցնում էին տասնեակ դարերով միմեանցից Հեռու, իրենց դարաշրջանները շփոթող երկու մեծ բանաստեղծներէ, որոնց Հոգե-

չունջ ժառանգներից ծախք առած հուրը ինչ որ մի տեղ միանում էր հայրենի դրակահույժեան երկնային ուղորտներում :

... Ինչպէս դարեր առաջ վկան Նարեկացի —
Քեզ եմ յգում ես յզբոս, ով Արարիչ,
Ես՝ մեզաւոր քերթոզս աստուածաբաշ դարի,—
Վաղ աղբամուղըն այնքան ըզմեալ Այգաբացի

Մայրամուտի փոխուց արիւնդին...
Եւ ես դիմում եմ Քեզ, ով Արարիչ դարձնուի,
Ինչպէս վկան մեր էին՝ Նարեկացին,—
Քանզի — կարօտ սգու եւ անարիւն հացի,—
Տեսնում եմ լուկ — կացին արեգնացեալ :

Եւ ես — տխուր ինչպէս վկան Նարեկացի՝
Եւ գարիւրեալ այնպէս, եւ մեռակեաց՝
Ջարիւրելի կեանքի հանդէպ անօգ կանգնած՝
Ես ա՛ւմ դիմեմ, ով Տէր — արդ՝ Քեզանից բացի .
Ինչո՞ւ այսպէս անօգ ես մնացի .
Եւ այնքան բորբ՝ յանկարծ անկերպադար հանգաւ
Անդրդուելի հաւատս՝ զԼսի գալիքն անգաւ,—
Եւ ինձ գերող ներկան — դարձաւ անծիր
Եւ ներքողներս՝ յղած ծագող այգաբացին,—
Ոչ երգերով իմ լուկ, այլ եւ արեւմբ իմ բորբ
Ողբ ու տրտուեց դարձան եւ փոխուցին լացի...

(«Ծրական թերթ»,
1967, 12 Մայիս, էջ 3)

Բերուած օրինակները նորից հաստատում են այն իրողութիւնը, որ սրեւէ հեղինակի ստեղծագործութեան մէջ անցեալի ժառանգութեան նստը-
լածքը ուղիղ համեմատական չէ այնտեղից քաղուած օրինակների քանակին :

Չարենցի ժառանգութեան մէջ, ինչպէս տեսանք, հայ հին գրականու-
թեան հետ ունեցած առնչութիւնների քանակը մեծ տոկոս չի կազմում, այն
ստեղծ է, բայց գրեթէ աննշան իր բազմեթակ ու բազմահարուստ սկունքնե-
րում :

Եղիշէ Չարենցի սերտ կապը հայ անցեալի գրականութեան հետ առա-
ւել օրգանական է, ընկերային . զա բանաստեղծի ազգային նկարագրից է բը-
խում, նրա՝ բնաշխարհիկ մտածողութեան ըմբռնումների, լեզուական աւանտ-
նայտակութիւնների իրացման, ընկալման ու արտայայտման բնորոշ գծերի
միասնութիւնից : Ինչպէս հայ հին գրականութեան հետ Չարենցի առնչու-
թեան ամէն մի կէտ կարող է յատուկ ուսումնասիրութեան նիւթ դառնալ,
այդպէս էլ առանձին քննութեան յատուկ նիւթ է սալիս Չարենցի բանաստեղ-
ծի՝ հայ անցեալի պոետական արուեստի հետ առնչուող ամէն մի խնդիր,
որոնցից մի քանիսը շարադրում ենք ստորեւ .

1. Չարենցի լեզուական ժառանգութիւնը, անգամ իսկ ամենանորարա-
րականը, զարմանալիօրէն հարուստ է գրութարիւմն, մենք կ'ստէինք՝ Նարեկա-
ցիական բառապաշարով, բառաբարդութիւններով, բառաստեղծումներով,
ողջակէզ, յուրթ ոտկի, կեանքը մթաբ, արեւատ, բոցկլտուք, կարեր, ժորժո-
քում եւ մարմանդ, աշխարհը հեկեկանք է, երբում է պատկերք, շուրջ
զալարք է, կարմիր ու մառ, խարոյկ է ճարճատուն, կրակներք ջո հատու,
խաւարք անսփոփ, կը շաշեն, կը շառայեն հրատուրք, լուսանձմ, անբասիր,
բախտազուրկ, սիրտս կրակուն, շէնքերը բիւ, արնածոր, կէշ, եւայնն :

2. Ծարահիւսական կառուցումով. յետադաս ածականներ, որոշիչ-

ներ՝

- Խինդը այսօրուայ եւ թոխըը մեծ
- Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ, Բաքո՛ւ
- Յուշի պէս թեւ մի բարակ
- Երկիր իմ սիրտդ արդեօք
- Երկիրը մառ
- Եւ ինչու համար իմ մարմինը լոյս,
- Մարմինը մարող, մարմինը հիւանդ
- Օրերիս նման անդարձ ու վսեմ
- Երկինքը թխակալ... եւայլն:

3. Ետադաս ենթակայ (նախ. ստորոգեալ).

- Ճամբայ եմ ընկել ես մենակ
- Երգում է սիրտս մանուկ
- Դոփում են, զոփում են, դոփում են միերը
- Աղմկում է իմ սրտում ամէն գիշեր մի կարօտ
- Երեւում էին մութ հեռում
- Փողոցի կրակներն երեքուն
- Փլչում են շէքերը բարէ
- Նետել է երկաթէ մի ձեռք
- Երգում է քաղաքն իր երգն առօրեայ
- Մխում է սիրտս հիմա որք,
- Մխում է սիրտս բախտազուրկ... եւայլն:

Բայց միայն լեզուն, բառապաշարն ու շարահիւսութիւնը չեն Չարենցի պոեզիան կազմում միջնադարի հետ: Նա զարմանալի մի սկզբունք է ունեցել, թերեւս բնազդական ու տարերային, որ իրրեւ տեսական դրոյթ ձեւակերպուել է ուշ շրջանի՝ 30ական թուականների յօդուածներում: 1934 թուականի Յունիսի 28ին ՎԻեր գրական լեզուի զարդացման տեղեկեցները եւ Դեմիքեանի լեզուն» թեմայով դեկուցման մէջ այն միտքն է արծարծուում, թէ որեւէ գրողի՝ բանաստեղծ թէ արձակագիր, լեզուի արժէքը պէտք է լավուի ոչ միայն բառապաշարի ուժով, այլեւ տուեալ լեզուի ժողովրդական լեզուամտածողութեան առանձնայատկութեամբ. «Մի այնպիսի լեզու, որը պէտք է լինի ոչ միայն գեղարուեստական գրականութեան առաջատարը, այլեւ միաժամանակ լինի բարձր, ինտելեկտուալ, առաջատար մի լեզու, այսինքն՝ մեր պուշկինստիկայի, մեր դիտութեան լեզուն» (6, 311): Օրինակ բերելով Տէրեանի բանաստեղծութիւններից, նա գրում է. «Այստեղ զուք չէք գտնի եւ ոչ մի շեղում, ոչ քերականական եւ ոչ էլ առողանութեան տեսակէտից»: Բերելով «Տեսայ երազ մի վառ» տէրեանական տողը, նա գրում է. «Ամէն ոք այսպէս կարող է ասել. «Վերան փերուղ կամար», սա գրական հայերէն լեզու է, որը ուսուերէն երբեք չի ասուի: Այս ոճը յատուկ է միայն մեր լեզուին: Հետաքրքիր են այստեղ նաեւ հետեւեալ տողերը. «Ներկու նիդակ տեսայ» կամ թէ «Արեւըս աւ...»: Մա լեզուական ազգայինն ձեւ է: Ոչ մի ազգի լեզուում այսպիսի լեզուական արտայայտչական կուլտուրայի չէք հանդիպի: Ռուսերէնում այսպէս բոլորովին հնարաւոր չէ ասել» (6, 321): Վերջի վերջոյ գիւրաբանիւր լեզու պարունակում է առանձնայատուկ մտածողութիւն, — գրում է Չարենցը: — Լեզուն արտայայտում է տուեալ ժողովրդի մտածողութեան ձեւը. սա, ի հարկէ, միայն մեխանիստական արտայայտութիւն չէ եւ մեծ ամեն կերպ պէտք է աշխատեմք, որպէսզի մեր լեզուն չանցնի այնպիսի միլիթիքովկայի, որ սչնչով չտարբերուի միւս լեզուներից»:

*Տեսական այս դրոյթը, որ, ինչպէս ասացինք, Ջարենցի՝ արդէ գրա-
կանութեան սկզբունքներէ առիթով էր արձարծոււմ, զարմանալիօրէն կէ-
քառուած ենք տեսնում նաեւ նրա վաղ շրջանի ստեղծագործութիւններում.*

- Այս խօսքիս չախտիմք խառնի
- Կարօտներն գագաթն է այն՝ վերջին բնար
- Քոյր, կապել եմ քա աչերում ծիածան
- Քո Ջարենցին լեզու տուող երկիր Հայաստան
- Քուն եմ փնտրում ու անդորր օրերս հին ու անցած
- Ինչն է երազն այս աշխարհաւեր կախուել մեր գլխին
- Ուղեղիս բարբոս կտաւի վրայ
- Իրանից նետուած Նայիրի
- Գլուխը դրած Գանաքէն, ոտները Մասիս է երկարել
- Մի անգամ քոզ կեանքդ արեւի
- Սահմանուած ձեռքով մի վերին՝
- Անխախտ եմ կարծել այս տունը:
- Լոյսից սփրթնել եմ անպերդ տեղ տեղ, եւայլն:

*Այստեղ խօսքը լոկ մետաֆորներին՝ այլաբանութիւններին չի վերաբե-
րում, այլ Հայերէնին բնորոշ այն դարձուածքներին, որոնք կենդանի եւ հա-
րողատ են դարձնում քանաստեղծի խօսքը:*

*Մի առանձին ազգային երանդ է տալիս Ջարենցի ստեղծագործութեանը
նրա բնապատկերային շերտը: Չհաշուած վաղ՝ սիմվոլիստական շրջանի մի
քանի, ինչպէս ինքը կ'ոտէր՝ ճիւղվելիքովկայի ենթարկուածո ոտանաւորներ,
Ջարենցի քանաստեղծութիւններէ պատկերային շերտը հայկական պէյզաժն
է, հայ բնայտարհը: Աւելի ճիշդ՝ նոյնիսկ սիմվոլիստական ընդունուած Ե-
րազային պատկերներէ հիմքում զարմանալիօրէն սովոր է հայկական լեռնաշ-
խարհը:*

- Որպէս հսկայ ադամանդ, տե՛ս գագաթը ձիւն
Բոնկուել է իրիկուայ կապոյտի միջում,
Յուշ չի դառնայ ձիւնը՝ ջինջ գագաթի վրայ,
Սիրտս սառոյց, սիրտս ձիւն կրակի վրայ:
- Զիւնապատ լեռներ ու կապոյտ լճեր
Երկինքներ որպէս երազներ հոգու...
- Մի ոսկեգոյն բոզ եմ հագել դաշտ, ամտառ ու սէզ
- Ու լեռնային երկինք տանող ձիւնածածկ ուղին
Հրածեշտ է տալիս հիմա բիլ մառախուղին:
- Հուր հովը հոգու՝ երդեհուած հիմա —
Լեռնային վանքի խաչերի վրայ:
- Երգում էր անուշ գանգը հնամեայ
Ու քախտում էին դորշ քարերը հին:
- Ահա նստած ես տան դէմ եւ կանաչած քթերին
Գեւմէնդ ստուեր է գցել մայր իմ անուշ ու անգին:

*Հայրենի երկրի պատկերներէ հէնքում տուելի ապշեցուցիչը հայ բը-
նայտարհի դունային առկայութիւնն է՝ բառիս բուն իմաստով երանգապնու-*

կը, որ նրան տարբերում է մեր միւս բանաստեղծներից: Չարենցի պոեզիան շուայում է անխառն գունային շարքով: Կարժիբը՝ բոբբ, կայոյար՝ ջինջ, դեզինը՝ ոսկի, ճիշդ եւ նիշդ սարեանակամ բնանկար պոեզիայով: Սա մի չափազանց դրողեցուցիչ թեմա է՝ Չարենցի բանաստեղծութեան գումային պատկերը, որ յայտուկ քննութեան առարկայ կարող է դառնալ: Մենք կը բաւականանանք միայն օրինակներ բերելով:

- Հրատ, երաշէկ սկիւն արեւի՝
Հրդեհուած հագու հովն է ելելի:
- Ու վառոււմ էր կապոյտում արեւի սկիւն...
- Ու ցայտում է նա — մի սկի թիթեռ
Իսկ երկինքը կայ — ու կապոյտ է դեռ:
- Թող բորբոքուի, թող վառուի կրակում
Քա տնշադախ, քա կարմիր կրակում: —

Որքան էլ իրատացի են Չարենցին սինվոլիզմի հետ կապող գրաքննագատները, նրանք ինչ-որ չափով միակողմանի են: Սինվոլիզմի էսթետիկայի բոլոր տարրերի առկայութեամբ հանդերձ, Չարենցի պոեզիան տարբերակելի մի էական յատկանիշ ունի. դա նրա ազգային գունաւորումն է, նոյն կապոյտի, ոսկու, մանիշակագոյնի բնաշխարհի երանդներն ու դրանով պայմանաւորուած միջնադարեան մանրանկարչութեան գունային աւանդները՝

- Խաչը վանքի, երգը գանգի — կապոյտում վերջին
Ջւրթիթ, գարթիթ կապոյտ աղջիկ ու նայիք խաչին...

- Որքան էլ սինվոլիստական, բայց՝ հայկական բնանկար:
- Հրափթիթ վարդերի սկիւնը, մաքուր
Գարնանային երեկոյ է, քա մարմինը քոյր...
 - Գարնանային երեկոյ է, ուր արեւը հիւր
Մայր է մտնում՝ արնաշաղախ ու կարմիր, կարմիր...
 - Կապոյտ կարօտը մեռաւ: Խառնուց հրին...

Եւ մէկը կարծես քաղուած ամբողջութեամբ միջնադարեան գանձերից.

- Արեւն իջաւ — մօտ է ծիրին
Փառք հրաշէկ երկնաւորին...

Պատահական չէ բանաստեղծի խառնուածքին բնորոշ այն դիպուածը, որ պատմում է ճարտարապետ Միք. Մազմանեանն իր յուշերում Փրանսիական նկարչութեան պատկերասրահ այցելելիս, որտեղ ներկայացուած են լինում իմպրեսիոնիստների, ետիմպրեսիոնիստների, կարիստների եւ այլ ուղղութեան կտաւներ, Չարենցը անհաղորդ է մնում կարիստների եւ «միւս ճարիների» գործերին եւ, ընդհակառակը, անջնջելի տպաւորութիւն է ստանում իմպրեսիոնիստներից Մոնէի ջինջ գոյներից (զգմայլուած էր բնութեան այդ ճշգրիտ պատկերումից) եւ մանաւանդ Պոլ Գոգենից. «Չարենցին դուր եկան ոչ միայն Գոգենի կտաւների վրայ բոցկլտացող գունային խաբոյկները, այլեւ նրանց մէջ տիրապետող... փոքր-ինչ վշտոտ արամադրութիւնը, որոնցով սոսորուած էին բոլոր թայթիստիկների դէմքերը» (Ս. Աղաբաբեան, Եղիշէ Չարենց, հատոր Բ., 1977, էջ 195):

Ինչպէս չենք խօսում գերիշխող կարժիբի մասին «Սոմա», «Ամբոխները խելադարուած», «Իէպի սպազան» ու չարենցեան յիդադոնիական այլ ստեղծագործութիւնների մէջ.

Հեռու, մտտիկ, ընկերներին, աշխարհներին, արեւներին,
 Հրամանաւ հոգիներին,
 Բոլոր Երանց ում որ հոգին վառոււմ է վառ,
 Բոլոր Երանց հոգիներին արեւալուստ,
 Վեամբի մտտի աշխարհի ազգամուտում,
 Հրամանաւ հոգիներին ողբոյն, ողբոյն...

*Չմոռանանք, որ սա Եղիշ Զարենցն է՝ ամէն բարը, յափը, ոտքը իւր-
 տազոյնս ընտրած մի բանաստեղծ, որ նամակով իսկ ինքրում էր հրատարակ-
 ին փոխել իր պոեմի սկսուած քերթում ընդամէնը մի քանի տող ընթացողի
 համար աննկատելի տարբերութիւններով «Հիմա ես ուզում եմ մի անէական
 փոփոխութիւն մտցնել նրանում...» (4, 402): Յօսքի նկատմամբ ահաւոր
 խստապահանջութիւնը նրա պոետական հաւատամքն էր, ինչպէս Բակունցի-
 նը՝ արձակում:*

Դու մկատն*լ ես, որ շատ անգամ
 Մի հնչիւն, մի յանգ, մի միտդի,
 Անգամ մի ասանան, անգամ մի յանգ
 Երգը փոխում է յանկարծ անկամ կարտի:
 Կամ դաւաճան շեշտեր, կամ ուրիշներ, բառեր,
 Երբ քաշում է դակտիլը, ըմբոստացիր: —
 Պոետ ես դու, այսօր պիտի մտաւոն
 Եւ չի օգնի Էստեղ Բեզ գնդացիքը,
 Եւ չի օգնի սուիմը...

*Եւ նոյնիսկ այնտեղ, որտեղ չէր օգնում սուիմն անգամ, օգնութեան
 ձեռք են մեկնում իմացութիւնները, գիտելիքները, տառնդները՝ այս դէպ-
 քում՝ մայրենի գրականութեան ականջները, որոնց մասին նա խոստովանում
 է գրողներին ինչ համազումարում: «Որպէս օրինակ ես վերցնում եմ հայկա-
 կան պոեզիան՝ նրա անցեալով եւ ներկայով: Վերցնում եմ հայ պոեզիան, ու-
 բովհետեւ այն ինձ աւելի ծանօթ է, քան որեւէ այլ աղբային գրականութիւն:
 Եւ ես տեսնում եմ, որ այնպիսի վարպետներ, ինչպիսիք են մեր միջնադար-
 եան աշխարհիկ բանաստեղծները, «այդ հանճարեղ ճորտերը», չի կարելի
 գտնել ուրիշ ոչ մի գրականութեան մէջ: Ի հարկէ, ոչ թէ նրանց հանճարե-
 ղութեան, այլ գոյնի եւ երանգների, ձեւի եւ նիւթի մշակման ինքնատի-
 պութեան իմաստով: Այսօր նրանք մեծ օգնութիւն են ցոյց տալիս ինձ կեր-
 տելու այնպիսի ձեւեր, որոնք արմատապէս տարբեր են խորհրդային միւ-
 ժաբոր պոետների գործածած ձեւերից...» (5, 273): Ուրեմն՝ Զարենցի հա-
 մար ոչ միայն գրականութեան բովանդակութիւնը, «ժամանակի շունչ լինե-
 լու» յատկութիւնն է կարեւորը, այլեւ ոչ պակաս նաեւ ատաղձը՝ լեզուական
 բարձր կուլտուրան, ազգային ձեւը, ձեւի եւ բովանդակութեան միասնու-
 թիւնը:*

*Այդ միասնութիւնը կարող էր ստեղծուել նոր օրերի աշխարհայեացքի
 եւ հնամեայ ժողովրդի ազգային մշակոյթի գեղագիտական ներդաշնակու-
 թեամբ, որը եւ առաւել զիսուկ, քան որեւէ մէկը, բնութագրել է ինքը՝ Եղի-
 շէ Զարենցը իր գիտախոսներում...*

Կարո՞ղ ես Բեզ կոփել այնպէս,
 Որ քո մէջ ամփոփես անցնալը,
 Բայց եւ լինես անկաշունս — նոր քան նորերը բոլոր (4, 421):

(Հատուած) ՄԱՅՐՍ ԱՂՂԱԼՔԵՅԵԱՆ

Մ. Ս. Հ Ե Ր Կ Ե Լ Ե Ա Ն

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆՈՐ ԴԷՄՔԵՐ

Ա Ն Ա Յ Ի Տ Ը



Չնայած, որ բեմադրութեան միւս հերոսներն էլ ենց զբաժանուրդիական կայութեամբ եւ խել-զիրենքով իրար նման են, աշուտամենայնիւ, նըրանց մէջ մէկը առանձնաւոր է: Դա Մարի Օկտոբերն է, որի ճակատագիրն աւելի բարդ է, ապրած հոգեկան դրաման՝ խորը, վարքադիմը՝ առաւել հերոսական: Ու թէն, սեփնորն առանձնապէս չի կարելորել սոյն հանգամանքը, այնուամենայնիւ, բեմադրութեան մէջ դառաւորի ու պայքարի ընկերներէ շարքում իր ուրոյն հմայքով արձրանում է, ընդգծւում յատկապէս այս ուժեղ ու հմայիչ կերպը, որին անմուտրել է Անահիտ Թոփչեանը: Վերջին շրջանում մեր հեռուստատեսագրութիւններում մի շարք կարեւոր դերերով հանդէս եկած շնորհալի դերասանուհին յաջողութեամբ անձնաւորեց նաեւ Մարի Օկտոբերի բարդ ու դրամատիկ կերպարը:

ԱՐՄՈՒԻ ՅՈՒՆԱՆԵԱՆ



1968ին, երբ Երեւանի Դրամատիկական թատրոնի բացումը կը կատարուէր, Անահիտը նոր ընդունուած էր պետական համալսարանի բանասիրական բաժինը: Դրամատիկական թատրոնի հիմնադիր եւ գեղարուեստական ղեկավար Հրաչեայ Ղափանեան կը կոտակէ ուսանողուհիին թատերական քարեմասնութիւնները ու թատրոն հրաւիրելով՝ անոր կը վստահի ի. Շտոկի «Աստուածային կատակերգութիւն» թատերգութեան գլխաւոր հերոսուհի Եւայի դերը:

Առանց թատերական մասնաւոր կըրթութիւն ստացած ըլլալու, Անահիտ Թոփչեան բեմ կը բարձրանայ, ապաւինած միայն ի վերուստ իրեն շնորհուած

դերասանուհիի խառնուածքին: Անոր անձնաւորած Եւան Աստուծոյ ստեղծած առաջին կիներն է, նախամայրը, սակայն, նոյն ատեն, ժամանակակից կերպար է ան, խելացի եւ օժտուած սուր լիզուով մը: Գիտակից իր գեղեցկութեան, Անահիտ-Եւան կրնայ առանց տատամակուռ ճշայտարարելը՝ ճշմարտութիւնները, անսարով կնոջական իր բուռն բնազդներուն: Քմահած է ան, համարձակ, որոշ շարժով շար, սակայն ամէնէն աւելի աղաւաղանէ է, որ կը նախընտրէ տփնաջան աշխատանքով ձեռք բերուած տառապալից ազատութիւնը՝ հանդատուէտ ու երջանկութիւն խոստացող եղեմական բռնապետութիւնէն: Գաղափարական այս բովան-



դակութիւնն է, որ առակարար կ'իմաստաւորէ թէ՛ տուեալ թատերգութիւնը, թէ՛ Եւայի կերպարը:

19-րդ դարի եւ դրեթի անփորձ պարմանուհի մը համար դժուար էր իրապէս մարմնաւորել նման կերպար մը, սակայն շնորհիւ բազմալատակ բեմադրիչ եւ փորձառու դերուստոյ Հրաչեայ Ղափլանեանի ջանքերուն, թատերական առաջին իսկ ելոյթով՝ Անահիտ կրցաւ յաջող զընկերութիւն մը անցընել, արդարացնելով դերուստոյն իր մէջ կուսակցութեան շնորհներուն ճշմարտութիւնը: Հայրենի բեմին վրայ տեսնելով նոր աստղ մը, բեմադրիչներն ու բեմադրիչները յաջորդող տարիներուն անոր առջեւ յայնորէն բացին թէ՛ թատրոնի, թէ՛ պատկերասփիւռի եւ թէ՛ շարժանկարի ասպարէզներուն դուռները, ու Անահիտ՝ տասնչորս տարիներու ընթացքին, մարմնաւորեց կնոջական յիսունէ աւելի տարբեր կերպարներ:

Հայրենի հմուտ թատերադէտ Ռուբէն Զարեան, իր յօդուածներուն մէջ Անահիտի մասին ընդհանրապէս գրուածական խօսքեր արձանագրելէ ետք, կը հաստատէ, թէ «Թոփեանցն ի վիճակի է հաւասար յաջողութեամբ պատկերել ընդհանրապէս բնական կերպարները»:

Կնոջական հակադր բնատրութիւններ յաջողութեամբ մարմնաւորելու ունակութիւնը տրուած է միայն արուեստագէտի ներքին կրակով օժտուած դերասանուհիներուն: Անահիտ օւնէր այդ կրակը, կը մնար բոցավառել զայն, որպէսզի հետագային կարենար խաղալ «Գարմեն»-ը, «Բլիմենդին»-ը, «Մարի Օքթոպր»-ը, «Կերթրիս»-ը եւ նման այլ կերպարներ, բարդ ու դժուարամտոյնի:

Եթէ Եւայի դերով Անահիտ իբրեւ դերասանուհի լայն ուշադրութեան արժանացաւ, ապա Գարմենի մարմնաւորումը մէկը եղաւ ինքնահաստատման իր նշանակալից դերերէն, Պերլանդայի «Դանի»-ն» խաղին մէջ, որուն բեմադրիչը դարձեալ Հրաչեայ Ղափլանեանն էր:

Գարմեն գեղեցկութեամբ բախտաւորուած էակ մըն է, բայց գահիճի մը աղջիկը եղած ըլլալու դժբախտութիւնը ունի: Այս հանգամանքը արգելք եղած է իր կերպարապատկերին մէկուն հետ ամուսնա-

նալու: Իր վերջին տարիածունն եւ ամուսնութեան յոյսը Յոսէ Լուիսն է, որ հօրք սաղբանքներուն ակամայ ենթարկուելով՝ դատապարտուած է, իր կարգին, դահիճ մը ըլլալու: Անահիտ-Գարմեն պատուախնդիր է ու հպարտ: Մէկ կողմէ ամուսնանալու բռնած տենչն ու երջանկահալու հեռանկարը եւ, միւս կողմէ՝ կնոջական հպարտութեան ու պատիւի զոհարբումը երկուութիւն մը կը ստեղծեն անոր սրբոնի: Անահիտ թոփեան կրցաւ ապրիլ այս բոլորը ու իր արտաբերած խօսքերուն զուգահեռ՝ դիմախաղերու եւ ակնարկներու փայլատակունտներով հանդիսատեսը հաղորդակից դարձուց անձնաւորուած տիպարին ներքին բախումներուն:

Միայն 1977ին, Գրամատիկական եւ պատկերասփիւռի թատրոններուն մէջ, Անահիտ թոփեան յանձն առաւ խաղալ գլխաւոր հինգ դերեր: Արդիւսէի ծանրաբեւեռութեամբ մը ինքնին բախտորոշ է ռեժիսորու արուեստագէտի համար, բայց Անահիտ կրցաւ յաջողութեամբ բոլոր դժուարութիւնները եւ յաջողութեամբ պտակեց անհամ Գլխաւորի եւ Մարի Օքթոպրի պէս բարդ կերպարները: Գ. Գորինի ՎՆՈՒՍՈՒՄԱԼ Հերոսաւորին» փիւսը, զոր Գրամատիկական թատրոնին մէջ բեմադրեց երիտասարդ եւ անպայման շնորհալի բեմադրիչ Արմէն Խանդիկեան, իր յաջողութեան զգալի մէկ մասը կը պարտի Անահիտի խաղարկութեան:

Հարեւանցի ծանօթութիւն մը տալու համար, յիշեցնենք, որ Ք. Ա. 356 թուականին, Հասարակ քաղաքացի մը, Հերոստրատ, կը հրկիւղէ յունական Եփեսոս քաղաքին մէջ կառուցուած աշխարհի եօթը հրաշալիքներէն մէկը՝ Արտեմիս դիցունհիին նուիրուած տաճարը: Գորինի թատերախաղը գրուած է պատմական այս ասանդութեան հէնքին վրայ: Այս հին ասանդութեան վրայ կառուցուած թատերախաղը բեմադրիչին մտայնացումով ստացած է ժամանակակից հնչեղութիւն մը: Հոն արժարժուած հարցերը համամարդկային են ու անժամանցելի:

Իր բեմադրիչի կարողութեան հետ՝ Երեւանի թատերասէրին համար Արմէն Խանդիկեան յայտնաբերեց թատերական



«Մոռացնայ հերոսարտին»
քասնքախազիմ մէջ, Գլխննդինի դերով

զրեթէ նոր հնարքներ եւ Փարսանովի «Նոսն զոյնը» բեմադրին բարերար ազդեցութեան տակ, հանրութեան ներկայացուց խորաթափանց եւ կուռ բեմադրութիւն մը, որուն ընթացքին տեղի ունեցած զէպքերու եւ հոգեվիճակներու թաւալումին լարուած ուշադրութեամբ կը հետեւի հանդիսատեսը: Օչտագործուած խորհրդանշանները բազմազան են, պատճառաբանուած ու թելադրական:

Անահիտ Թոփիեանին վիճակուած էր խաղալ Եփեսոս քաղաքի թագուհի Քլեմենդինի դերուարին դերը:

Անահիտ-Քլեմենդինը գեղեցիկ, հմայիչ ու փառասենյ թագուհի մըն է: Անի զօրաւոր անհատականութիւն, որուն ենթակայ է ամէնէն առաջ իր ամուսինը՝ արքան: Ինքնասիրահարուած անձ՝ ան չի բաւարարուիր իրեն շնորհուած գիրքով ու բախտով, այլ կ'ուզէ դասուիլ զիցուհիներու կարգին եւ այդ մարմաջին զոհացուծ տուողը կրնայ ըլլալ միայն Ար-

տեմիսի տաճարը հրկիզած՝ մահապարտ Հերոսարտաւոր:

Միջանկեալ նշենք, որ Հերոսարտի կերպարը մարմնաւորող Վլատիմիր Մըսրրեան, մէկ վիճակէն միւսը կատարած իր արագ ոտուածներով, սկսեալ ստորնաչոյն քծնանքէն մինչեւ թագաւորներն ու նոյնիսկ աստուածները արհամարհող կեցուածքները, կը զարմացնէր հանդիսատեսը: Մսրեան-Հերոսարտը կեանքի մէջ այլազան ու բազմաթիւ գրկանքներու ենթարկուած անձնաւորութիւն է: Խարած են զինք ամէն տեղ ու ամէն ատեն, նոյնիսկ ամուսնութեան մէջ: Ան ճաշակած է երեւակայի ու աներեւակայի բոլոր օտուտոյանքները, ենթարկուած է բարոյական քայքայման, դարձած է արհեստավարժ շարագործ ու կը հաւատայ, թէ «մարդկային լիտիութիւնը աւելի զօրաւոր է աստուածներէն», ու վրէժ լուծելու համար ճակատադէմ՝ կը հրկիզէ Արտեմիոսի սրբազան տաճարը: Հերոսարտ ոչ մէկ սրբութիւն կը ճանչնայ: Բասին լայն իմաստով՝ կատարեալ անբարոյ մըն է ան, սակայն խելացի է եւ դիտէ ներկայացած օտիթներէն օգուտ քաղել՝ ի գործ դնելով լիտիութիւնն ու անխղճութիւնը: Այս պատճառով ալ, երբ Քլեմենդինի կողմէ անուղղակիօրէն կ'առաջարկուի իրեն մեռնելէ առաջ յայտարարել, թէ ինք տաճարը հրկիզեց ոչ թէ անձաճանաչու մտադրութեամբ, այլ՝ ի տես իր աստուածային գեղեցկութեան, հաւատալով, որ Քլեմենդինը՝ աւելի գեղեցիկ է, քան Արտեմիոս զիցուհին, Հերոսարտ կը համաձայնի թէ՛ մահուան եւ թէ՛ նման յայտարարութիւն մը ընելու՝ գողափարին հետ, սակայն կը պահանջէ իր յայտարարութեան զինը, — Քլեմենդին պէտք է իր մարմինը յանձնէր իրեն:

Մայրայեղ փառատենչութիւնն ու Եայրայեղ ստորնացումը կը պայքարին Անահիտ-Քլեմենդինի մէջ, սակայն փառաւորութիւնը մարմաջը աւելի ուժեղ զօրքու կու դայ, քան ստորնացման փաստը, եւ կը յօժարի յանձնուիլ Հերոսարտին՝ բանտային աղտոտ խուցին մէջ: Այդ զէպքէն ետք, Անահիտ-Քլեմենդին ինք եւս կը խրի դաւերու եւ ոճիրներու ճահիճը:

Հոգեկան այս վերիվայրումները ար-

տայտյանը համար, Անահիտ Թոփչեան չի դիմեր աւելորդ շարժումներու: Արտաքնակա կը պահէ թագուհիի իր հանգամանքը ու զիմախաղերով ու հայեացքի սեւեռումներով կը տիրապետէ բնին ու հանդիսատեսին:

Անահիտ-Թլեմենդին կերպարի պարագային, փառատենչ էրն ու «բարեկիրթ» թագուհին բախման մէջ են նոյն անձին մէջ, իսկ «Մարի Օքթոպը» փիեհի Անահիտ-Մարի Օքթոպրի առեն, բախումները արտաքին են, որոնք կերպարին մէջ կը ստեղծեն արամաթիք վիճակներ ու, բնականաբար նաեւ՝ ներքին տաղանակներ:

«Մարի Օքթոպը» թատերգութիւնը զրուած է երեք հեղինակներու կողմէ՝ Ժազ Ռոպէր, Ժիւլիէն Տիւվիէ եւ Հենրի ձենորն: Անկա ունի միջազգային ճանաչում ու հռչակ եւ լի է բարդ հանգոյցներով: Այս թատերախաղը կրցաւ յաջողութեամբ բեմադրել Հենրի Մարգարեան, Երեւանի պատկերասփիւռի թատրոնին մէջ:

Տարբեր խառնուածքի տէր մարդիկ, որոնք բուրն ալ անդամ էին Դիմադրութեան տարիներուն հակադիմադրական ընդլայտակեայ բլիթի մը, այժմ կանչուած են այն թաքստոցը, ուր քան տարի առաջ անակնկալօրէն խուզարկուած էր ու ձերբակալուած եւ անհետացուած էր բլիթին պետը, նոյնինքն Մարի Օքթոպրի ամուսինը: Երբ կը յայտարարուի, թէ իրենցմէ մէկը մասնած է բլիթին պետը, իրարու հանդէպ եղած վստահութիւնն ու սիրալիր վերաբերումը յանկարծ տարրեր դոյներ կը ստանան եւ կը սկսի հարցաքննութիւններու շարք մը, Երեւան բերելու համար դաւանանք: Կը ստեղծուի անել ու հոգեխառով կացութիւն մը: Դիմադրութեան արամադրութիւններով եղբայրացած տիպարները հետզհետէ կը թշնամանան իրարու հետ ու, հակասական փաստարկներու առկայութեան պատճառով՝ կասկածը փոխ առ փոխ կը կեղրոնանայ ամէնուն ալ վրայ: Անվստահութիւն, հրատժափութիւն, անարգանք եւ ցատում իրարու կը յաջորդեն: Ամէնէն աւելի տառապողն ու ճշմարտութիւնը հետապնդողը Մարի Օքթոպրն է, որ նոյն



... եւ «Համէթ»ի մէջ, Կերթրիտի դերով

պէս կ'ենթարկուի կասկածներու եւ հարցաքննութեան: Այս դժուարին կացութեանէն խղճտանքի մաքրութեամբ դուրս կու գայ Անահիտ-Մարի Օքթոպը, որ ինքնափստահ է, խելացի, տրդարօրէն դատան եւ անզիջող:

Հայրենի թատերադէտ Արծուի Յուսանեան, Անահիտ Թոփչեանի անձնաւորած այս տիպարին առիթով, կ'ըսէ.

«Մեր հեռուստաթեմադրութիւններում մի շարք կարեւոր դերերով հանդէս եկած շնորհալի դերասանուհիներ յաջողութեամբ անձնաւորեց մտեր Օքթոպրի բարդ եւ գրքամատիկ կերպարը»:

Այս դերէն ետք, Անահիտ Թոփչեանին վստահուեցաւ աւելի դժուար նուաճելի կերպար մը, Շէյքսպիրի Կերթրիտը:

«Մոռանալ Հերաստրատին» ներկայացման գտած ընդունելութիւնէն ետք, Արմէն Խանդիկեան ձեռնարկեց Շէյքսպիրի «Համէթ»ի բեմադրութեան, փորձելով

բորբոքովին նոր մեկնարանութիւն մը տալ աշխարհահռչակ թատերախաղին: Մահայն յապաւումներու, դէպքերու տեղափոխումներու եւ կերարկած արասկեղրուն իր ոճին մէջ բեմադրելը այնքան ծարրայեղութեան դիմաց, որ Շէյքսպիրի «Համլէթ»ը դարձաւ գրեթէ անճանաչելի, ստեղծելով Հակասական կարծիքներու թռուտոճ մը: Այդ օրերուն, Երեւանի թատերասէրները զլիսաւոր երկու խումբերու բաժնուած էին: Ոմանք բարձր կը գնահատէին Պանդիկեանի յանդիմութիւնը, իսկ ուրիշներ զայրալից թոնով մը կը թերագնահատէին երիտասարդ բեմադրչին նոր մտաղացումը եւ վարկարեկիչ խօսքեր կ'արձակէին անոր հասցէին:

Ըստ երեւոյթին՝ Պանդիկեան կ'ուզէր ներկայացնել այսօրուան Համլէթը, շէքսպիրական զաւազիքներով ու խարեաներով, որոնք բեմադրութեան առաջին վայրկեաններուն կը ծեծեն զինք՝ Համլէթը, անո՛ր համար, որ ան իր հայրենիքը բանա կը հուշակէ: «Համլէթ»ի կերպարները բեմադրիչ Պանդիկեանի մտաղացումներուն ու կամքին աւելի ենթակայ են, քան Շէյքսպիրի, նոյնպէս եւ գերասանները: Ի հարկէ, այսօրուան բեմադրելը լայն իրաւունքներ ու հնարաւորութիւն ունի փիեռ մը կրճատելու եւ մեկնարանելու, սակայն այս բոլորը պէտք է կատարուին՝ առանց իսթարելու եւ իսիստելու թատերադիրին կերպարներուն ու թատերախաղին առանցքային նշանակութիւնը:

Պանդիկեանի այս բեմադրութեան մէջ կ'առանձնացնենք կերթիւտի կերպարը, անո՛ր համար մանաւանդ, որ միակ տիպարը, որ շէյքսպիրեան յուզականութիւնն ու արամթիգմը պահած էր ու կը փոխանցէր հանդիսատեսին, այսինքն՝ Նուազ ենթակայ էր բեմադրչին քմայքներուն, Անահիտ թոփչեանի կերտած Կերթիւտի կերպարն էր: Անահիտ-Կերթիւտը, անսալով իր սիրային եւ սեռային անզուսպ մղումներուն, մեղսակից կը դառնայ իր ամուսնոյն՝ արքայի քստմենի ոճիրին, որ կը կատարուի իր հոմաներին, տաղբոջը կողմէ: Ան ականջալուր

է նաեւ իր թագաժառանգ որդւոյն՝ Համլէթի դէմ սարքուած գաւազրութիւններուն: Երբ հօրը ոգիին միջոցով Համլէթ (Վ. Մարեան) կը տեղեկանայ գործադրուած ոճիրին ծալքերուն, կ'ապրի անասելի տառապանք մը: Տեսնելով իր գաւկին տրււած յայտանքները, Անահիտ-Կերթիւտի մէջ կ'արթնայ մայրը եւ զինք կ'ենթարկէ հանդուցային հոգեվիճակի մը: Զաւակին հետ ունեցած խօսակցութեան ընթացքին, Անահիտ-Կերթիւտ կ'ենթարկուի վերաւորական խօսքերու եւ իր հոգեվիճակը կը հասնի այնպիսի՝ խաչածու լարուածութեան մը, ուր կարծէք «Ինձի-չլինելու» Շէյքսպիրի յայտնի առոյթը աւելի կը պատշաճի իր հոգեվիճակին, քան Մարեան-Համլէթին:

Իր գործած մեղքին համապատասխան ծանր տառապանք մը ցուցաբերելով՝ Անահիտ-Կերթիւտ տեղութեան փոխարէն կը շահի հանդիսատեսին կարեկցութիւնը, որովհետեւ կերարկուած խաղարկութեան մէջ փառատենչ էգի եւ որդիական սիրոյ ներքին պայքարը աւելի մարդկային է, քան անասնական:

Ինչպէս այլ կերպարներու պարագային, հոս եւս Անահիտ թոփչեան չի դիմեր աւելորդ շարժումներու, ընդհակառակն, փոխանակ Ֆրիդլանդեան շարժումներու, ան կարողութիւնը ունի դրսևորելու ներքին շարժունակութիւնը, որ աւելի կենսական է բոլոր արուեստներուն մէջ: Անահիտ թոփչեան արտաքին շնորհներուն զուգահեռ, ինչպէս տեսանք, ունի մա'նաւանդ արուեստադէտի բացայայտ օժտումներուն մը: Իր քննադատ ձեռքներուն հետ՝ ան ունի նաեւ բնազդային աշխատասիրութիւն, որ մեծ հեռանկարներ կը բանայ իր առջեւ:

Եւայի, Գարմէնի, Քլեմենդինի, Մարի Օքթոպրի եւ շէյքսպիրեան Կերթիւտի տիպարները յաջողապէս անձնաւորած Անահիտ թոփչեան թատերական քննադատներուն կողմէ կը համարուի ժամանակակից Հայրենի թատրոնի փայլուն աստղերէն մէկը:

Իրաւամբ:

ՄՈՎՍԷՍ Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ

Ա Ի . Ի Ս Ա Հ Ա Կ Ե Ա Ն

Գ. — Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր՝

Ս Ի Մ Ո Ն Յ Ա Կ Ո Ւ Բ Ե Ա Ն Ի Ն

26

[Վեներտիկ, 1922 թ.]

Սիրելի Սիմօն,

Երեւի նկատած կը լինես, որ շա՛տ տարօրինակ բաներ եմ գործածել (1) հին ու նոր, գրաբար ու զատառաբառ. օրինակ, *հանց*, *հէնց*, *զեղ*, *եայլն*. այս բոլորը գիտակցաբար է եւ դիտմամբ: Մէկ որ, գրութեան ձեւը այդ է պահանջում. եւ երկրորդ, ուպում եմ այդ կարճ ու լաւ բաները *lancer* անել (2), կիարկել. նոյնիսկ մտածում եմ, որովհետեւի տեղ պի գործածել, որ կարճ է եւ հընչեղ, ինձ համար գրաբար կամ աշխարհաբար բառ գոյութիւն չունի. կան միայն հայերէն եւ օտար բառեր. սակայն ձեւեր, ոճեր կամ գրաբար կամ աշխարհիկ, բայց երբէք գրաբար կամ աշխարհիկ բաներ. դու ի՞նչ ես մտածում: Աւելին՝ որովհետեւ (3) է իր ձեւով գրաբար, եւ ոչ «պի». սա այնքան գրաբար է՝ որքան բայց, իսկ, և:

Գրաբար են «ի միջի այլոց» յամենայն դէպս, այսուհանդերձ, այսուամենայնիւ...» եւայլն:

Այնպէս որ չը խորտնես, երբ կարդաս խեռ, գիշտ, խալամ աշուած եւայլն բաներ:

Համբոյրներով քո ԱԻԵՏԻՔ.

Գրքոյկս, մի փոքր ժողովածու ոտանաւորների, 71 էջ, վաղը-միւս օրը [ոյս կը տեսնի. կ'ուղարկեմ. հին եւ նոր բաներ կան, հիները՝ սրբագրուած, նորերը — նոր (4):

ԱԻԵՏԻՔ

(1) «Սասնայ Մննք» շիպերգում:
 (2) *Շրջանառութեան ձեւ դնել, ստորածել, բնազդում՝ lancer*:
 (3) *Սյս եւ յաջորդող բնագծումները մերն են*:
 (4) *Ալշնաճ ծաղիկներ», Վեներտիկ — Ս. 1922թ.*

27

10 փետվ. [1922], Վենետիկ:

Սիրելի Սիմոն,

Ուղարկել եմ Սամայ Միերը. երեւի շարել ես: —

Թերթը ստացայ, տպագրութիւնը շատ լաւ է, ճաշակով: Նիւթերը նոյնպէս լաւ են. S. Եսայեանի (1) գրութիւնը լաւն է. Խանի թարգմանութիւնը գէշ չէ, միայն չոր է, արձակ է. քո յօդուածները շա՛տ հետաքրքրական են:

Փափագելի է, որ տարածուի. այստեղ մարդ չկայ, որ բաժանորդ գտնեմ. Փարիզ գրեցի մի բարեկամի, որ բաժանորդ գտնի. եւ նրան էլ Յունվարից ուղարկիր (2 թիւը միասին) — V. Derohanian. 229 rue de Faubourg (2) St. Honoré. Paris: Իշխան Արղութեանը կարող էր բաժ[անորդ] գտնել. նա էլ վերջերս ինձ գրեց, որ տեղափոխում է Գերմանիա գուցէ արդէն հոն է — այսպիսի հասցէ է տեւի. Bad Hamburg. v. d. H. Ludwigstrasse, Hôtel Stefanie, նրան էլ ուղարկիր:

Ինձ մի անգամ ասացիր, թէ Աճեմեան եւ Էնֆանդճեան [°] մտադիր են օգնելու. դիմել ե՞ս արդեօք: Պէտք է դիմես, բախեցէք եւ բացցի ձեպ:

Հիմա ի՞նչքան բաժանորդ ունես, կարելի՞ է իմանալ:

Ի՞նչ լաւ կը լինէր այնտեղ մի փոքր հրատարակչական ընկերութիւն կազմուէր, եւ հրատարակէինք ինչ ու նոր գրուածքներ, օրինակ Արփ[ի]արի գրուածքներից, որոնք թերթերի մէջն են ցրուած, Մ. Նալպատեանի երկու տողը, երկրագործութիւնը, եւ ուրիշները, եւ նոր բաներ:

Կուզէի, որ դու մի լաւ յօդուածի մէջ տայիր ներկայ հասարակական պրօբլէմների (3) մասին, թէ եւ նոր գրողների մասին գրելիս դրանք պիտի արտայայտուեն. հայ ընթերցողը դեռ չգիտէ նոր գրական շարժումը — Nikolsky, Freud, Laasko. եւ այլն. ապաշին հարց, միջապայութիւն, տնտեսական պրօբլէմ, խաղաղութիւն, պատերազմ. եւ այլն. եւ այլն:

Դառնանք Միերին:

Մի երկու աննշան ուղղումներ. եւ այլեւս չեմ անի, որ չը խանգարուես:

I. Թռչունների հետ խօսելիս լաւ կը լինի եթէ այս 2 բառը դնենք. ապաստ, անպարտ (4)

• քնկերներով այս երկու տողը շատ բան կը ամփոփէ (5).
ու անբօր պէս
կուտէք, կապրիք (6).

II. Հացթուխի գլխում.

...Ի՞նչ կուպէք ասէք. այս նոր տողերը ցոյց կուտան Միերի
եւ դատում կ'անեմ, կարծիքը իր ըմբռնած իրատուքի մա-
Իրատուք ունեմ սին, քնդդէմ դատաւորի ըմբռնումին:
Իմ չափովս ուտեմ.
Չէք ուզէ... (7)

III. Անեծքի մէջ.

Անհծիս դու, չարող Միեր,
Դու ներհակ Նեո,
Դու կռապան, դու արունքուէր (8):

այս տողը՝ Նեո, շատ բնորոշ է, եւ բնագրի մէջ էլ կայ, որ այժեւ թուի էր. Միերը Նեո է, անտիքրիստ (9), որովհետեւ զէնքի մարդ է, բռնութեամբ կուպէ արդարութիւնը բերել:

Սիրելի Սիմօնս, ուրեմն կանց չառնես:
էլ ուղղումներ չունի[մ] (10). հանգիստ սրտով շարէ:
Համբոյրներով, բարեւով

Քո ԱՆԵՏԻՔ:

- (1) *Նրբիւր Զապէլ Եսայիան (1878-1943): «Արեգը չունենք ձեռքի տակ»:*
- (2) *Բնագրում՝ «Faubourg»:*
- (3) *Յնդիրներին:*
- (4) *Բուրբ ընդդէմաները ձեռն են:*
- (5) *Բնագրում՝ այսպէս:*
- (6) *Արանձնատիպ (1822 թ.), էջ 38:*
- (7) *Արանձնատիպ, էջ 19:*
- (8) *Արանձնատիպ, էջ 46:*
- (9) *Հակաքրիստոս:*
- (10) *Ինքնագրում՝ «չունենք»:*

[«Սասմայ Միեր»-ի համար ցարդ թերթիկների վրայ ուղարկուած յանելումներ եւ ուղղումներ, ուրիշները տե՛ս 29, 30, 31, 33 եւ 35-րդ նամակներում: Բոլոր ընդգծումները մերն են:]

Ուղղումներ հացթուխի գլխի մէջ.

Ու մի փոնապան
Միերին առաւ
Իրեն ձեռքի տակ.
Քառսուն մարդու բան
Կ'անէր մէն-մէնակ
Սասմայ տէր Միեր —
Օրը ողջ բոլոր (1)
.....
.....
Գլուխը բարձին
Աչքը չըկպած
Կը կանգնէի ոտաց,
Փուռը կը վառէր,
Գետեր կը շինէր (1):
(շարունակել).
(Դատաւորի մօտ)
Քառսուն մարդու բան կը տեսնեմ

Ճնճղաբաժին կուսայ ինձի.
Էն շի գողնայ, ես կը գողնամ... (2)
(միա երեսը)

Դատաւորի մօտ.

Չեք ուզէ, արքէ՛ր,
Հեռանամ կերթամ
Բա՛ էս օրէ՛նք է.
Դժար բաները
Ես եմ անողը,
Համով բաները
Ինքն է ուտողը,
Թէ գանձ կապողը (3):
(շարունակել)

Ուղղումներ, որ խնդրում եմ գանց չառնես:

- 1) Մեռաւ իր կնիկ Խանդութ կակծուց (4):
Կսկիծ բառը սպեցիֆիկ (5) է, որ մահի վրայ կը դրուի, անկարելի է փոխել. եթէ ուզում ես շինի՛ր.
Մեռաւ Խանդութ Դաւթի կակծուց.
կամ սրտի կակծուց:
- 2) Ջարդեց բափեց
ինչ որ եկաւ սրի բերան,
այլ
Կտրեց բափեց (6).
(ուրիշ տեղ լախտը. լախտը կը ջարդէ, իսկ սուրը կը կտրէ):
- 3) Քեօի Քորոս ու Խոր Մանուկ,
Չինով Օհան եւ Ջոշ-Վերգոն.
այդ կաւեյացնես, որ աւելի ճոխ լինի:
- 4) Անպատճառ.
Երբ ոամիկ ուզենայ,
Դուրս կուգամ էն պահ:
Սա ներդաշնակ է՝ յանգի եւ վանկի տեսակէտից:
(Միա երեսը)
- 5) Հօր պէնքերը հանելիս.
Գօտիից յետոյ եւ թուրից առաջ կմտցնես.
Վահան լանջքին.
- 6) Եւ վերջը այրի մէջ
Ոսկի գօտի մէջքին
Վահան լանջքին —
Թուր Կայծակին ձեռքին (7)

Փողովորդական բառեր ու ձեւեր կան, խնդրում եմ սխալ չկարդաս.

փողան = փողոց.

բաժ = բաժին, բաժ արեց.
 վո՛ւ գնալ = արագ, ճեպով:

Անշուշտ չես վիրաւորի, եթէ ասում եմ, որ սխալ չկարդաս:

գիշտ = մորթէ վերարկու.
 հապամ = զանկ, որ նախնիք (8) կը դնէին զվիսներին, վախցնելու համար:

(Միերի պսայ Միերը առիծ որսաց. իսկ թողը վազր՝ աւելի կատարին).
 Միերի Տապան... կը նշանակէ բերդ. Սասունցոց լեզուով:

Սարը թռչունների հետ խօսելիս ես կարծում եմ այս վարիանտը (9) աւելի ռէալ (10) է, այն որ կարծես թռչունները չեն խօսում, այլ թւում է նրան. յետոյ յաջորդ տողերը գէշ չեն:

1... Հաւքերն անուշ դայլայեցին
 Ու Միերին
 Հէնց իմանաս
 Մարդու լեզուով խօսք ասացին:—
 — Աստուած կեանք տայ ռամիկ մարդուն... (11)

2. Ձեդ փոթորանք ծովու վրայ,
 Որ հապարան վագներու պէս
 Կը մըրմռայ,
 Ու կը քանդէ պատ ու պատնէշ:—
 Միեր էսպէս, բո՛ց ու բորբո՛ք,
 Միրտն ու հոգին ծով մըրմըրկած.
 Ու աշխարհին դարձաւ ասաց—
 — «Ռամիկ դտտի աշխարհ ուտէ
 Նորէն մնաց ինքն անօթի...»

3. Ռամիկ գեղջուկ
 Ձեր խեղճ խեղճի
 Կորածն էք դուք.
 Որ թէ տէր դառնաք
 Ձեր իրաւունքին —
 Ձեր աշխատանքին,
 Ձեր արդար հացին, —
 Մէկէն կը չըքին
 Հարուստ ու իշխան
 Աշխարհիս վրան:
 Երթամ... բերդ շինեմ, վէնք առնեմ (12)
 շարունակել:

ապա՛

Ամենից վերջը, Միեր ծեր հովիւին պատասխանելիս թէ
 Դուք կը գամ, երբ ոամիկ ուզենայ,
 ...Ռամկութիւն բերեմ,
 Ռամկի իրաւունք,
 Որ ինք տէր գառնայ
 Իր աշխատանքին —
 Իր արդար հացին...
 Եւ մարտիրոսիւմ մէջ էղ սուրբ կրուին...»
 Պատգամ տւեց Սասմայ Միեր... (13)

Կարծում եմ ճառ չի դառնայ, եթէ չես ուզի, վերջինը մի ղներ: Միեր
 պէտք է պարզէ, որ «Իրաւունք բերեմ»ը, թէ ի՞նչումն է ոամկի իրաւունքը.
 այսինքն տէր դառնալ «Իր աշխատանքին, իր արդար հացին»:

Յետոյ «աշխարհի աւերեմ», պէտք է պարզի թէ ի՞նչ, ո՞ր աշխարհն է
 հասկանում, ուստի, վերջը այսպէս փոխենք որ որոշ լինի.

«Երբ ոամիկ ուզենայ,
 Դուք կու գամ էն պահ,
 Որ հարուստներու,
 Բըռնաւորներու
 Եւ զըրկողներու
 Աշխարհն աւերեմ,
 Ռամկութիւն բերեմ,
 Ռամկի իրաւունք.
 Ու մարտիրոսիւմ
 Մէջ էղ սուրբ կրուին (14)»:

Կուզես սրբագրութիւնը վերջէն ինձ ուղարկիր:

Քո ԱԻԵՏԻՔ:

Ամէն անգամ, որ Միերի մասին եմ անդրադառնում, նոր ուղղումներ
 են միտքս գալիս: Խնդրեմ չը նեղանաս, եւ ուղղես

1. Ինչ կուպէք ասէք.
 Եւ դատում կ'անեն՝ Նախընթաց նամակի մէջ ուղղել էի.
 Իրաւունք ունեմ բայց ՚+ տողը մոռացել:
 Անօրջած ատեն՝ +
 Չափովս ուտեմ. (15)
2. Երեք հապար բանուր-մշակ;
 Որ քար կըրէ,
 Երկաթ կռէ:
 Երեք հապար բանուր մշակ,
 Որ հող թալէ, (թալել = նետել, փորել, ձգել.
 Արճիճ հալէ (16) ————— հայ, ժողվ. բառ.)

3. ... եկաւ կանգնեց քաղցի միջին
 Թուր կայծակին աջու ձեռքին
 Հանց որ սեւ ամպ Անդուկ-Սարէն՝
 Կայծակ կուտայ ու կը ճաքի —
 Գոռաց Միեք Սասմայ վրէն.
 — Է՛յ գո՛ւք Սասմայ ամէն կորիճ,
 Ծո՛ւտ ու ճիտ.
 Թո՛ղ ուպողնիդ ասպազի՛նսի,
 Գայ ինձ հետ — (17)
 Աշխարհք աւերեմ
 Ռամկութիւն բերեմ
 Ռամկի իրաւունք. (18)

Ու յետ եկաւ, դարձաւ նորէն
 Ապոնջ Չորէն,
 Մըշու Դուրէն,
 Խուքայ սարէն,
 Ճապաղ - Ջուրէն
 Միեքի ձէն,
 Գոռոռայէն,
 Փըռեց նորէն
 Սասմայ վրէն, (18)
 Սասմայ Ծոեք, (19)
 Ջնջեց Գետեք —
 Քեռի-Թորոս, Չի՛նով Օհան,
 Ջոռ-Վերզոն ու Խոր-Գուսան,
 Պարոն-Աստղիկ ու Խոր-Մանուկ,
 Ճող-Վիրապ ու Խոռ-Վիրապ. †
 Եւայլն - շարունակել

Արձագանքը

յատկապէս Խոռ-Վիրապ.

xa Օրն է հասել. (20)
 Գեղջուկ, ոսմիկ
 Արուն են հընձել,
 Հունձը փընջել՝
 Բերել կապել:
 Ու կալի մէջ
 Դիպել շեղջ-շեղջ
 Ոսկի ցորեն:

Եկաւ հեռէն
 Մի ծեր գուսան՝
 Ձեռքին քնար —
 Գանկ մի եզան,

Եղջիւրներէն կամ, (կոտորներէն) [վրան երկու գիծ]
 Եօքնաղի լար
 Քաշած ի վար:
 Զարկեց դաշըն պիրկ լարերին, (21)
 Գովքը երգեց արդար հացին:
 — «Փա՛ռք տւէք հացին,
 Հապա Աստղծուն,
 Հացն է աշխարքիս
 Ի՛սկն ազատութիւն.
 Հապա՛ր անգ հապա՛ր
 Գովքն արէք հացին,
 Հացն է աշխարքիս իսկն ազատութիւն»: (Կրկնես գէշ չէր)
 Ու ծեր զուսան [վրան երեք գիծ]:
 Կուց (22) մի ցորեն,
 Իր բածն առաւ
 Օրինանք տալով
 Գնաց նորէն:
 Շարան-շարան
 Երկնուց իջան
 Հազ ու թոյուն
 Մըլըլացին (23)
 Շուրջը կալին
 Ու բածերնին
 Առան-քան...
 Եկա Պարոն իր արտատէր
 Կիսեց տարաւ ցորենի շեղջ.
 Իրար յետևուց եկան հասան
 Թէ զեղապետ,
 Ու Վարդապետ,
 Տէրտէր, ժամհար
 Պարտքի դիմաց
 Ժամի համար,
 Հարկի դիմաց.
 Սըրբի համար, —
 Առան տարան
 Իր աչքի լոյս՝
 Ոսկի-ցորեն:
 Բան չըմնաց խեղճ ոամիկին
 Լոկ ծեղ ու կուտ կալատակին:
 Էս որ տեսաւ (24)
 Կրակ վառեց Մհերի ծոց,
 Օր ու զիշեր
 «Ա՛խ» կը քաշէր.
 Աշխարքի բան միտք կանէր միտք.
 Աշխարքի բան հանց որ թոյն օձ
 Կը խէթթէր սիրտն ու հոգին.
 — «Ռամիկ, զեղջուկ
 Ամբար-մառան

Կը լըցնէք դուք
Իշխաններուն ու պարոնին
Ու կը մնաց նորէն-նորէն
Մերկ ի մօրէն...»

յետոյ ռէսը Միերից հարկ է պահանջում:

Միերի Սիմօն, սա արդէն տպւած է «Արեգի մէջ», բայց միթէ՞ հնարաւոր չէ արտա-տպագրութեան մէջ մտցնել. լաւ հատւած է. եւ լուսաբանով (25): Եթէ չեղաւ — մնայ ք. տիպի համար: Նամակդ հէնց հիմա ստացայ. յետոյ կը պատասխանեմ. այժմ շտապում եմ փոստին հասցնել. կարիք չկար, որ թղթի համար այդքան տանջել ես. Երկրորդական բաներ են դրանք. յամենայն դէպս շատ շնորհակալ եմ. ինձ թուում է չեմ կարող գիրք տպել. աստղաբաշխական թւեր են տւածդ. միլիօններ...»

Քո ԱՌԵՏԻՔ.

- (1) Առանձնատիպ, 1922 թ., էջ 18:
- (2) Առանձնատիպ, էջ 18:
- (3) Առանձնատիպ, էջ 19:
- (4) Առանձնատիպ, էջ 7:
- (5) Իւրտ յատուկ:
- (6) Առանձնատիպ, էջ 45:
- (7) Նոյն տեղում, էջ 54:
- (8) Բնագրում՝ «Ճաշխոյն»:
- (9) Տարբերակ:
- (10) Իրական: Յ Առանձնատիպ, էջ 32:
- (11) Անդ, էջ 33:
- (12) Անդ, էջ 33:
- (13) Անդ, էջ 53:
- (14) Անդ, էջ 53, ուր վերջին երկու տողերը չկան:
- (15) Անդ, էջ 19:
- (16) Անդ, էջ 58:
- (17) Անդ, էջ 48:
- (18) Անդ, էջ 44:
- (19) Անդ, էջ 44-45:
- (20) Անդ, էջ 24:
- (21) Անդ, էջ 25:
- (22) Նախ գրել է այս], սպաս վրան երկու գիծ քայծել ու վերինը գրել կուց:
- (23) Առանձնատիպ, էջ 26:
- (24) Անդ, էջ 27:
- (25) Գուցէ պետի գրէք «Լուսաբանով»:

28

14 փետրվ. 1922, Վենետիկ.

Մի բաց նամակով պատասխանի՛ր ստանալուց:

Սիմօն ջան,

Թէ կիսս, որ իբրեւ կին գոյներ ճանաչում է, եւ թէ ես ընտրեցիք այս

գոյնը, որ ծովականանչ է, յոյս եւ ոյժի, եւ գեղեցիկ երիտասարդութեան գոյն. եայլն, եայլն:

Մանուանդ, որ տպագրական սեւ տառերը ցայտուն կերեւան այս կանանչի վրայ: Ֆորմատը լաւ է, փոքրիկ, ծոցի. եւ դրանով գրքոյկը մեծ կ'երեւայ. գրքոյկի առաջին էջի վրայ կ'լինի անունը: տարեթիւ, տպագրութիւն, II էջը պարագ. III էջ, նւէրը. IV էջը պարագ. V էջը միայն Սասմայ Միեր. VI էջը պարագ. VII էջից կ'սկսի նիւթը:

Էպիկ (1). պօժմ. լաւ է, բայց հայերէն չէ, կուպեմ հայերէն լինի. թերեւս դնենք «քերթուած» բառը. մի քիչ ոօքօքօ է, բայց կարծեմ տեղին է. կամ դնենք վիպերգ. եւ կամ — ո'չինչ:

Կուպենայի գրեւ թէ ինչ արժէ տպագրական թերթը 16 էջը թղթով եւ տըպագրութեամբ Մխիթ. տպարանում. թերեւս մի երկու գրքեր տպեմ — յոյս ունեմ փող ձեռք բերելու —, այստեղի վանքում շա՛տ թանգ է, անկարելի է տըպել. երեւի Խանը պատմած կը լինի:

Գիտես, որ Հայաստանի ներկայ վարիչները ինձ եւս տնտեսապէս եւ բարոյապէս ապահովել են ու պաշտպանութեան տակ առել. Պօլսից ինձ յայտնեցին պաշտօնապէս, բայց եւ առայժմ հրաժարեցի փող ստանալուց նկատի առնելով Հայաստանի սովը եւ քայքայած վիճակը, սակայն գրեցի թէ, առաջարկելով՝ որ կ'համաձայնեմ փող ստանալ դէմը գրքեր տալով, իբրեւ վարձատրութիւն (2). եթէ համաձայնեն, ուրեմն փող կուենեամ, եւ կը կարողանամ հրատարակել. մտածում եմ մի արձակ հատոր լոյս ընծայել (արձակ բաներիս) եւ ոտանատրների մի կամ երկու գրքոյկներ:

Ուրեմն գրիր մօտաւորապէս ծախսերի մասին: Արձակը մօտ 200 էջ, ոտանատրներ մէկը 150-180 էջ, միւսը — մօտ 100. — բոլորը ուրեմն 400-450 էջ. երկու տարբեր ֆորմատով, կամ երկուսն էլ միջակ. ֆրանսական դեղին գըրքերի չափ:

Յետոյ, չէ՞ս գտնում որ Ս. Միերի համար մի փոքր բառարան պէտք է. եթէ այո՛, գրիր, որ կապմեմ. հիմա չեմ յիշում ի՞նչ բառերի, բայց կան. եւ առհասարակ անունների համար — Ջոզեֆն տուն, Ջոզոնք, Սասմայ Ծոներ, Ճոռվիրապ ... Թերեւս իսկի (3) պէտք չէ. լաւ գիտակ ընթերցողը կ'հասկանայ:

Համբոյրներով քո ԱիեՏիՔ

(Հար. 6)

(1) Գարգա՛մ «էպիկական», Քրանս. ճրիգս «գիւցազներգական»:

(2) Ակնարկում է 1921 թ. նոյեմբերի 8ին Հայաստանի ներկայացուցիչ Յովհ. Թումանյանի դրած նամակը («Նամակներ», էջ 188):

(3) Ամենեւին. իսկին բարբառային է, միշտ ժխտական բայի հետ է:



ՎՐԻՊԱԿՆԵՐ ԵՒ... ՎՐԻՊԱԿԱՆ ԲԱՆԵՐ

Ոչինչ կը խնայենք, ոչ ժամանակ, ոչ յուսելուածական ջանք, կը յոգնինք մենք ու կը յոգնեցնենք տպարանին անձնակազմը, վրդովումներու պատճառ կը դառնանք յաճախ, բայց երբեք ամբողջապէս չի յաշոյիք մեզի ազատիլ այն վերաւորական ներկայութենէն, որ վրիպակ կը կոչուի եւ որ չըստպատուած անկիւնէ մը կը զգացնէ իր ծամածուռ զոյութիւնը:

Վրիպակներու ատաղջացում տեսնութիւնը կրկնապատկած է բծախնդրութեան մեզի արամադրուած չափը, այնուամենայնիւ, ստացուած արդիւնքը քիչ անզամ միակտուր ուրախութիւններ պարգեւած է մեզի:

Հետուն չեքթալու համար, թուենք մեր այս տարուան առաջին երեք թիւերուն մէջ նկատուած վրիպակները, որոնցմէ թմանք, անհորձ աչքերուն անզամ տեսանկիւ ըլլալով հանդերձ, խուսափած են ի՛րք թէ շատ բծախնդիր մեր ուշադրութենէն:

Վազգէն Շուշանեանի նուիրուած քաջատիկին մէջ, խորագիր մը՝ «Վազգէն Շուշանեան» (էջ 98), եղած էր «Վազգէն Շուշանեան»:

Յաջորդ թիւին մէջ, դարձեալ խորագիր մը, «Գալուստ Պաղեսի հետ»-ը, եղած էր «Գալուստ Պաղեսի հետ»:

Մարտի նոյն թիւին մէջ նորէն, այս անգամ Շուշիկ Տանապետեանի գրութեան խորագիրին մէկ բառը՝ ուրիշիւր, եղած էր ուրիշիւր, իսկ ծանօթագրութեան բաժնին մէջ յիշուած le monde բառը եղած էր La monde:

Նոյն յօդուածին մէջ կայ երկրորդ սխալ մը (էջ 60, տող 42, մէջբերուած «Is live worth living» նախադասութեան live բառը), որ, սակայն, մեր սխալին հետեւանքը չէ: Ընդդէմ life է անշուշտ, բայց յօդուածագրին պնդումով պահանջինք սխալը, ի հաշիւ այն հաւատարմութեան, որ Եղիա Տէմիրճիպաւեանի էջին մէջ բառը ունի այդ ուղղագրութիւնը, ըսել կ'ուզենք՝ յանուն «գիտական բարեխղճութեան» հանդուրժեցինք անճիշտը:

Ձակերաք, ընդզումը կամ մէջբերուածին էջաթիւին նշումը երբեմն բաւարար կը համարենք մենք, բայց այդ պարագաները տեղի կու տան թիւրիմացութեան եւ մեղքը ընդհանրապէս կը բարդուի խմբագրութեան ուսերուն:

Բարեբախտաբար, նախօրօք ծանուցուած է Աւետիք Իսահակեանի «Նամականի» գիտական բարեխղճութեամբ լոյս ընծայելու հանգամանքը, այլապէս ով գիտէ քանի՞ հարիւր վրէպներ ու անհարթութիւններ պիտի վերադարձէին «Բագին»ի խմբագրութեան, որուն մեղքերը, ինչպէս նշուեցաւ վերը, սակաւ չեն արդէն, ու շունին մեղմացուցիչ դէպք յանցանաց, ինչպէս պիտի տեսնէք վարը:

Եկանք հասանք Յ. Օշականի «Սահակ Պարգիւսեան» վէպին: Ընթերցողին ծանօթ է այն իրողութիւնը, որ յղացքային ու լեզուական

բարդութիւններու կողքին՝ նոյնքան բարդ սրտակեր մը կը ճերկայացնէ Օչա-
կանի ձեռագիրը, որ անցնող յիսնամեակին տուն տուած է ահապէն թիւրի-
մացութիւններու: Գրաչարին գործը թեթեւցնելու եւ հնարաւոր հաւատար-
մութեամբ մը գործը գլուխ բերելու համար, «Սահակ Պարզնետան» վէպին
ձեռագիրը կը մեքենագրուի խմբագրութեանս կողմէ, երկրորդ անգամ կը
բաղդատուի մեքենագրուած օրինակին հետ, փորձը կը սրբագրուի երեք ան-
գամ, բայց հակառակ տարուած այդ աշխատանքին, հինգերորդ ընթացումը
սիրտ պղտորող կէտերու առջեւ կը դնէ մեզ երբեմն ու դժուար կ'ըլլայ ճշ-
գել, թէ ո՞ր սատանան դուռ կը բանայ այս անհաստեթեանց:

Նշենք մէկ-երկու օրինակ.—

«Անկիւս չէր ուզեր լսել անոնց նայածոքները, մանաւանդ մօրը յսմա-
խակի կկոցումը ու կը խօսէր, քաղցր հաճոյքով...» (Փետրուար, էջ 27, տող
13):

Մենչուտ «յտելը» խմատ շունի հոս, նայուածքները եւ կկոցումները
չեն լսուիր, ու երբ խօսելու հարց մը կայ նաեւ, ուրեմն, բառը պէտք է ըլ-
լար լռի, որ օչականեան արտայայտութեան ձեւ մըն է:

Մարտի թիւին մէջ տողագարձուած (էջ 34, տող 48) ներկայացումներ-
ուն մ դիրք ինկած էր ու բառը մնացած ներկայացումներում, 36րդ էջին եր-
րորդ եւ չորրորդ տողերուն վրայ իրարու յաջորդող շատ չար բառերը, պէտք
է ըլլային գաւ-գաւ, իսկ 24րդ տողին «պարմանները» մէկ դիրք տարբերու-
թեամբ աններելիօրէն եղած էր պայմանները:

Երեք թիւի մէջ չորս-հինգ սխալ:

Օչականի գիրին մէջ դիրքին չէ զանազանել Ռա-ն Սէ-ն, Բէ-ն Նու-էն,
Նու-ն Զէ-էն ու դիրքերու զանազանութեան ընծայած դիրքութեամբ չեն կար-
դացուր արդէն հազարաւոր բառերը, այլ ոճին, մտածումներուն ու անոր
ինքնուրոյն աշխարհին ուշադիր հետեւելու լարուածութեամբ մը: Իբրեւ ի-
րականութիւն կը յիշենք այս պարագան եւ ոչ թէ իբրեւ չբժողանք, օրովհե-
տեւ մենք ոչ մէկուն, եւ ամէնէն առաջ մենք մեզի՝ չենք ներք մեր օրրու-
թիւն օրրոցին հանդէպ թոյլ տրուած որեւէ թերացում:



Նկատի մը մէջ թոյլ տրուած վրէպը, անոր ետին ճիշդը կտակելի ըլլայ
թէ ոչ, ծանր մեղք է հարկաւ, բայց մեղքերն ալ ունին իրենց տեսակարար
կշիռը, առաջին անգամ վերծանուած վէպի մը կոմ յողուածի մը մէջ գործը-
ւած մեղքը նոյնքան մահացու չէ, չի կրնար ըլլալ կը կարծենք, որքան նուե-
րագործուած, «աղօթք դարձած» յայտնագործութիւններու մէջ անուշադրու-
թեան հետեւանքով թոյլ տրուած վրէպը: Իրաւունք չունինք, օրինակ, ա-
նուշադիր ըլլալ Զարենցի, Տէրեանի, Վարուժանի կամ Սիւսանի թոյլ ծանօթ
գործերուն հանդէպ, նման իրաւունքներ չունին մանաւանդ հայրենի մեր մը-
տաւորականները, որոնց յողուածներուն երկայնքին մէջբերուած գունարնե-
րուն աղաւաղումը ուղղակի կը վիրաւորէ հայ մարդուն սիրտը:

Ի դէպ է յիշել, որ մենք ամբողջ գրականութիւն մը ունինք Դուրեանի
«Տրտուեցէ՛ք»-ին Աստուածը Աստուած պահելու կամ զայն աստղերով փոխարե-
նելու մասին, ինչպէս եւ բանաստեղծական նոյն յայտնութեան չփոթալոյզ
միւս բառը սուգելու կասկածութեամբ՝ անախ՞, թէ ախախ: Նոյնպէս, շատ
մեղան հոսած է Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութեան ա-
ռաջին տողին նախավերջին բառին առիթով,— արեւտա՞մ քառ, թէ արեւա-
համ քառ:

Ու քմահաճ վէճեր չեն յիշատակուած բառերուն առիթով յուզուած վէճերը, ոչ ալ բանգիտութիւն վաճառելու մարմաններու հետեւանքներ: Գրահանութիւնը լուրջ բան է եւ բառ մը կրնայ վճռական դեր կատարել ամբողջ բանաստեղծութեան միջնորոտին ու կոտույցին մէջ, ինչպէս կրնայ խոր մորել կամ ձեւագեղծել ամբողջ հոգի մը:

Մեր հայրենիքին մէջ, ցաւօք, յաճախ կը թեթեւցնեն գրականութեան այդ լրջութիւնը, երբ, կրկնենք, իրենցմէ սպասուածը ծայրագոյն բժախորհրդութիւնն է, ու մեր լեզուին ու գրականութեան սիրոյն՝ մեր բոլոր հրատարակութիւններուն վրայ հսկելու սրբազան պարտքը:

Թուենք քանի մը ոչ-հաճելի փաստեր. —

Քանի մը տարի առաջ, «Սովետկա՞ գրականութիւն» (1977, թիւ 11) ամսագրին մէջ, քննադատ Հրանտ Թամրազեան օտորազրեց գեղեցիկ յօդուած մը՝ «Չարեցի շնորհամենքից» մէկը, ուր երկու-երեք էջի վրայ ան վերլուծած է նաեւ «Ես իմ անուշ Հայաստանի» հանրայայտ բանաստեղծութիւնը: Այդ խորհրդածութիւններուն մէջ, հազուադէպ պարագայ, փրօֆեսօրական ընթացիկ շատխօսութիւնը իր անհարկի ծաւալումները գիշած է ներկուտ, տաք եւ վարակիչ վերլուծումին, որուն համագոր մեկնարակութիւն թերեւս ոչ ոք կարդացած է «Ես իմ անուշ»ի մասին: Յայտնի շարնցագէտ Հրանտ Թամրազեան «Հիտութենէն» անդին անցած է հոս եւ խոր սարուժով բարեխառնած է իր խօսքը:

Այդ ուշադրաւ վերլուծումին դիմաց մարդ կը վերաւորուի սակայն, երբ քերթուածին տողերը սխալներով կը վխտան յօդուածին մէջ:

Թամրազեանի յօդուածին մէջ կը յիշուի —

Մթնում կարած խրոխրների անհիւրընկալ պատերը սեւ
եւ ճայիրեան քաղաքների հագարամեայ քարն եմ սիրում (էջ 121)

Մէջբերուած երկտողին առաջին բառը «Մթնում» չէ, մթնում է, ու քաղաքները «Նայիրեան» չեն, հնամայն են:

Յաջորդ էջին, քննադատը դարձեալ յիշած է նոյն երկտողը, ուր «Մթնում» մթնում մնացած է թէեւ, բայց, բարեբախտաբար, սրբազրուած է «Նայիրեան»ը, տեղը տալով ճիշդին՝ հնամայնին:

Երրորդ էջին մէջ՝ ուրիշ սխալ.

Իմ կարօտած սրտի համար ուրիշ ո՛չ մի հեփաթ չկայ...

Եղա՞ւ ստիկա:

Տողէն բառ չէ պակաս չոս ու բառ չէ մոխուած, տեղափոխուած է ընդամէնը անորոշ ածական մը՝ «ուրիշ», որ խախտած է տողին հնչական ամբողջ կառոյցը:

Մեր ընթերցողներուն ծանօթ է այս մասին կատարած Բաղիշ Յովսէփեանի խորհրդածութիւնը: Դարձեալ յիշեցնենք օրինակներէն մէկը.

«Արեւն ամբամ աւ ձմեռուայ վիշապաւայն վնեմ բուէր»: Եթէ չարենցեան վիշապաւայն բուէր վնեմ արտայայտութիւնը իրօք վնեմ է, ապա այստեղ մի բառի տեղափոխութեամբ ստացուեց էպիտետների անճահ կուտակում, եւ տողը աներուեց, լեզուն դադարեց շնչելուց, բանաստեղծութիւնը մեռաւ»:

Միշտ այսպէս եղած է ճշմարիտ յայտնութիւններուն պարագան, հրնչերանդին, նրբերանդին, շարժումին, հաւասարակշռութեան միաւորները բախտորոշ նշանակութիւն ունին անոնց համար եւ աղաւաղումները կամ տեղափոխութիւնները ուղղակի կը խախտեն ամբողջականութեան ապաւորութիւնը, շնահեղձ կ'ընեն ողին:

«Մի բառի տեղափոխութեամբ»... եւ այլն:
 Անշուտ, Հրանտ Քամրազեան քաջ գիտէ այս բոլորը:
 «Սովետական գրականութիւն» ամսագրի խմբագրիներն ալ ծանօթ են
 արուեստի օրէնքներուն:
 Մրրագրիչներն ալ անգէտ մարդիկ չեն:
 Բայց բան մը կը պակտի իրենց: Այս անգամ դուք դրէք պակասծին ա-
 նունը:

Էլը դարձնելէ առաջ, կրկնենք ամէնուն ծանօթ իրականութիւն մը, թէ
 վրեպակներու պատմութեան մէջ կան երկու տեսակներ, կայ բացայայտ վրե-
 պակը եւ կայ դաւադիրը:

Բացայայտները այնքան մեղսալից բնոյթ մը չունին, տրուած ըլլալով,
 որ կուսակէի են անոնք պարզ աչքերով անգամ, եւ սրբագրելի՝ տեղւոյն վրայ:
 Բայց միւսները, դատադիրները բոլորովին տարբեր Հանգամանք մը կը ներ-
 կայացնեն, ինչպէս է պարագան «Սովետական Հայաստան» ամսագրին (1932,
 թիւ 4) մէջ էլիա Էրենբուրգի մէկ յօդուածին մէջ յիշուած Պարենցի սա երկ-
 տողին.

... Ձի կարող լինել մեր հոգին գերի
 Սերտած խօսքերի, կոտրած մտքերի.

Պարենցի գրականութեան Հեա Հարեանցի ծանօթութիւն մը ունեցող
 մարդը անպարտան պիտի կարդայ այդ տողերը եւ տարակոյս չկայ, թէ Հոս
 մատուցուածին պէս պիտի ընկալէ ու գնահատէ ձեւակերպուած միտքը: Բայց
 տողերէն իւրաքանչիւրը տպուած է մէկ սխալով, «Հոգին» հոգի չէ մեզի ծա-
 նօթ բնագիրներուն մէջ, ոչ ալ «կոտրած»ը՝ կոտրած: Ճիշդը՝

... Ձի կարող լինել մեր ոգին գերի
 Սերտած խօսքերի, կոտրած մտքերի,—

Բանաստեղծութեան ամբողջութիւնը ուղերձուած է Փիլիստեր Հազաժ
 մարքսիստ շատերին, որուն կոտրած-թափածը քիչ չէր թէեւ Պարենցի օրե-
 բուն, բայց Պարենցի ակնարկը կոտրածին չէր վերաբերեր, կը վերաբերէր
 կասած բանի մը, գործունէութենէ դադրածին, կոտրածին, ստրկամիտ ա՛յն
 տիպարին, որ կոտրած մտքերուն աշակերտելու Հարուածային իր ուղղագիտ-
 անութեամբ հեղձուցիչ դարձուցած էր գրական մթնոլորտը:

Ի պահ դրուած անծանօթ բաներ շատ կան Հոս, բայց դո՛նէ՛ պահուին,
 Հնարաւոր է պահել ծանօթներուն ճշգրտութիւնը:

Ի պահ դրուած բանե՛ր...

Թող օգին մէջ նետուած խօսք չհամարուի «ի պահ դրուածը»: «Ծնամ-
 քով թաքնուած» դեռ ինչե՛ր կան Հոս: Ամփոփենք Պարենցի գրչին պատկա-
 նող մէկուն պատմութիւնը:

Քան տարի առաջ «յայտնաբերուած» ու թերթերու եւ Հատորներու
 մէջ բաղձաթիւ անգամ վերհրատարակուած բանաստեղծութիւն մը ունի Չա-
 րենց, Բակունցին վիճակուած ողբերգութիւնը սրտատուչ ապրումով մը խը-
 տացուցած անվերնագիր գոհարը, ա՛յն՝ որ կը սկսի «Եւ քաների համար քա
 մարմարեայ» տողով: Քերթուածը, եղբրական մթնոլորտի մը մէջ, կը
 բնութագրէ եղբրարախա գրագէտին կեանքն ու գործը, մէկը միւսին անս-
 րատ, յանկուցիչ:

Իր յայտնութենէն մինչեւ Պարենցի ծննդեան 80ամեակը, այդ բանաս-

տեղծութիւնը 31 տող կը հաշուէր, այդ թուականին (1977), «Բանքեր Նրեւանի համալսարանի» հանդէսին էջերուն լոյս ընծայուած Ռ. Իշխանեանի մէկ յօդուածին վերջաւորութեան արտադրուած օրինակէն պարզուեցաւ, որ անհրկա մինչ այդ մէկ տողով պակաս ներկայացուած է ընթերցողին, յապաւուած է 15րդ տողը, հետեւեալը.

Սիւ ցելերի վրայ մեր գոյութեան այս սիւ...
Ի՞նչ «միտք ունի» այս վերաբերումը: Բանաստեղծութեան դրուած պահուն շահ պայծառ էր մեր գոյութիւնը, որ ընթերցողէն դաղտնի կը պահուի անոր մոտայութիւնը թանձրօրէն վկայագրող զայս սեւ»ը:

Ուրիշ պատմութիւն...
Ի մասին դուրսեկուհար Զիւան Գասպարեանի, բանաստեղծ Վահագն Դաւթեան ստորագրած է համարումով դրուած ակնարկ մը՝ «Վարպետք», ուր կը կարդանք.

«Բայց գիտնմ, մի քանի օր յետոյ, երբ Լուս Աննիլըսի հայութիւնը լցնի դահլիճները, եւ Զիւան Գասպարեանը քարձրանայ քիւմ, քիւմ մաւառը, անթերի մեղեդի մ պիտի կախուի դանիմի վրայ, կախուի որպէս քալիթ ու լոյս, որպէս կարօտ ու անբռնիք, որպէս հեռաւոր հայրենիքի պատրանք, ասես յուշիւմ Տէրեանի տողերը.

Մշուշի միջից տեսիլ դիւքակամ
Յայում է ճորից Նայիրին տրտում...

Մէջբերուած հատուածէն քիչ մը առաջ, Վահագն Դաւթեան կը յիշեցնէ, որ «Եւ Զիւան Գասպարեանի մասին իմ այս ակնարկը գրում եմ մտաւորական հիւրանոցներից մէկի համարում»: Մանօթութիւնը ենթադրելի կուտայ, որ դրութիւնը առաջին անգամ երեւցած է հայրենական մէկ թերթին մէջ, որմէ անցած է «Հայրենիք» (26 Սեպտեմբեր 1981) օրաթերթին: Մինչ վերջինին մէջ հանդիպած ենք անոր եւ ճիշդ այդ պատճառով դժուար է ճշդ դել, թէ ո՞վ աղաւաղած է Տէրեանի ամէնէն չընաղ բանաստեղծութիւններէն մէկուն պատկերային համակարգը, որ պէտք է ըլլայ

Մշուշի միջից տեսիլ դիւքակամ
Բացում է կրկին Նայիրին տրտում...

Նախ կարդանք եւ ապա վերականգնենք նաեւ Սիւանի Նայիրի հռչակարար «Սուրբ Մեսրոպ»ի մէջ սպրդած վրէպ մը, Հեկտոր Ռչտունիի «Սիւանքօ» անուն մենագրութեան էջերուն (62).

Ես՝ երագային երեխայ մը վեցամեայ,
Այրենարանք ի գետին, ամենգործն գայն հեգելով
Առաջին խաչը ճակտեւ սքսիս,
Հաւատա ինձ, ո՞վ հայութիւն...
Պատկերիդ գլմ է քր հաներ եմ...

Ինչպէս զիտէ ընթերցողը, աստուածարեւել վարդապետը հայութեան համար տաղանակեցաւ, ճշնեցաւ, հայութեան համար տեսանազրեց հայկազեան այրուքները, բայց հայութիւնը գործ չունի գերթումին այս հատուածին մէջ, դիմառնուած հերոսը ի՞նչն է նորէն, մեծ սուրբը, որ յայտնագործեց իր կարողութեամբ եղած էր հայրութիւն մը.

Հաւատա՛ ինձ, ո՞վ հայրութիւն...

Դասական դէմքերու դասական կտորներուն մէջ թոյլ տրուած վրէպներու այս պղտիկ շարքին նշենք նուազ մեղաւոր վրէպ մը, այս անգամ Վարուժանի մէկ խորագիրին առիթով, երևանեան իր «Նամակամիջին» ծանօթագրութեան (էջ 314) մէջ.

«Հաւանորէն խօսքը վերաբերում է «Հայհոյութիւն» վերնագրով բանաստեղծութեան, որ սպագրուել է «Ռազմիկ»ի 1907 թ. թիւ 58ում»:

Պարզ է, որ Դ. Վարուժան «Հայհոյութիւն» խորագրով բանաստեղծութիւն չունի, ունի «Հայհոյումք» խորագրով բանաստեղծութիւն մը: Հայհոյութիւնն ու հայհոյանքը իրարու հոմանիշ բառեր են հարկաւ, բայց բոլորովին նոյն բաները չեն: Հայհոյանքին արու թափին քով ի՞նչ թոյլ կը հնչէ հայհոյութիւնը եւ որքան թիչ բան կ'ըսէ վարուժանական այդ վարժամ պոթկումի մասին: Մնաց որ, անկախաբար նրբերանգային այս տարբերութենէն, ոչ ոք իրաւունք ունի սխալ գրել բանաստեղծի մը բառը:

Վերջացնենք այս թւումն մասանցը՝ մատնանշելով մեր դասականներէն դարեր առաջ դասականացած քամբախտ Սոկրատի դիւտուն եկածը, Սոկրատի ամէնէն թեւաւոր մէկ առոյթին անհանաչելիօրէն փեռեկտուած պատկերը, «Ասվետական արուեստ»ի այս տարուան Մարտի համարին մէջ: Ամսագիրը լոյս ընծայած է 1967ին Վահրամ Փափագեանի Հետ տեղի ունեցած զրոյց մը, ուր նշանաւոր դերասանին բերանը դրուած է դերասանական արուեստին սա պայմանը.

«Այսինքն՝ դիտել մարդկանց, որսալ արտառաց ակնթարթներն ու պառները՝ զանիւս քեզ, որսվիտուռ առանց զանիւս քեզի դիտաւան չի յիմուս»:

Եթէ ընթերցողը կանգ առնէ վերջակէտէ վերջակէտ մէջքերուած այս նախադասութեան դիմաց, դժուար թէ կարենայ կուսնել անոր միտք բանին կամ պատկերացնել անիւով պայմանաւոր անիւաւոր դերասաններ՝ «առանց զանիւս քեզ դիտաւան չի յիմուս»:

Դերասանը ի՞նչ պիտի ընէ անիւը, ո՞ւր պիտի գործածէ անիւը, ի՞նչ անիւի մասին է խօսքը: Առանց յաջորդ տողին անկարելի կը դառնայ լուծում մը: Յաջորդ տողը.

«Երբ դերասանն ինքն իրեն չի ճանաչում, ճա չի կարող ճանաչել ճան իրեն նմանին, ոչ էլ կարող է ճրան վերապրել իրմի վրայ»:

Ուրեմն, հարցը ճանաչումին կը վերաբերի, դրաբար՝ ծանիրին, այսպիսին ինքնանախադասութիւն՝ ծանիր զքեզ: Մանիրը ո՞ւր, անիւը ո՞ւր:

Որքան մեծ կը թուին մեզի այս «պղտիկ բաները», իսկ մեծ բաներուն հանդէպ ի՞նչ դիւրութեամբ կը վարուին ուրիշներ:

Գրականութեան մէջ զործածուած մէն մի բառին առիթով օրինական է, կը կարծենք, որ իւրաքանչիւր ոք ցուցաբերէ գործօն նախանձանիւրութիւն մը, մինչ այդ նախանձանիւրութիւնը առաւելագոյն չափով մը կիրառելիւ կոչուած հայրենի մեր մտաւորականներէն ոմանք ո՛չ միայն այդ նուէրական դերով չեն ուզեր հանդէս դալ, այլեւ, բոլորովին աւելորդ մտահոգութիւններով կը յապաւեն պարբերութիւններ, անգամ էջեր, օր ցերեկով, նոյնիսկ դասական գործերէն:

Դիտեցէք մեր յաջորդ էջը ու հետեւեցէք, եթէ արդէն չվարժուեցաք «հակազբական» այս ստնձղութիւններուն:

ՄԱՔՐԱԶՐՈՒՄՆԵՐ

«... ՀԻՆ ՀՈՌՎՄԵԱԿԱՆ ՃԱՆԱԴԱՐԻՒՄ ՎՐԱՅ»

Սփիւռքի ընթերցողը առաջին անգամ յիսունական թուականներու կիսուն ու «Նայիրի» շաբաթաթերթին մէջ կարգաց վաճան թոթովենցի գլուխգործոցը համարուող «Կեանքը եիմ հռովմէական մանապարհի վրայ» վիպակը, զոր «Էտովան» հրատարակչութիւնը գրեթէ անմիջապէս լոյս ընծայեց հասորով:

«Նայիրի»էն երկու եւ «Էտովան» հրատարակչատունէն մէկ տարի ետք, Հայաստան հրատարակեց թոթովենցի հատոր մը՝ «Երկեր», ուր տեղ տըրուած էր նաեւ եզերաբախտ գրազէտին այդ նշանաւոր գործին:

«Հայաստան» հրատարակչութիւնը 1966ին կրկին լոյս ընծայեց «Կեանքը եիմ հռովմէական մանապարհի վրայ» գործը եւ այս անգամ առանձին հատորով, իսկ երրորդ անգամ հրատարակուեցաւ տնիկա թոթովենցեան ալ ստեղծագործութիւններու շարքին՝ «Բաց կապոյտ ծաղիկներ», 1972:

Առաջին ընթերցումով մեր սաացած, վառ տպաւորութիւններուն մղուածին տակ յաճախ ու շատերուն յանձնարարած ըլլալով հանդերձ այս գործը, ո՛չ արտասահմանեան անոր հրատարակչութիւնները վերատին կարգալու մասնաւոր պատճառ մը ներկայացած է մեզի, ոչ ալ հայաստանեան:

Ու պատահեցաւ այսպէս, —

Յու՛մը մը ուսանողներու հետ կարծիքներու փոխանակութիւն մը տեղի ունեցաւ «Կեանքը եիմ հռովմէական մանապարհի վրայ» վիպակին մասին ու տխարները առանձնացնող կարգ մը դիժերու թուածին ատեն յայտնուեցան հակահոսանքի տպաւորութիւններ: Ուսանողները կը պնդէին, օրինակ, որ Գոգո մը կայ «Ճամայարհիս» մէջ, հետու դիւղէ մը բերուած տան ծառան, բայց ժամանակ առ ժամանակ ուշիարհը «չաթալ տեղնող» Գոգո մը չկայ հան, չկան նոյնպէս անոր շաքալտնա նոպաները բուժող փորձառուներ: Ուսանողները կը յամարէին իրենց պնդումներուն վրայ, մենք կը դժուարանայինք ընդունիլ մեր յիշողութեան աղօտացումը: Անցաւ շաբաթ մը: Արդէն յայտնուած տարակարծութիւններուն արդեցութեան տակ, ուրիշ ուսանող մը մտաւ «ձիմ հռովմէական մանապարհիս» մէջ եւ, հատորը ձեռքը՝ սկսաւ տալուպանի իր ընկերներուն անսակէտը, թէ... եւայլն:

Անորարդարձանք մէկէն, որ ուսանողներուն կարգացածը երեւանեան տպագրութիւն էր եւ որովհետեւ երեւանեան տպագրութիւնները առիթ առւած են յաճախիկ դառնութեանց, փորձեցինք քով քովի բերել «Նայիրի»էն արտագրած «Էտովան» հրատարակչութեան հատորը եւ երեւանեան տպագրութիւնները եւ իսկոյն պարզուեցաւ, որ մենք եւ ուսանողները նոյն խորագրին տակ յաճախ տարբեր բաներ կարգացած էինք, տխարներ ու միջոյրտ ստեղծող կամ քունդող տարբեր էջեր, պարբերութիւններ, բառեր...: Ուրիշ խօսքով՝ Երեւանի հրատարակչները մկրատումներով ներկայացուցած էին նաեւ թոթովենցը, ինչպէս ըրած էին Կ. Ջարեանի ստիթով, Ե. Շահնուրի, Յ. Օշականի, Լեւոն Զ. Սիւրմէլեանի եւ այլոց առիթներով: Ո՛վ կրնար սակայն

մտքէն անցընել դուզափարական կամ քաղաքական «մտանգաւոր» թեքումնե-
րէ զերծ թոթովենցի այս գործին զլիսուն պատահածը, ու մտածել, որ ընտա-
նեկան, կենցաղային ու հովուերգական հէնքի մը վրայ կառուցուած երկի մը
հանդէպ եւս կրնայ ալեկոծիլ մարտնչող անհանդուրժողութիւնը: Արդարեւ,
զաղափարական մոլեռանդները չեն այս անգամ գրականութիւնը կեղեքող-
ները, այլ՝ իրենց դարը վաղուց ապրած ծայրայեղութիւններու ներկայացու-
ցիչներ, միջնադարեան խաւարներէն յանկարծօրէն մեր օրերուն մէջ յայտ-
նուած տեսակ մը տիրացուներ, որոնք կը դժուարանան սպիտակ թուղթին
վրայ հանդուրժել ուռած ստինք մը, բայց փէշ մը, աչքերը չաթալ տեսնող
տիպար մը կամ «յիսուն զիրեմ մտի համար» իր կորանքը այնքան խոր մարդ-
կայնութեամբ յայտարարող աչա մը:

Ազնեցուցիչը այն է տակաւին, որ ստալինեան կիսամայրի ատեն
(1957) «Հռովմէական ցամաքարի»ը խմբադրած առաջին մաքրակրօնին պէս
վարուած են յաջորդ խմբագիրները եւս, ո՛չ երկրորդը փորձ ըրած է մասամբ
վերականգնել ինն տարի առաջ ստալինին թող տուած խախտումները, ոչ ալ
երրորդը որեւէ ճիգ րած է սրբազրելու իր նախորդներուն «սրբազրութիւն-
ները»:

Ուրիշ պատմութիւն:

Թոթովենցի երեւանեան Հրատարակութիւններուն առթած դառնու-
թեանց ազնեցութեան տակ էինք տակաւին, երբ մեր ձեռքը անցաւ Հրաչ
Զարդարեանի հայաստանեան հատորը, ուր մէկտեղուած էին «Մեր կեանքը»,
վերլուծական շորս գրութիւններ, եւ հատուածներ՝ «Ժամանակ եւ խորհուրդ»
իւր» անուն գործէն: Գիտէինք, որ «Մեր կեանքը» վէպին մէջ «Հռով-
մէական ցամաքարի»ին պատկերացուցածէն հարիւր անգամ աւելի յանդուզն
պատկերներ կային, անկողինի տեսարաններ: Զարդարեանի հատորը կազմ-
ող նոր մըն էր սակայն, Ալեքսանդր Թոփչեան ու թէեւ կը դժուարանայինք
բարոյախօս մը տեսնել նաեւ իր մէջ, բայց կասկածի որդը մտած էր մեր մէջ
ու փորձեցինք ստուգում մը կատարել:

Նոյն պատմութիւնը:

Յապաւում՝ ամբողջական հատուածներու, կամայական յարդարանք-
ներ հոս ու հոն, անուշադրութեան հետեւանքով բնագրին մէջ չես դիտեր
ուրկէ՛ ինկած ու նովին բանիւ մտածումները տակնուվրայ ընող բառեր ու
անփութութեան նոյն աղօսներէն առաջացած լեզուական անհարկի համակե-
ցութիւն մը:

Մանրամասնութիւնները՝ յաջորդ թիւերով:



ՅԱՊԱՒՈՒԱԾ ՄԱՍԵՐԸ՝

Ստորև կը ներկայացնենք զնեանցը եին ել-
նավաճկան հանապարհի վրայ» գրպակին մէջ
կատարուած խմբագրական միջամտութիւններուն
առաջին քառիւնը, Հայաստանի երեք հրատարա-
կութիւններէն բաղկանող շքանշան հատուած-
ներն ու պարբերութիւնները, մնացեալը վերա-
պահելով մեր յաջորդ թիւին:

Յիշեցնենք, որ նշուած են միայն ինքոյր ա-
ռարկայ գործին յետադիման առաջին տպա-
գրութեան (1987) էջաթիւերը, որոնց վրայ կատար-
ուած են յայտարարութիւնները:

**ՀԱՏՈՒԱԾՆԵՐ,
ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ,
ՏՈՂԵՐ**

Յիշում եմ մօրս ստինքները, սպիտակ, մաքրամաքուր եւ բուրումնա-
ւէտ, թուխ եւ ժիւր պտուկներով: Այլ ստինքների հանոյքը ըմբռնանէ էին
մի քանի տղամարդ — ես եւ եղբայրներս:

(էջ 27)

Մայր, յիշում եմ քո խարտեաչ աչքերի պայրոյթը, երբ նոր բուսած
սուրբ ստամներով ցաւացնում էինք ստինքներիդ պտուկները:

Նստել եմ շատ զրկեք, բայց ոչ մի դիրկ, մայր, չի օրօրել ինձ ախպի-
սի Հեշտանքով, ինչպէս քո դրկի քնարը:

(էջ 27)

— Պանուճ-մանուճ չեմ ճանչնար, դիմ՝ դուրս, — հրամայեց, — հօ-
րաքոյրս:

(էջ 38)

Ճարպոտ կանանց ծծերը, կատաղած փոքրիկ շների գլուխների նման
սկսեցին վեր-վար ելնել եւ իջնել:

(էջ 38)

Պատահում էր (երբ կինը գիւղումն էր լինում), որ Գույսն սկսում էր
առանց պատճառի ջղայնանալ — գոռում էր, ամաններ էր կտրատում, կո-
վին քացի էր տալիս եւայլն: Հայրս այդ ժամանակները կանչում էր մօրս եւ
նրա հետ մի փոքրիկ խօսակցութիւն էր ունենում այդ մասին:

— Մարգրիտ, — ասում էր Հայրս, — էլ դու մարդը նորէն կատողեր է, աչ-
քերը չաթալ կը տեսնեն կոր, դեղ ուղարկէ՛, երթայ, հանգստանայ, դայ:

Մայրս համաձայնում էր հօրս հետ եւ յաջորդ օրը Գոգոն նստում էր էջը եւ գնում գիւղ մի քանի օրով:

Եւ վերադառնում էր Գոգոն աչքերի բուրբոսին այլ արտայայտութիւններով, մեղմացած, ժպտուն, բարեացակամ. եթէ ամբողջ գիշերը լոյսը վառ պահէինք՝ չէր նեղանայ. մինչեւ անգամ փոքրիկներէս վերցնում էր իր ուտերի վրայ եւ ման ածում:

Այն ժամանակ ես ոչինչ չէի հասկանում. այժմ եմ հասկանում նրա տըրամադրութեան յեղաշրջման պատճառը:

Երբ Գոգոն նորից էր սկսում ջղայնանալ, կատաղել եւ մեղ տուած ապտակները շատացնել՝ մենք՝ փոքրերս անգամ, գնում, խնդրում էինք մայրիկից.

— Գոգոն գեղ դրկեցէ՛ք, ինչ կ'ըլլի, նորէն սկսեր է մեղ ծեծել:

Մայրս քթի տակ մեղմօրէն ժպտում էր եւ, այս անգամ, ատանց հօրս թելագրանքին, Գոգոյին ուղարկում էր գիւղը: Այդ քանի համար մենք շահագանց ուրախանում էինք. նախ՝ մի քանի օր բացակայ էր լինում տնից, եւ երկրորդ՝ գալուց յետոյ էլ անսահման բարի էր լինում:

Անցնում էր մի առ ժամանակ, նորից Գոգոյի աչքերն սկսում էին շաթալ տեսնել. սրտնեղութիւն անսահման.

— Մայրիկ, դրկեցէ՛ք Գոգոն տուն...

— Շատ գործ ունի, օղո՛ւլ, ամէն ատեն գեղ երթա՞լ կ'ըլլի:

— Ի՞նչ կ'ըլլի, դրկէ՛...

Եւ Գոգոն նորից էր գնում եւ վերադառնում բարի:

(Էջ 41)

Յիշում եմ նրանց եւ հասկանում իսկական սէրը:

(Էջ 74)

Երբ Իսկուհին երիտասարդ էր եւ դեռեւս արուն չէր կրծում նրա սիրտը՝ ոչ մի բողբօ չբարձրացրեց:

(Էջ 88)

Յաջորդ օրը Ալեք աղան կոմիւր գիւղ էր տանում, հանգստացնել էր տալիս եւ ետ բերում:

(Էջ 89)

Ատում էին, որ Ծանօթներից մէկին ասել էր.

«Յիսուն գիրեմ մտի համար քաղաքի մէջ խայտառակ եղայ»:

(Էջ 95)

Հենց որ մի սուրբ հոգի առնող դուրս էր գալիս տնից՝ գնալու եւ խանութը բաց անելու, բազմութիւնը հաւաքում էր շուրջը եւ, Ծափ տալով, հռհռալով, ծաղրում էր ու թքում:

(Էջ 113)

Միսա՛ք, արդեօք ոչ մի կապոյտի վրայ չեն յատում քո աչքերը:

(Էջ 126)

Սանիէն առաջին աղջիկն էր, ոչի մարմնի ամենափափուկ տեղերին դըպիլ էին իմ մատները, հաճոյք էի վրացել եւ կարծում էի, որ իսկական կինը պէտք է քթից խօսի, որպէսզի ինձ հաճոյք պատճառի:

(Էջ 127)

Իսկ այդ մարմինն ինչքան մասեր ունէր...

Ամէն անգամ ես նրա մարմնի մէջ գտնում էի ինձ համար բոլորովին անծանօթ մի վայր, աւելի եւ աւելի փափուկ եւ սպիտակ, աւելի սարսուռ եւ հոտուէտ:

Նման հեռուոր եւ անծանօթ երկրի, նման մթին եւ թաւշեայ թաւուտների՝ ես ամէն վայրկեան գտնում էի մի նոր եւ նորագոյն բարձունք կամ խորութիւն, մի նոր եւ անսովոր սարսուռ: Երբ մի նոր խորշ կամ մի նոր ծալք, կամ մի բարձունք էի գտնում, ինձ թւում էր, որ է՛լ նորը չկայ, հասել եւ տիրել եմ արդէն անծանօթ եւ զղլխիչ երկրամասի բոլոր կէտերին:

Ոչ, էլի նոր ծալքեր, էլի մի փոքրիկ ուռուցք, էլի մի թաւշեայ, սպիտակ, փոքրիկ, բայց անհո՛ւն մի տարածութիւն...

Գծեր, որ վազում են, կլորութիւններ, որ ալիքաւորում են եւ բարձրանում. հետեւում եմ մի դծի — գնում է, դառնում, ոլորում, թաւալում եւ յանկարծ անէանում մի սպիտակ եւ յղկուած մարմարեայ զաշտում:

Գնում եմ անծանօթից աւելի եւ աւելի անծանօթը, ահա պէտք է հասնե՞մ...

Ինձ թւում է, որ ահա պէտք է պարզեմ ամբողջ մթին անծանօթը... Պիտի լինի առուտ, պիտի հոսի արեղակի կաթը աշխարհի վրայ, բայց Սա- նիէն չկայ, վաղել է պարտէզի կեռասնինիների տակ, ծիծաղում է...

Պոկել էի առասպելական ծաղիկի հազարաւոր թերթերը, բայց դեռեւս պէտք է պոկէի Հազար հազարաւոր թերթեր՝ հասնելու համար ծաղիկի հո- դու հողուն:

(Էջ 127)

Կարծես արեւն էր ճշում:

(Էջ 130)

Երբ տաքանում էինք՝ սկսում էինք աղաղակել.
— Վուրս՛ան իթլերէ...
— Կեազուրլար կելտիլեր...

(Էջ 144)

Պիպիրի համար փոխանակ ստելու ձկնու է», ոտում էին ատանիկ է»: Մեր բառարանում տանկընալ կամ քրքանալ, կը նշանակէր՝ զայրու- նալ, վայրենանալ:

— Համբերանքս հասաւ, տանկըցայ, — ասում էինք:

(Էջ 144)

Երբ կին ունենար՝ կնոջն էին հայհոյում, իսկ եթէ մեծ աղջիկ ունե- նար՝ աղջկան էին հայհոյում, մոռանալով բոլոր միաներին:

(Էջ 166)

Կտուր բարձրանալիս՝ աղջիկը տեսաւ հորը:

(Էջ 169)

Հա՛յր, դու գրկում ես ինձ մահուան ջերմաջիւղի քո թեւերով եւ քամին երգում է:

(Էջ 171)

ԿՈՐՐՈՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՆԸ Վ. ԹՈԹՈՎԵՆՅԻ ՄԱՍԻՆ

Հետագայ հոտուածը, որ օրին շարքերդային Հայաստանի մէջ լոյս տեսած Հարուածային գրութեան մը վերջին մասն է, արտագրած ենք Պոլսոյ «Ազդարար»-էն, 30 Ապրիլ 1884:

Յամենայնի սահմաններէն գրութիւն մը, որուն մէջ տարբերակը զեռ վերջէն ցաւ ի սիրտ ուշադրութեան յանձնեց Հայրենի մատուցական Սերգէյ Աթարեակեան, Անդրապատանէն ետք Բակուցի գրականութիւնը ոչ-գրական անկիւններէ զտասփետու գրութիւններէ մէկուն, Աթարեակեան Վոլինական ցրակամութիւնն ամագրին մէջ կ'ըզրակացնէր:

«Գրական երկի հոգեբանական ճիշտութիւնների անտեսում առուժով առ արտասոց պահանջ է, հակադրական երևոյթ»:

Հաստատուած ամբողջութեամբ կը բնութագրէ նաև Քոթովնցի հանդէպ ցոյց տրուած վերաբերումը, թէ՛ երկէն անարեկման փառաբ, թէ՛ Քոյլ տրուած այսօրուան մաքրաշուքը, երկուքն ալ՝ «հակադրական երևոյթ»:

Իր Հայեացքը նա դարձնում է ինտիմիտուալիտա բանաստեղծ Մխաթ Մեծարենցի կողմը. «Երբ միտում եմ այս աշխարհում, մեծ պատանի, գրկում եմ քո երգերը, եւ սեւա արեւը, քո երգած արեւը, սուգում է իմ ցուրտ հոգու մէջ կաթիլ առ կաթիլ»:

Ինչպիսի խեղճութիւն, մեր արեւալուստ մեծ օրերում աշխարհից սփոփանք փնտռել Մեծարենցի վախա տողերի մէջ, ինչպիսի ծաղր մեր Խորհրդային գրականութեան, մեր Խորհրդային գրողի մեծ կոյման հասցէն է: «ՀԱՅԱՎՄԵՒԱԿԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒՄ» Հեղինակին բերելու-հասցրել է ճղճիմ ինտիմիտուալիտի ճահիճը. «կեանքը» այդ ճահճում ի հարկէ ցուրտ է եւ անճուկ. այնտեղից ի հարկէ չի կարելի տեսնել լայն հորիզոնները:

Սակայն առաւել եւս անհանդուրժելի եւ վնասակար է Քոթովնցի դրժի այն մասը, որը նուիրուած է Համաշխարհային պատերազմի շրջանում առաջ եկած ազգամիջեան յարաբերութիւնների նկարագրութեանը:

Վերջերս, ընկ. Պանջեանն ասում էր, որ «անհրաժեշտ է, որ մեր գրականութիւնը համալինք աշխատաւորական ձգտումներով»: Քոթովնցի այս գիրքը ո՛չ միայն չի ծառայում մեր գրականութեան այդ հիմնական ինդքին, այլևս դէժ է գնում նրան, արտայայտութիւն հանդիսանալով նացիոնալիզմի ազդեցութեանը մեր գրականութեան մէջ, իր ամբողջութեամբ վերջրած լինելով վնասակար մի գիրք մեր Խորհրդային ընթերցողի համար, մի նմոյշ է, երբ ցոյց է տալիս, թէ ո՛ւր կարող է տանել զրոյին կարուածութիւնը սոցիալիստական մղումներից: Քոթովնց այս գրքով ընթացել է սխալ ճանապարհով: Ինչքան լուս ըմբռնի ան իր այս գրքով բռնած ճանապարհի սխալ, Խորհրդային գրողի համար կործանարար լինելը, ինչքան աւելի մօտենայ մեր արտեային, ինչքան ջանք, զործ դնի տիրապետելու Մարքսի, Լենինի ուսմունքին, այնքան աւելի շուտ կը կարողանայ վերջնականապէս եւ ամբողջովին թօթափել նացիոնալիզմի հոգեբանական կապանքը, որ դեռ ծանրանում է նրա վրայ:

Այն փաստը, որ Քոթովնցի գիրքը լոյս է ընծայել մեր Պետ. Հրատարակչութիւնը, վկայում է Պետարտի Համապատասխան աշխատողների քաղաքական դատարանի ծայրայեղ բթացման մասին, վկայում է այն մասին, որ նրանք չեն կարողանում տեսնել թշնամու ազդեցութեան նոյնիսկ ոչ այնքան քողարկուած արտայայտութիւնները, որոնք կան վերոյիշեալ գրքում: Ինչ խօսք, որ այս փաստից լուրջ կարակացութիւններ են բխում, ինչպէս մեր Պետական Հրատարակչութեան, նոյնպէս եւ Խորհրդային Գրողների Միութեան համար:



ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏՇԵԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առի՛կ Հինգ առաջի առաջ, յարգ ճր թատերափոխները բեմադրելու համար, Սփիւղքի հետ Մշակութային կապի կոմիտեի Հայաստան հրահրեց զերասան ու զերուսոյց Վարուժան Խոջեանը:

Բեմի թէ սեմնակազմի լայն Օտարաօրուքիւններով օժտուած մթնոլորտի մը մէջ, երբ-տասարդ արուեստագէտը լծուեցաւ աշխատանքի եւ յաջողարար ներկայացուց՝

Երեւանի Գրամատիկական Թատրոնին մէջ՝ նիւ Սայմոնի «Ջրօսայցում խտրողիկեջ», Լինինականի Մուսսոսի սեռուան Թատրոնին մէջ՝ նիւ Սայմոնի «Կոմսո գոյգը»:

Վ. Խաջեանի այս բեմադրութիւնները մինչեւ այսօր մաս կը կազմեն Երեւանի Թատերական յայտագիրներուն եւ պարբերարար կը ներկայացուին Թատերասեր Հասարակութեան:



Հայաստանի մէջ ունեցած Վարուժան Խոջեանի Թատերական զործունէութեան պատկը հանդիսացած է սակայն Սովետականի անուան Թատրոնին մէջ այս առաջի իր բեմադրած իտալերտ Ալդիբիսի Վալիքը, որուն առաջին երեք նայթները պրիմիերան՝ ինչպէս կ'ըսեն հոն, անդի ունեցած են 20, 25 եւ 31 Յունիսին, պաշտօնական հիւրերու եւ Թատերասեր շնորանիին համար:

Համալիրահային հռչակ վայելող Ալդիբիսի այս փիեմին կերպարները անձնուորելու համար՝ Վ. Խաջեան հայրենի Թատերական ուսերէն բնորած է Մետաքիտ Սիմոնեան (Մարքա), Ետրա Ամիրեան (ձորձ), Ալիք Խաչատրեան (նիք) եւ Լուսինէ կերակոսեան (Հանի):

Հայաստանի մէջ իր արձանագրած բացառիկ յաջողութեան համար, Յուլիո Լէն, Վերնիսիա Վալիքը զրկուեցաւ Ֆիե, հերախաղերու: Ըստ նախօրօջ կազմուած յայտագրին, անիկա պէտք է ներկայացուէր երկու անգամ, բայց Ռեքանիոյ մայրաքաղաքին մէջ այնքան մեծ է կզած Խաջեանի այս բեմադրութեան գտած յաջողութիւնը, որ ժողովուրդին բունն վափաքին ընդառաջելով՝ հիւրերկալ մարմինը կրկնապատկած է ներկայացուցումներուն թիւը, հակառակ անոր, որ Վերնիսիա Վալիքը օտար Հանդիսատեսներուն կը ներկայացուէր Հայերէնով:

Այս վերջին բեմադրութեան առիթով, Հայաստանի պետութիւնը յատուկ զեահասանք արձանագրած է Վ. Խաջեանի սեռուին:

Վ. Խաջեան Յուլիոի կիսուն վերադարձաւ Պէյրուք եւ ծրագրած է մեր բեմերուն վրայ շտրուեակիլ Թատերական իր զործունէութիւնը:



Նիք (Ա. Խաչատրեան) եւ Մարքա (Մետաքիտ Սիմոնեան)



ՍԵՒՍՄԵՐԹ ԱՎԱՒԵՄԱԿԱՆԸ

ԼԷՈՓՈՒՏ ՍԵՏԱՐ ՍԵՆԿՈՐ

Իր անզամենբը միայն Ֆրանսացի եւ միայն ազամարդոց շարքերէն ընտրելու իր սկզբունքին սամբող 350 տարէ հաստարիմ մնալէ ետք, կործ ժամանակի մը մէջ, Նրանտակոն Ակադեմիան կա-

տարեց բազմաթիւ զօրինացանցութիւններ», որ ըրոնց մէջ յատկանշական են անմահներու շարքին ընդունուած հետեւեալ երեք դէմքերը. — Ամերիկացի մը՝ Ժիւլիէն Կրին, Կին մը՝ Մարկըրիթ Ծուրոլմար, Սեւամորթ մը՝ Լէոփոյտ Սետար Սենկոր:

Բնական է, այս խումբին մէջ չեն կրնար զատուիլ օտար միւս սիւղեմականները, ինչպէ՛ս՝ Հանրի Փրուայա, Ժոզէֆ Քէտլէր եւ Իօսէն Խոնեթօ, որոնք ըլլալով, որ ասոնք զարմած էին Ֆրանսական քաղաքացի:

Զարմանալի է վերջին ակադեմականին՝ Լէոփոյտ Սետար Սենկորի ճակատադէրը:

Սենկորի կորուսած գիւղի մը մէկ ազգատ ընտանիքին զաւակը՝ Սենկոր, կը յաճախէ մի-

սեռներբու զպրօջը ու վարժարանէ վարժարան կատարած ուսումներէն ետք, կը հասնի մինչեւ Փարիզի էքսլ Նորմալ Անվէրիտէօր, ուր զասընկեր կ'ունենայ Նրանտայի ազադայ նախաջան

Ժորժ Փոմփիտուի պէս քաղաքական դէմքեր ու մեծանուն փրօֆեսօրներ:

Երբ Սենկոր անկախութիւն ստացաւ, Ժողովուրդին բուռն փափաքին ընդատալելով՝ Սենկոր ընդունեց երկրին նախազանութիւնը: Սակայն քաղաքական ապարէզէն աւելի, զինք շահագրգռող մարդը եղաւ բանաստեղծութիւնը եւ Սենկոր, նախազանական պայտօնը ուրիշին յանձնելով՝ քաղաքացաւ իր աշտարակը, երկրագործութեամբ եւ քառաստեղծութեամբ պարապելու համար:

— Եիմծի համար էակամը քանտաստեղծու լիւնն է՞, — էլ յոտատվանէ նախկին նախազանը:

Իր մորթին զոյնով հպարտ՝ Ֆրանսական աւկաղեմիային նոր անմահը, իր խօսքով թէ գործով, միւս հետապնդած է տարբերութեան կրատուները: «Տարբերութեան իրաւունքը, տես միակ նստրան, — հ'ըսէ ան տեղ մը: — Տարբերութեան իրաւունքը երբեք չի քաջալիքեր ցեղային խտրակամութիւնները, այլ կը միտի փոխադարձ հասկացողութեան, որովհետեւ ժողովուրդները եւ մշակոյթները զիրար կ'ամբողջացնեն»:

ՈՒՒԼԵԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ

ՎԵՐՁԻՆ ԳՈՐԾԸ՝

«ՇՆՈՒՆՆԵՐ»

Գալեֆօրմիոյ «Քրիէթիւ արթ» հրատարակութիւնը յայտնեց Ու. Սարոյեանի յետ մահու մէկ դարձը՝ «ՇՆՈՒՆՈՒՆԻՐ», որ լարունակութիւնն է ողջուցը հրատարակած գրադէպին «Մահազոյն» հատորին:

Ըստ քննադատներու կարծիքին, «ՇՆՈՒՆՈՒՆԻՐ»-ը կը գանուի «Մահազոյն»-ու մահաբազակին, որ մեծ հետաքրքրութիւն ստեղծած էր միջազգային զրական շրջանակներուն մաս:

«ՇՆՈՒՆՈՒՆԻՐ»-էն անմիջապէս ետք գրուած «Մահազոյն»-ուն մէջ, Սարոյեան փառքը կը հիւսնէ ծննդեան զազափարին ու մայրութեան:

Յայտնուած մտածումներուն թարծութեան եւ ոճին հրապուրելիքը հաշուի առնելով՝ զրական շրջանակները կը խորհին, որ Սարոյեանի այս գործը եւս կ'ոչուած է վայելելու մեծ ժողովրդականութիւն: